



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱԿ-Ի
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԵՎ ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2018



Սույն զեկույցը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել կարիքավոր և խոցելի երեխաներին: ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել՝ www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

 [Facebook.com/UNICEFArmenia](https://www.facebook.com/UNICEFArmenia)

 [Instagram.com/UNICEF_Armenia](https://www.instagram.com/UNICEF_Armenia)

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Մեթոդաբանություն	7
Զեկույցում օգտագործված հապավումները	9
Ա. Ուշադրության արժանի հիմնական ոլորտները	10
1. Համապարփակ քաղաքականությունը և ռազմավարությունը	10
2. Համակարգումը	11
3. Ռեսուրսների բաշխումը	14
4. Անկախ մշտադիտարկումը	17
Բ. Ընդհանուր սկզբունքները	
(Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 12-րդ հոդվածները)	19
1. Խտրականության արգելքը	20
2. Երեխայի լավագույն շահը	30
3. Երեխայի լաված լինելու իրավունքը	43
Գ. Բռնությունը երեխայի նկատմամբ	
(Կոնվենցիայի 19-րդ հոդված, 37-րդ հոդվածի	
(ա) ենթակետ և 39-րդ հոդված)	51
1. Վատ վերաբերմունքը և ֆիզիկական պատիժը	51
2. Բռնության բոլոր ձևերից զերծ լինելու՝ երեխայի իրավունքը	58
3. Վնասակար պրակտիկայի դրսևորումները	61
Դ. Ընտանեկան միջավայրը և այլընտրանքային խնամքը	
(Կոնվենցիայի 5-րդ, 18-րդ (1-ին և 2-րդ կետեր), 9-11-րդ,	
19-21-րդ, 25-րդ, 27-րդ (4-րդ կետ) և 39-րդ հոդվածները)	63
1. Ընտանեկան միջավայրը և ընտանեկան միջավայրից	
զրկված երեխաները	63
2. Որդեգրումը	74
Ե. Հաշմանդամությունը, տարրական առողջությունը և բարեկեցությունը	
(Կոնվենցիայի 6-րդ, 18-րդ (3-րդ կետ), 23-րդ,	
24-րդ, 26-րդ, 27-րդ (1-3 կետեր) հոդվածները)	79
1. Հաշմանդամություն ունեցող երեխաները	80
2. Առողջությունը և առողջապահական ծառայությունները	92
3. Կենսամակարդակը	106

Զ. Կրթությունը, ժամանցը և մշակութային միջոցառումները	
(Կոնվենցիայի 28-րդ, 29-րդ և 31-րդ հոդվածները).....	108
1. Կրթությունը, ներառյալ՝ մասնագիտական վերապատրաստումը և ուղղորդումը	109
Է. Հատուկ պաշտպանության այլ միջոցները	
(Կոնվենցիայի 22-րդ, 30-րդ, 38-րդ 39-րդ, 40-րդ, 37-րդ (բ)-(դ), 32-36 հոդվածներ).....	121
1. Չուղեկցվող, ապաստան հայցող և փախստական երեխաները	121
2. Տնտեսական շահագործումը, ներառյալ՝ մանկական աշխատանքը	133
3. Անչափահասների գործերով արդարադատության իրականացումը	143
Ը. Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պողոնագրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն	
(հոդվածներ 3, 4, կետ 2, 3; 5; 6 և 7)	161
1. Ներպետական քրեաիրավական կարգավորումների համա- պատասխանությունը Արձանագրությանը և տվյալների հավա- քագրման միասնական համակարգի ստեղծումը.....	161
2. Արտատարածքային իրավագործություն և հանձնում	166
3. Համակարգում և գնահատում	167
4. Իրազեկության բարձրացում ու տարածում	168
5. Կիրառված միջոցները Արձանագրությամբ սահմանված հանցագործությունները կանխարգելելու համար.....	169
6. Երեխա զոհերին պաշտպանելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները.....	171
7. Զոհերի վերականգնում և վերաինտեգրում	172
Թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրություն	174
1. Կանխարգելում	175
2. Արգելք և այլ հարակից հարցեր.....	177

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1993 թվականին վավերացնելով Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ նաև Կոնվենցիա)¹ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն ստանձնեց համապատասխանեցնելու իր ներպետական օրենքները և պրակտիկան միջազգային այս փաստաթղթի պահանջներին: Հետագայում Կոնվենցիան լրացվեց երկու կից արձանագրություններով՝ 1) Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը, ինչպես նաև 2) Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրությունը: Դրանք Կոնվենցիայի բաղկացուցիչ մասեր են և վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից: Հետևաբար, դրանց կատարումը նույնպես մտնում է Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակների մեջ:

Կոնվենցիայի և կից երկու արձանագրությունների՝ անդամ պետությունների կողմից կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ նաև Կոմիտե)¹: Վերջինս 18 փորձագետներից բաղկացած մարմին է

և վերահսկողություն հիմնականում իրականացնում է մշտադիտարկման միջոցով: Բոլոր անդամ պետությունները պարտավոր են պարբերաբար ներկայացնել զեկույցներ Կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման մասին: Անդամ պետությունները պարտավոր են առաջին զեկույցը ներկայացնել Կոնվենցիային միանալուց հետո երկու տարվա ընթացքում, իսկ հաջորդ պարբերական զեկույցները՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ: Զեկույցները ուսումնասիրելուց հետո Կոմիտեն տվյալ պետությանը ներկայացնում է «Ամփոփիչ դիտարկումներ» կոնկրետ խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը:

Հայաստանի Հանրապետությունն առաջին զեկույցը ներկայացրել է 1997 թվականի փետրվարին, որի վերաբերյալ Կոմիտեն իր դիտարկումները կազմել է 2000 թվականին: Այնուհետև, ՀՀ կառավարությունը 2003 թվականին ներկայացրել է երկրորդ պարբերական զեկույցը, իսկ 2011 թվականին՝ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցները 2001-2009 թվականների համար՝ Կոնվենցիայի և կից երկու արձանագրությունների կատարման վերաբերյալ: 2013թ. մայիսի 27-ից հունիսի 14-ը անցկացված 67-րդ նիստում Կոմիտեն հաս-

1 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.ohchr.org/EN/HRBodies/CRC/Pages/CRCIndex.aspx>:

տատել է իր ամփոփիչ դիտարկումները Կոնվենցիայի դրույթների և կից երկու արձանագրությունների վերաբերյալ, որոնցում անդրադարձել է ընդարձակ հարցերի և դրանց վերաբերյալ կատարել է դիտարկումներ և ներկայացրել առաջարկություններ: Կոմիտեն հրավիրել է Հայաստանի Հանրապետությանը ներկայացնել իր հաջորդ՝ հինգերորդ և վեցերորդ համատեղ զեկույցը մինչև 2019 թվականի հունվարի 22-ը և դրանում ներկայացնել տեղեկություններ 2013 թվականի Ամփոփիչ դիտարկումներում նշված առաջարկությունների կատարման վերաբերյալ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Այս կարևոր առաքելության արդյունավետ իրականացման համար Պաշտ-

պանի աշխատակազմում ստեղծվել է Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: Սույն զեկույցը կազմվել է Պաշտպանի այդ գործառույթի շրջանակներում և կազմում է մշտադիտարկման ընթացքի կարևոր բաղադրիչը: Զեկույցի նպատակն է ներկայացնել, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում կատարել Կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Ուստի, զեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակներում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ դիտարկումները, վեր են հանվել դրանցում ներկայացված առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են դիտարկումներ, Կոնվենցիայի մարմինների առջև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ Պաշպանի գնահատականները և առաջարկությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը կազմվել է Կոմիտեի ամփոփիչ դիտարկումների և ՀՀ կառավարության զեկույցների ձևաչափով: Այսինքն՝ զեկույցը կազմվել է ըստ Կոնվենցիայի մի խումբ հոդվածներ ընդգրկող թեմատիկ ուղղությունների, այլ ոչ թե ըստ Կոնվենցիայի առանձին հոդվածների: Նպատակն է առավել դյուրին դարձնել զեկույցի ուսումնասիրությունը, դրանում ներառված տվյալների և վերլուծությունների համադրումը Կոմիտեի ամփոփիչ դիտարկումների և ՀՀ կառավարության զեկույցների, այդ թվում նաև այլ կազմակերպությունների կողմից ներկայացված այլընտրանքային զեկույցների: Զեկույցի նման ձևաչափը սահմանված է Կոմիտեի կողմից, որն այլընտրանքային զեկույցների ներկայացման կոնկրետ ձևաչափեր է առաջարկում, այդ թվում նաև ձևաչափի սահմանափակումներ՝ զուտ գործնական նպատակներով: Այդուհանդերձ, զեկույցը չի կարելի համարել այլընտրանքային, քանի որ առաջին հերթին, բավական ծավալուն է, մինչդեռ Կոմիտեն պահանջում է այլընտրանքային զեկույցները ներկայացնել մոտ երեսուն էջի շրջանակներում: Մյուս կողմից, զեկույցի բովանդակությունը կազմվել է այնպես, որ համապատասխանի այլընտրանքային զեկույցների նպատակին: Այդ

իմաստով, զեկույցը բաժանված է այն նույն բաժինների, ինչ առկա են Կոմիտեի ամփոփիչ դիտարկումներում և կառավարության զեկույցներում: Յուրաքանչյուր բաժնի կամ ենթաբաժնի շրջանակներում սկզբում ներկայացվում է, թե Կոմիտեն տվյալ թեմայի վերաբերյալ ինչ կարծիք կամ գնահատական է հնչեցրել և ինչ առաջարկություն է արել (համապատասխան հղումով): Դրան հետևում է վերլուծություն կատարված աշխատանքների, ձեռնարկված միջոցների մասին, իսկ դրանից հետո՝ գնահատական, թե արդյոք Կոմիտեի տվյալ առաջարկը կատարվել է Հայաստանի Հանրապետության կողմից, թե ոչ, որից հետո յուրաքանչյուր ենթաբաժնի կամ մի քանի ենթաբաժինների վերջում ներկայացվում է առաջարկությունների ցանկ:

Զեկույցը կազմելիս նախևառաջ ուսումնասիրվել են Կոմիտեի՝ Կոնվենցիայի և կից արձանագրությունների առումով երկու ամփոփիչ դիտարկումները, ՀՀ կառավարության նախկին զեկույցները, ոլորտի իրավասու պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների զեկույցները, այդ թվում նաև այլընտրանքային զեկույցներ: Օրինակ՝ ուսումնասիրվել են «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության Երեխայի պաշտպանության ինդեքսը, ՅՈՒՆԻՍԵՖԻ 2016 թվականի տարե-

կան զեկույցը², Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի զեկույցը ապաստան հայցող, փախստական և տեղահանված երեխաների վիճակի մասին³, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության վերլուծությունը ՀՀ-ում երեխայի իրավունքների մասին⁴, և այլ կազմակերպությունների զեկույցներ և ուսումնասիրություններ:

Վերը շարադրվածից բացի, անցկացվել են հարցազրույցներ ոլորտի անկախ փորձագետների, երեխաների իրավունքների ոլորտի պետական ու համայնքային մարմինների աշխատակիցների, ոչ պետական

մարմինների աշխատակիցների, փաստաբանների, դատավորների հետ: Ուսումնասիրվել են բազմաթիվ դատական ակտեր, խնամակալության ու հոգաբարձության մարմինների եզրակացություններ ու համայնքային մարմինների կողմից ընդունված վարչական ակտեր: Առանձին ուշադրություն է դարձվել ՋԼՄ-ների հաղորդումներին, սոցիալական ցանցերում ծավալվող քննարկումներին: Պետական իրավասու մարմիններ ուղարկված հարցումների արդյունքում ստացվել են բազմաթիվ տվյալներ, որոնք նույնպես ներառվել են սույն զեկույցում:

2 Երեխայի պաշտպանության ինդեքս: Հայաստան 2016 թվական: Հասանելի է հետևյալ հղումով. <http://mankutyun.am/resursview/18/> ՅՈՒՆԻՍԵՖԻ 2016 թվականի տարեկան զեկույցը հասանելի է հետևյալ հղումով. https://www.unicef.org/about/annualreport/files/Armenia_2016_COAR.pdf:

3 Assessment of the situation of asylum, seeking, refugee and displaced children in Armenia. UNHCR. Report. December 2015 – April 2016. © United Nations Children Fund. Yerevan 2016. Հասանելի է հետևյալ հղումով. http://www.un.am/up/library/Situation_of_%20Refugee_Children_%20Armenia_2016_eng.pdf:

4 Սեյվ դը չիլդրեն, Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան 2015 թվական, էջ 38, հասանելի է հետևյալ հղումով. <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>:

ՁԵԿՈՒՅՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

ԱԾԽՄ	Առանց ծնողական խնամքի մնացած
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԸՄ	Ընդհանուր մեկնաբանություն
ԻՀՀ	Իննամակալության և հոգաբարձության հանձնաժողով
ԻՀՄ	Իննամակալության և հոգաբարձության մարմին
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԺԱՀՀ	Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՔԱԽ	Քաղաքացիական ակտիվ խմբեր

Ա. ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

1. ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտեն ի գիտություն է ընդունել Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ազգային ծրագրի, ինչպես նաև՝ Կոնվենցիայի տարբեր ուղղություններին վերաբերող բազմաթիվ այլ ռազմավարությունների և ծրագրերի ընդունումը: Այնուամենայնիվ, Կոմիտեն ամիսսանք է հայտնել, որ ծրագրերը և ռազմավարությունները չեն ապահովվում բավարար ֆինանսական միջոցներով և հիմնականում հենվում են միջազգային կազմակերպությունների ֆինանսավորման վրա: Կոմիտեն նաև ամիսսանք է հայտնել, որ այդ ծրագրերի և ռազմավարությունների կատարողական առաջընթացի պարբերական գնահատում չի իրականացվում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 11)՝

- տրամադրել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և երեխաների իրավունքների բնագավառում ընդունված այլ ռազմավարությունների և ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բո-

լոր մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները,

- ապահովել ազգային ծրագրի և դրա կատարման արդյունավետության, ինչպես նաև հնարավոր կրկնողություններից խուսափելու նպատակով այլ ռազմավարությունների և ծրագրերի կատարման արդյունավետության պարբերական գնահատումը:

2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի **նպատակն է՝** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը: Այսինքն, ծրագիրը չի ցուցադրում համապարփակ մոտեցում բոլոր երեխաների իրավունքների իրականացմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշմամբ ընդունված՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցում նախատեսված միջոցառումներում զգալի մաս են կազմում այն քայլերը, որոնք պահանջում են օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորում: Այդուհանդերձ,

ափսոսանք է հայտնել, որ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովն այնքան էլ արդյունավետ չի իրականացնում համակարգողի իր դերը: Կոմիտեն մտահոգել է նաև այն հանգամանքը, որ բավարար չափով չի իրականացվում միջուրտային համակարգումը նախարարությունների, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Կոմիտեն առաջարկել է (կետ 13)՝

- անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելով Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին վերապահել անհրաժեշտ լիազորությունները և տրամադրել համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը կարողանա պետական մարմինների միջև արդյունավետորեն համակարգել երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,
- բարելավել միջուրտային համակարգումը նախարարությունների միջև, ինչպես նաև ազգային կառույցների և մարզային ու տեղական կառույցների միջև՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարածաշրջաններին և առավել անբարենպաստ պայ-

մաններում գտնվող տարածաշրջաններին:

Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը վերջին տարիներին դարձել է առավել ոչ արդյունավետ: Ըստ էության, պարբերական նիստեր չեն գումարվում: Հանձնաժողովի կայքում⁵ վերջին անգամ հաղորդագրություն է տեղադրվել 2013 թվականի հունվարի 31-ի նիստի մասին: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում ներառել է Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ստեղծմանը և գործունեությանը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը վերաբերող դրույթներ, ինչպես նաև մշակել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է շահագրգիռ մարմինների և գործընկեր հասարակական կազմակերպությունների քն-

5 http://www.mlsa.am/?page_id=2845:

նարկմանը:

Խնդրի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանման համաձայն՝ Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի կողմից քննարկման առարկա է դարձել հանձնաժողովին կից մոնիթորինգի խմբի ստեղծման հարցը: Հաշվի առնելով, որ հանձնաժողովը ամբողջությամբ չի իրականացնում երեխաների իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ուղղությունների, առաջնահերթությունների, մասնավոր ու պետական հատվածի փոխգործակցության ապահովման ու հիմնախնդիրների քննարկման իր գործառույթը՝ օրենսդրական փոփոխություններ են նախաձեռնվել՝ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսելով Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ստեղծմանը և գործունեությանը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը վերաբերող դրույթներ:

Ասվածի հետ կապված՝ հարկ է նկատել, որ վերը նշված օրենսդրական նախագծի իրավակարգավորումները թերևս բովանդակում են Ազգային հանձնաժողովի գործառույթները՝ ուղղված երեխայի իրավունքների պաշտպանության ոլոր-

տի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանը, պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման աջակցությանը, ինչպես նաև երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերի նկատմամբ մշտադիտարկմանը: Միևնույն ժամանակ, խնդրի օրենսդրական կարգավորումների լիարժեքության ու դրանց արդյունավետ կիրարկման ապահովման տեսանկյունից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում հատուկ ընդգծվել է, որ հանձնաժողովը պետք է ունենա պատշաճ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կարողանա արդյունավետ համակարգել երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերը և բարելավել համագործակցությունը միջգերատեսչական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական համայնքներին՝ հաշվի առնելով նաև ՀՀ-ի վերաբերյալ 2013 թվականի ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումներում հանձնաժողովի վերաբերյալ Կոմիտեի առաջարկները: Բացի այդ, նշվել է, որ նախագծում տեղ չեն գտել մարզային և համայնքային մակարդակում գործող մարմիններին վերաբերող, վերջիններիս գործունեության,

լիազորությունների մասին դրույթները՝ ըստ այդմ առաջարկելով նախատեսել մարզային և համայնքային մակարդակներում գործող մարմիններին վերաբերող դրույթները:

Երեխաների իրավունքների՝ նախարարությունների միջև միջուրտային համակարգման առումով Կոմիտեի առաջարկության կապակցությամբ անհրաժեշտ է հիշատակել Անչափահասների արդարադատության մատչելիության խորհրդի ստեղծումը, որն արդարադատության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N633-Ա հրամանով ձևավորված միջգերատեսչական մարմին է: Խորհուրդը ստեղծվել է 2015 թվականին ՀՀ Արդարադատության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի շրջանակում: Խորհրդի նպատակն է խթանել միջգերատեսչական համակարգակցությունը, ծառայել որպես հարթակ տարբեր կառույցների և կազմակերպությունների միջև ոլորտի վերաբերյալ խնդիրների քննարկման համար, մշակել համատեղ ռազմավարություններ և ներկայացնել առաջարկություններ օրենսդրական նախագծերի վերաբերյալ:

Այսպիսով, **Կոմիտեի առաջարկությունը կատարվում է մասամբ:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ղեկավարումը առնվազն վերապահել փոխվարչապետի:
- Միջգերատեսչական համագործակցությունն ամրապնդելու նպատակով Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքը կազմակերպել ռոտացիոն սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի այն լիազորելով երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի շահագրգիռ գերատեսչություններից մեկին:
- Սահմանել հանձնաժողովի նիստերի նվազագույն պարբերականություն, ինչպես նաև սահմանել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով հանձնաժողովի նիստեր չհրավիրելու և չանցկացնելու համար:

3. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել բյուջետային հատկացումների էական կրճատումների վերաբերյալ, մասնավորապես՝ առողջապահության և կրթության բնագավառներում (համապատասխանաբար 2007 թվականին ՀՆԱ-ի 2.1%-ից մինչև 2012 թվականին 1.5%, և 2010 թվականին ՀՆԱ-ի 3.2%-ից մինչև 2012 թվակա-

նին 2.5%): Կոմիտեն ավսոսանք է հայտնել բյուջեի պատրաստման գործընթացում երեխայի իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ անբավարար տեղեկատվության կապակցությամբ:

Կոմիտեն հիշեցրել է 2007 թվականին «Ռեսուրսները հանուն երեխայի իրավունքների. պետությունների պատասխանատվությունը» խորագրով ընդհանուր քննարկումների օրվա ընթացքում իր հրապարակած առաջարկությունների մասին, և այդ հիմքով.

Կոմիտեն առաջարկել է (կետ 15)⁶

- զգալիորեն ավելացնել և համարժեք մակարդակների հասցնել առողջապահության և կրթության բնագավառներում կատարվող հատկացումները.
- ձևավորել բյուջետավորման այնպիսի գործընթաց, որում հաշվի կառնվի երեխայի իրավունքների վրա հիմնված տեսակետը և երեխաների համար նախատեսված հստակ հատկացումեր կնախանշվեն ըստ համապատասխան ոլորտների և կառույցների, ներառյալ՝ որոշակի ցուցանիշներ և

դրանց կատարումը վերահսկելու համակարգ. և

- ձևավորել մեխանիզմներ Կոնվենցիայի կատարման համար տրամադրվող ռեսուրսների համարժեքությունը և դրանց բաշխման արդյունավետությունը և արդարացիությունը մշտադիտարկելու և գնահատելու համար:

Առողջապահության և կրթության ոլորտում հատկացումները 2013 թվականից հետո էական առաջընթաց չեն արձանագրել: Առողջապահությանը հատկացված գումարները եղել են ՀՆԱ 1.5%-ի սահմաններում, իսկ կրթության ցուցանիշները նվազել են մինչև ՀՆԱ 2.34%: Նվազել են նաև երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման նպատակով ԱՍՀՆը ՀՆԱ-ից հատկացված մասնաբաժինը: 2018-2020 թվականների միջնաժամկետ պետական ծախսերի ծրագրով⁶ նախատեսվում է մինչև 2020 թվականը առողջապահությանը ՀՆԱ-ից հատկացվող մասնաբաժինը նվազեցնել մինչև 1.06%, իսկ կրթությանը՝ համապատասխանաբար՝ 1.85%:

6 Հասանելի է հետևյալ հղումով. http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/:

Աղյուսակ 1⁷

	2013	2014	2015	2016	2017
Առողջապահություն	1.44%	1.61%	1.64%	1.59%	1.55%
Կրթություն	2.40%	2.54%	2.40%	2.39%	2.34%
Երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման համար	0.0716%	0.0774%	0.0757%	0.697%	0.0649%

Կոմիտեի թիվ 19 ընդհանուր մեկնաբանության 4-րդ հոդվածում կոչ է արվում պետություններին երեխայի իրավունքների իրականացման համար հատկացնել առավելագույն չափով իր առկա ռեսուրսները, ինչպես նաև ապահովել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, գործունեությունը, արդարությունը, թափանցիկությունը, և կայունությունը բյուջեի պլանավորման, ընդունման, կատարման և կատարման վերահսկողության բոլոր գործընթացներում: Երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարության միջոցառումների ծրագիրը նախատեսում է՝ Երեխայի իրավունքների իրականացմանն ուղղված բյուջետավորման վերաբերյալ վերլուծություն, որի համար մշակվել է մեթոդաբանություն ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից և վավերացվել է ոլորտային նախարարություններ-

րի և Ֆինանսների նախարարության կողմից: Վերլուծությունը իրականացվում է, սակայն բացակայում է կառավարության կամ ֆինանսների նախարարության կողմից հանձնառություն գործընթացը կայացնելու վերաբերյալ: Թեև անցում է կատարվում ծրագրային բյուջետավորման, որը թույլ է տալիս ընդգրկել երեխայի իրավունքների վրա հիմնված բյուջետավորումը, բացակայում են կոնկրետ մեթոդական ցուցումները:

2019 թվականից Հայաստանում անցում է կատարվելու ծրագրային բյուջետավորման, ինչը կարևոր է, քանի որ հնարավորություն կընձեռի ծրագրային հիմքի վրա դնել Երեխայի իրավունքների բյուջետավորումը⁸: Այդուհանդերձ, հաշվի առնելով վերը նշված վիճակագրական տվյալները, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները չեն կատարվել:**

7 Աղյուսակը կազմվել է 2015-2017, 2016-2018, 2017-2019, 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի պետական ծրագրերը համադրելու արդյունքում. http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsagreg/ :

8 Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, 2017-2022 թվականներ http://www.arlis.am/banners/HH_kar-cragir.pdf :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տարեցտարի ավելացնել առողջապահության, կրթության, երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման համար հատկացվող գումարները:
- Ծրագրային բյուջետավորման գործընթացում կարևորել երեխայի իրավունքների պաշտպանությունը՝ որպես ցուցանիշ, և ապահովել համապատասխան մեթոդական ցուցումներով:
- Մշակել երեխաներին ուղղված ծախսերի վերլուծության մեթոդաբանությունը, հնարավորություն ընձեռնելով տեսնել պետական բյուջեից երեխաներին հատկացվող ուղղակի և անուղղակի ծախսերն ու ապահովելով պետական ծախսերի արդյունավետությունը, արդարությունը և թափանցիկությունը:
- Առանձին ձևաչափով հավաքագրել երեխաներին ուղղված ծախսերը բոլոր գերատեսչություններից՝ ըստ մշակված մեթոդաբանության:
- Երեխաներին ուղղված բյուջետավորման գործընթացը կապել գենդերային բյուջետավորման գործընթացի հետ, որպես Կայուն զարգացման նպատակների իրականացմանը ուղղված միջոցառում:

4. ԱՆԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

Կոմիտեն ողջունել է 2011 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխաների իրավունքների մշտադիտարկման, պաշտպանության և խթանման հարցերով պատասխանատու համակարգողի գործառույթի ստեղծումը: Այնուհանդերձ, մտահոգություն է հայտնել այն մասին, որ աշխատակազմը բավարար կարողություններ և ռեսուրսներ չունի իր մանդատն արդյունավետորեն իրագործելու համար: Մասնավորապես՝ երեխաները, կարծես տեղյակ չեն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 17)՝

- հաշվի առնելով Կոմիտեի թիվ 2 ընդհանուր մեկնաբանությունը Մարդու իրավունքների անկախ հաստատությունների դերի վերաբերյալ (CRC/GC/2002/2), միջոցներ ձեռնարկել:
- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխայի իրավունքներով զբաղվող առանձին ստորաբաժանում ստեղծելու ուղղությամբ՝ վերջինիս տրամադրելով անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները:

- միջոցառումներ իրականացնել՝ հանրությանը, մասնավորապես՝ երեխաներին զանգվածային լրատվամիջոցներով և դպրոցներում իրականացվող բացատրական գրույցների միջոցով տեղեկացնելու Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին անհատական բողոքներ ներկայացնելու մեխանիզմի վերաբերյալ:
- վերը նշվածն իրագործելու համար տեխնիկական համագործակցության նպատակով դիմել, ի թիվս այլ կառույցների, Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին և Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամին: Մինչև 2013 թվականի հունիս ամիսը երեխաների իրավունքների պաշտպանությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ապահովվում էր մեկ պատասխանատուի կողմից, ով զբաղվում էր նաև հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց հիմնախնդիրներով: Հաշվի առնելով Կոմիտեի առաջարկու-

թյունը, ինչպես նաև համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ, Մարդու իրավունքների պաշտպանի հրամանով 2016 թվականի հունիսին ստեղծվել է Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: Բաժինն ակտիվորեն աշխատում է երեխաների հետ, կատարում է իրավական վերլուծություններ, իրականացնում է մշտադիտարկման այցեր, մասնակցում է միջազգային կազմակերպությունների աշխատանքներին: Վերջերս գործարկվել է Մարդու իրավունքների պաշտպանի՝ երեխաների համար մատչելի ինտերնետային կայքը (www.children.ombuds.am): Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից ներդրվում են երեխաների հետ աշխատելու նոր մոտեցումներ: Ինչպես արդեն նշվել է՝

Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի համաձայն, Պաշտպանը ստանձնել է Կոնվենցիայի մոնիթորինգի գործառույթ:

Հիմք ընդունելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունը կատարվել է:**



© UNICEF Armenia/2018/Osipova

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
(ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ, 3-ՐԴ, 6-ՐԴ ԵՎ 12-ՐԴ
ՀՈԴՎԱԾՆԵՐԸ)

1. ԽՏՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԸ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել սեռի հիմքով խտրականության, մասնավորապես՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման երևույթի, նորածինների սեռերի հարաբերակցության խախտման վերաբերյալ:

Կոմիտեին նաև մտահոգել է, որ առկա է խտրական վերաբերմունք խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների տարբեր խմբերի, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ՄԻԱՎ-ով ապրող երեխաների, կարիքավոր ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցային իրավիճակներում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների նկատմամբ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 19)՝

- գործադրել սեռի հիմքով խտրականության դեմ պայքարի մասին ՀՀ օրենսդրությունը և միջոցներ ձեռնարկել՝ պտղի սեռով պայմանավորված հղիության վաղաժամ ընդհատումը կանխելու և արգելելու ուղղությամբ.
- ապահովի որոշակի ծրագրերի իրագործումը խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների որոշակի խմբերի նկատմամբ խտրականու-

թյան իրավիճակը հաղթահարելու նպատակով, ներառյալ՝ **հաշմանդամություն** ունեցող երեխաների, **ՄԻԱՎ**-ով ապրող երեխաների, **կարիքավոր** ընտանիքների երեխաների, **գյուղական** բնակավայրերում ապրող երեխաների, **փողոցային** իրավիճակներում հայտնված և **հաստատություններում** ապրող երեխաների համար:

1) ՊՏՂԻ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ՎԱՂԱԺԱՄ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալների՝ նորածինների սեռերի հարաբերակցությունը խախտվել է 1991 թվականից սկսած, երբ գրանցվեց բարձր ցուցանիշ՝ 120 տղա 100 աղջկա դիմաց (կենսաբանորեն ընդունված նորմալ հարաբերակցություն է համարվում 102-106 տղա՝100 աղջկա դիմաց): Ընդ որում, այդ ցուցանիշը վերաբերում էր ընտանիքում առաջին երեխայի ծնելիությանը, մինչդեռ երրորդ երեխայի ծնելիության դեպքում սեռերի հարաբերակցությունը 2000 թվականին հասնում էր 150 տղա 100 աղջկա համեմատ, իսկ 2010 թվականին՝ 173 տղա 100 աղջկա համեմատ: Այս ցուցանիշները

համարվում էին աշխարհում դիտարկված ամենաբարձր ցուցանիշներից երրորդը՝ Չինաստանից և Ադրբեջանից հետո: Սեռերի անհամամասնության վերաբերյալ 2013 թվականի հունվարին մտահոգություն հայտնեց նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսը, ով մատնացույց անելով Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Կոսովոյում, Ալբանիայում և արևելաեվրոպական այլ երկրներում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի առկայությանը, կոչ արեց այդ երկրների կառավարություններին ընդունելու սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն արգելելու վերաբերյալ ազգային օրենսդրություն:

2000-ականներից սկսած սեռերի հարաբերակցության շեղումը սկսեց նվազել և 2012-2015 թվականներին սեռերի համամասնությունը կազմեց 100 աղջիկ-114 տղա, իսկ Առողջապահության նախարարության վերջին տվյալների համաձայն, սեռերի համամասնությունը 2016 թվականին կազմել է 100 աղջիկ-112 տղա, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակում՝ 100 աղջիկ-110 տղա:⁹

Վերջին դրական միտումն արդյունք էր բազմաթիվ միջոցառումների, որոնք իրականացվեցին

օրենսդիր, պետական մարմինների, ինչպես նաև բազմաթիվ հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց իրականացրած շատ քայլեր ֆինանսավորվում էին միջազգային կազմակերպությունների, օրինակ՝ Եվրոպական միության կողմից:

Վերոհիշյալի հետ կապված, ՀՀ կառավարության (ՀՀ առողջապահության նախարարության) օրենսդրական նախաձեռնությամբ մշակվեց և 2016 թվականի ՀՀ ԱԺ կողմից հաստատվեց օրենսդրական բարեփոխման փաթեթ: Փոփոխության ենթարկվեց «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը (Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը)) (10-րդ հոդվածը փոփ. 30.04.15 ՀՕ-24-Ն, խմբ. 29.06.16 ՀՕ-134-Ն) և առաջին անգամ օրենսդրությամբ սահմանվեց սեռով պայմանավորված հղիության ընդհատման արգելք: Ավելին, սահմանվեցին մի շարք երաշխիքներ խախտումների ու կամայականությունների դեմ, օրինակ՝ հղիության արհեստական ընդհատման դիմելու, դրան համաձայնություն տալու բազմաթիվ գրավոր ընթացակարգեր, օրինակ՝ 12-ից մինչև 22 շաբաթական ժամկետում բժշկի կողմից ցուցումների բացակայության դեպ-

9 Առողջապահության նախարարության 2017 թվականի օգոստոսի 1-ի պաշտոնական հայտարարությունը: Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.moh.am/#1/687>:

քում հղիության ընդհատման արգել-
քը, կնոջը վերջնական որոշում կա-
յացնելու ժամանակահատված տալու
պահանջը, կամ հղիության ընդհա-
տումը միայն մանկաբարձական և գի-
նեկոլոգիական բժշկական զննության
և սպասարկման լիցենզիա ունեցող
հիվանդանոցային առողջապահա-
կան հաստատություններում կատա-
րելու պահանջը և այլ երաշխիքներ:
Փոփոխվեց նաև Վարչական իրավա-
խախտումների մասին օրենքը, որում
ամրագրվեցին վարչական պատաս-
խանատվություն մի շարք հիմքեր
բժշկի կողմից հղիության արհեստա-
կան ընդհատումը կատարելուց առաջ
և հետո օրենքով նախատեսված ան-
հրաժեշտ միջոցառումներ չիրակա-
նացնելու համար: Օրենսդրական այս
փոփոխության հիման վրա 2017թ.
փետրվարին ընդունվեց Հղիության
արհեստական ընդհատման կարգն
ու պայմանները հաստատելու մասին
կառավարության թիվ 180-Ն որոշու-
մը, որով ավելի մանրամասն սահ-
մանվեցին հղիության ընդհատման
կարգն ու պայմանները: Այս ակտերի
կիրառմամբ նպատակ է հետապնդ-
վել կանխարգելել և էականորեն կր-
ճատել սեռով պայմանավորված հղի-
ության ընդհատումները:

Օրենսդրական փոփոխություննե-
րից զատ, զուգահեռաբար իրակա-
նացվել են հանրային իրազեկման
լայնածավալ աշխատանքներ՝ ուղղ-
ված հղիության արհեստական ընդ-

հատման դեպքերի կրճատմանը:
Օրինակ, ՄԱԿ-ի բնակչության հիմ-
նադրամի աջակցությամբ մշակվել և
2014 թվականին ՀՀ առողջապահու-
թյան նախարարի և ՀՀ աշխատանքի
և սոցիալական հարցերի նախարարի
համատեղ հրամանով հաստատվել և
իրագործվել է «Պտղի սեռով պայմա-
նավորված հղիության արհեստական
ընդհատումների կանխարգելման
2015-2017 թվականների ծրագիրը»,
ստեղծվել է «Տեղական մասնակցու-
թյան և ոչ խտրականության» փորձի և
գիտելիքի փոխանակման ցանց, որի
շրջանակներում ՀՀ մարզերում և Եր-
ևանում տեղի են ունեցել աշխատան-
քային, մեկնարկային հանդիպումներ
և այդ հանդիպումների արդյունքում
ձևավորվել են «Տեղական մասնակ-
ցության և ոչ խտրականության» փոր-
ձի և գիտելիքի փոխանակման ցանցի
խորհրդատվական աշխատանքային
խմբեր: ԶԼՄ-ների միջոցով մշակվել
են սոցիալական հոլովակներ, հեռար-
ձակվել են թեմատիկ հաղորդումներ,
մշակվել են տեղեկատվական, կրթա-
կան և հաղորդակցության նյութեր
ու պաստառներ, համայնքներում
ստեղծվել են քաղաքացիական ակ-
տիվ խմբեր (այսուհետ, ՔԱԽ): Կազ-
մակերպվել են սեմինարներ ծննդօգ-
նության հիվանդանոցային ծառա-
յություններ մատուցող հաստատու-
թյուններում հղիներին նախաձննդյան
խորհրդատվություն տրամադրող բու-
ժաշխատողների համար՝ սեռի որոշ-

ման տեխնոլոգիաների կիրառման էթիկական խնդիրների վերաբերյալ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցությամբ նախապատրաստվել է երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար հատուկ մեթոդաբանության ձեռնարկ:¹⁰

Ինչպես արդեն նշվեց, սեռերի անհամամասնության նվազման միտումը, որ դիտվում է ներկայումս, պայմանավորված էր վերը նշված միջոցառումների հետևողական կիրառությամբ և այդ լույսի ներքո գտնում ենք, որ Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են :

Այդուհանդերձ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հանրային իրազեկումը և վերը նշված միջոցառումները չեն իրականացվել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ակտիվ քարոզչությամբ, հղիության վաղաժամ ընդհատումը՝ որպես խտրականություն դիտարկելու բովանդակությամբ: Սեռի ընտրության հենքով արհեստական ընդհատումները արգելվել են, բայց դրանք շատ դժվար վերահսկելի են հղիության շաբաթների որոշման բնականոն ճկունությամբ ինչպես նաև արագ զարգացող տեխնոլոգիաների առկայության

պայմաններում: Այս խնդիրը միայն արգելելով երկար կայուն արդյունք չի կարող պահպանել: Բացի այդ ՀՀ-ում դեռևս հարաբերակցությունը բնականից բարձր է, ինչը ինքնին արդեն իսկ մատնանշում է, որ անգամ արգելքի առկայության պայմաններում առկա է ակնհայտ սեռի հենքով արհեստական ընդհատում: Խտրականության արգելքի վերաբերյալ ոլորտի օրենսդրությունը կարելի է ասել մոռացության է մատնվել, իսկ որոշ հաստատություններում այդ մասին հիշատակելը՝ նույնիսկ անընդունելի: Պատահական չէ, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում շատ հազվադեպ կարելի է գտնել դատական որոշումներ, որոնցում դատարանի կամ դատավարության մասնակիցների կողմից կիրառվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Այս օրենքը, որպես կանոն, չի վկայակոչվում նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների որոշումներում: Պետական ու համայնքային մարմինների կողմից իրականացված ծրագրերում, այդ թվում նաև համայնքային ծրագրերում սեռով պայմանավորված հղիության ընդհատման խնդիրը առավելապես ներկայացվել է կյանքի, ժողովրդագրության, առողջության, ընտանիքի, երեխայի պաշտպանության հիմնախնդիրների լույսի ներքո, այլ ոչ թե որպես սեռի

10 Նկարագրված միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները ստացվել են Առողջապահության նախարար Լ. Ալթունյանի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրությամբ՝ ի պատասխան Պաշտպանի 2017 թվականի նոյեմբերի 22-ի N01/18.2/4798-17 գրության:

հիմքով խտրականության դրսևորում, իրավունքի գերակայության կոպիտ ոտնահարում: Մինչդեռ ստեղծված իրավիճակի իրական պատճառը խտրականությունն է, առկա կարծրատիպային մտածելակերպը: Այս անթույլատրելի երևույթի դեմ պետք է պայքարել գլխավորապես խտրականության արգելքի՝ որպես մարդու հիմնարար իրավունքի բովանդակությամբ :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Սեռով պայմանավորված վաղաժամ հղիության դեմ իրականացվող ցանկացած ծրագիր, միջոցառում պետք է ներկայացվի, նախևառաջ սեռի հիմքով խտրականության բովանդակությամբ: Այդ նպատակով պետք է լայնորեն գործադրել խտրականության արգելքի վերաբերյալ օրենսդրությունը, և այդ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներն ու չափանիշները:

2) ԽՈՑԵԼԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՈՐՈՇԱԿԻ ԽՄԲԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2013 թվականից առ այսօր Հայաստանի Հանրապետությունում դրական փոփոխություններ են տեղի ունեցել երեխաների խնամքի և պաշտպանության համակարգում: Հայտնաբերվել ու նվազեցվել են խտրականության դեպքերը, կարգավորումները և պրակտիկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ: Ինչպես արդեն նշվեց, շարունակական կատարելագործման է ենթարկվում երեխայի իրավունքներին առնչվող օրենսդրական դաշտը, որի առանցքը 2015 թվականի Սահմանադրության 37-րդ հոդվածն է: ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի նիստի N 18 արձանագրային որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը, որն ուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի

և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը և բացառում է միայն ֆինանսական պատճառներով երեխաների դուրսբերումը ընտանիքից: 2017 թվականի դեկտեմբերի 21-ին երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունվեց «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Ընթացքի մեջ են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, «Բազմազավակ ընտանիքների մասին» օրենքի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի, «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծերի մշակման, հաստատման և ընդունման գործընթացները: Այս օրենքների նախագծերում լայնորեն սահմանված են սկզբունքներ, որոնք կարող են խտրական վերաբերմունքի արգելքի կիրառման արդյունավետ երաշխիքներ հանդիսանալ:

Սոցիալապես անապահով ընտա-

նիքների երեխաների, գյուղական բնակավայրերի երեխաների, փողոցում հայտնված և հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ խտրականության իրավիճակը հաղթահարելու նպատակով ՀՀ ԱՍՀՆ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացվել են վերապատրաստումներ «Հաշմանդամ երեխաների սոցիալական ներառումը», «Երեխաների նկատմամբ խտրականության կանխարգելումը», «Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրները» թեմաներով¹¹:

Առողջապահության ոլորտում խթանվում են համայնքային վերականգնողական կենտրոնների ստեղծումը, ստեղծվում են հաշմանդամություն ունեցող երեխաների վաղ հայտնաբերման համակարգեր: ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտի ուսումնական բազայում՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում 2010 թվականից անցկացվում է «ՄԻԱՎ վարակ» դասընթացը, որն ուղղված է նաև բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ վարակով պացիենտների նկատմամբ հնարավոր հասարակական խարանի և խտրականության կանխ-

11 Նշված տեղեկությունը ստացվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ ի պատասխան Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանը այն մասին, թե ինչ աշխատանքներ են իրականացվել տեղական/համայնքային մակարդակում երեխաների պաշտպանության համակարգում երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների և վերապատրաստումներ անցած կամավորների ներգրավման առումով:

մանն ու հաղթահարմանը: Հանրապետության բոլոր մարզերի բուժաշխատողները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ անցել են վերապատրաստում՝ «Տնային այցերի ժամանակ վաղ տարիքի երեխաների խնամքի և զարգացման վերաբերյալ տրամադրվող խորհրդատվության հիմունքներ» թեմայով, որի բաժիններից մեկը նվիրված է եղել հաշմանդամություն կամ զարգացման խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ տարվող աշխատանքին¹²:

Կրթության ոլորտում ընթացքի մեջ է ներառական կրթության մշակույթի և պրակտիկայի ներդրման գործընթացը բոլոր հանրակրթական դպրոցներում, հատուկ դպրոցները աստիճանաբար վերակազմավորվում են աջակցության կենտրոնների, որոնց աշխատողները վերապատրաստվում են՝ աջակցման ծառայություններ տրամադրելու համար: Սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրվում է դեպք վարողի՝ սոցիալական աշխատողի ինստիտուտը՝ ընտանիքահեն աջակցություն ցուցաբերելու նպատակով: Նույն նպատակով վերապատրաստվում են սոցիալական աշխատողներ: Ուսումնասիրվում են այլ երկրներում ներդրված պատվիրակված սոցիալական ծառայությունների մոդելները: Թեև տարեցների խնամքի ոլորտում նման համակարգ

Հայաստանում գործում է, սակայն օրինակ, խնամատարությունը՝ որպես պետության կողմից պատվիրակված սոցիալական ծառայություն, գործում է էական թերություններով: Գիշերային խնամքի հաստատությունները վերակազմավորվում են երեխաների և ընտանիքների աջակցության համայնքային կենտրոնների:

Փորձարկվել է հաշմանդամության, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող երեխաների, գնահատման, սահմանման և ծառայությունների մատուցման նոր մոդել, որը հիմնված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Երեխաների և երիտասարդների ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման (ՖՄԴ-ԵԵ) վրա և հաշվի է առնում աճող երեխայի առանձնահատկությունների և միջավայրային գործոնների փոխերգործությունը:

Վերը նշված միջոցներին իրականացվել են պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների («Հույսի կամուրջ», Հայ Օգնության Ֆոնդի «Երեխաների Աջակցության Կենտրոն», «Առավոտ», «Լիարժեք կյանք», «Օրրան», «Սեյվ դը չիլդրեն» «Վորլդ Վիժն», և այլն), միջազգային դոնոր կազմակերպությունների (ԱՄՆ Միջազգային զարգացման գոր-

12 Ըստ Առողջապահության նախարարության գրության. տես տողատակի 5-րդ ծանոթագրությունը:

ծակալություն, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Եվրոպական միություն, Համաշխարհային բանկ, Բաց հասարակության հիմնադրամ) ակտիվ աջակցությամբ:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաները շարունակում են ենթարկվել խտրական վերաբերմունքի: Այս մասին են փաստում պաշտոնական վիճակագրությունը, ոլորտի զեկույցները¹³, ինչպես նաև ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարությունը¹⁴: Այս փաստաթղթում ուղղակիորեն արձանագրվել է, որ «երեխային մատուցվող ծառայությունները երբեմն ուղեկցվում են նրա պաշտպանության իրավունքների խախտումով: Դրսևորվում են խտրականության, բռնության մոտեցումներ: Խնդիրներ կան նաև մաս-

նակցային իրավունքները ապահովելու . . . գործընթացում»¹⁵: Այսինքն՝ եթե Կոնվենցիայի հիմքում ընկած են երեխայի իրավունքների չորս խումբ՝ խտրականության արգելք և հավասարություն, երեխայի լավագույն շահեր, գոյատևում ու զարգացում և մասնակցություն ու ներառում, ծրագրում խտրականության դրսևորումը որպես խնդիր դիտարկվում է հիմնականում ծառայություններ ստանալու իրավունքի ապահովման և, մասնավորապես՝ երեխաների մասնակցային իրավունքի ապահովման երկու ոլորտներում: Երեխաները ներկայացվում են ավելի շատ՝ որպես «պաշտպանության սուբյեկտներ», քան ինքնուրույն իրավատերեր: Մինչդեռ, երեխաներին ճանաչելը՝ որպես անկախ եւ ինքնուրույն իրավատերեր, պետական իշխանությունների և մասնավոր հաստատությունների ուշադրությունը

13 Տե՛ս «Երբ ես կկարողանամ տուն գնալ»: Զարաշահումներ և խտրականություն հաստատություններում գտնվող երեխաների նկատմամբ և որակյալ ներառական կրթության մատչելիության պակասը Հայաստանում, Human Rights Watch, 2017 թվական https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_0.pdf: Երեխայի պաշտպանության ինդեքս Հայաստան, Child Pact, World Vision 2016, <http://mankutyun.am/resursview/18/>: Հայաստանում ապաստան հայցող, փախստական և տեղահանված երեխաների իրավիճակի գնահատում, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2016 թվական http://www.un.am/up/library/Situation_of_%20Refugee_Children_%20Armenia_2016_eng.pdf, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), տարեկան զեկույց 2016 թվական https://www.unicef.org/about/annualreport/files/Armenia_2016_COAR.pdf; Տարեկան հաղորդում 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին, <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf> և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց, Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն, 2014, <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/47f11a7aaf7697321fbb9952c536f36a.pdf>.

14 Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշում, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=91088&sc=%20>:

15 Տե՛ս ծրագրի 12-րդ կետը՝ Հիմնախնդիրներ բաժնում:

կենտրոնացնում է նրանց լավագույն շահերի վրա¹⁶:

Վերը նշված իրավիճակը, այսինքն՝ խտրականությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ մեծապես պայմանավորված է խտրականության արգելքի՝ որպես մարդու հիմնարար իրավունքի նկատմամբ հարգանքի վերաբերյալ պետական մարմինների, հասարակության, ինչպես նաև երեխաների հետ աշխատող մասնագետների ցածր տեղեկացվածությամբ, կարծրատիպային պատկերացումներով, համապարփակ դատական պրակտիկայի բացակայությամբ և, ընդհանրապես, խտրականության արգելքի արմատավորման հարցում իրավական մշակույթի բացակայությամբ: Բավական է նշել, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման պետական հայեցակարգում բացակայում է որևէ նշում խտրականության մասին: Ողջ հայեցակարգը ներկայացվում է երեխայի խնամքի, նրանց կարիքների բավարարման տեսանկյունից: Թեև լայնորեն հղում է կատարված երեխաների խնամքի կազմակերպման համայնքահեն և ընտանիքահեն ծառայությունների անհրաժեշտության վրա, չկա որևէ նշում այն մասին, որ այդ համակարգերի

ներդրումը հիմնականում պայմանավորված է երեխայի նկատմամբ խտրականության, առանց օբյեկտիվ հիմքերի տարբերակված վերաբերմունքի բացառման անհրաժեշտությամբ: Քանի որ ցածր է իրավագիտակցությունն այն մասին, որ երեխան ունի ինքնուրույն իրավունքներ, նույնիսկ ծառայությունները, որոնք կոչված են ապահովելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար այլոց հետ հավասար իրավունքներ և հնարավորություններ, մատուցվում են հիմնականում հաշվի առնելով ոչ թե երեխայի իրավունքը կամ շահը, այլ կարիքները (որպես ավանդական հասարակական պատկերացում) և **ուղղված են ոչ թե երեխայի իրավունքների վերականգնմանը, այլ պարզապես նրա կարիքների բավարարմանը:**

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի իրականացրած հետազոտության՝ երեխաների 28%-ը խոցելի է (աղքատության 2 և ավելի դրսևորումներում) և ապրում է աղքատ տնային տնտեսությունում: Այս երեխաներն ամենախոցելին են և պետք է առաջնահերթ տեղ գրավեն ՀՀ պետական քաղաքականության մեջ: Միաժամանակ, երեխաների 36%-ը խոցելի է, սակայն չի ապրում աղքատ տնային տնտեսությունում: Խոցելիության առումով առկա են խիստ տարբերություններ քաղա-

16 Տե՛ս Կոմիտեի թիվ 13 Ընդհանուր մեկնաբանությունը, Բաժին I, կետ 3(բ): Հասանելի է հետևյալ հղումով. http://srsg.violenceagainstchildren.org/sites/default/files/documents/docs/crc-c-gc-13_EN.pdf :

քային և բնակավայրերի միջև, մասնավորապես կոմունալ ծառայությունների առումով: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաների 87% խոցելի է այս ուղղությամբ՝ ջրամատակարարման և ջեռուցման անբավարար ծառայությունների համակցությամբ: Երկրորդ կարևոր տարբերությունը տեղեկատվության հարցում է: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաների 57% համար տեղեկատվությունն անհասանելի է, իսկ քաղաքային բնակավայրերում այն հասանելի է երեք երեխայից մեկի համար¹⁷:

Այսպիսով, Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Երեխայի իրավունքներին վերաբերող օրենսդրական բարեփոխումների փաթեթներում ներառել դրույթ խտրականության արգելքի վերաբերյալ, իսկ եթե այդպիսի դրույթներ ներառված են, անհրաժեշտ է դրանք համահունչ դարձնել խտրականության արգելքի վերաբերյալ սահմանադրական դրույթին՝ հատկապես հաշվի առնելով, որ խտրականության արգելքով պաշտպանված հատկանիշների շրջանակը պետք է սահմանել բաց, այլ ոչ թե փակ, սպառիչ ցանկով:

- Իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի հիմնարար սկզբունքի վերաբերյալ՝ երեխայի պաշտպանության համակարգում ներգրավված բոլոր մասնագետների, այդ թվում՝ փաստաբանների, դատավորների, ոստիկանության ծառայողների, սոցիալական համայնքային աշխատողների, հոգեբանների, որդեգրող և խնամատար ծնողների, ուսուցիչների, առողջապահության ոլորտի մասնագետների, քաղաքականության մշակողների համար:
- Մշակել և իրականացնել ժամանակավոր կառուցողական գործողություններ (affirmative measures) առավել խոցելի խմբերի համար: Օրինակ՝ մշակել ծրագրեր, որոնցով բավարար ֆինանսական միջոցներ կամ աջակցություն կտրամադրվի և արտոնյալ պայմաններ կստեղծվեն հաշմանդամություն ունեցող կամ տարիքով ավելի բարձր երեխաների այլընտրանքային ընտանիքահեն և համայնքահեն խնամքի կազմակերպումը խթանելու և իրականացնելու համար:
- Հնարավորինս շատ առաջնահերթություն տալ և ռեսուրսներ առանձնացնել առավել խոցելի խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին՝ թիրախավորե-

¹⁷ Մանրամասն տե՛ս http://www.un.am/up/library/Child_poverty_Armenia_N-MODA_Report_2016_arm.pdf:

լով ավելի լայն խմբեր (գյուղական բնակավայրերում ապրող, բազմազավակ և այլն):

2. ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԸ

Կոմիտեն իր դիտարկումներում մտահոգություն է հայտնել այն մասին, որ թեև 2004 թվականին ընդունված Ընտանեկան օրենսգրքում ներառվել է «երեխայի օրինական շահ» սկզբունքը, սակայն դա համարժեք չէ Կոնվենցիայով սահմանված «երեխայի լավագույն շահ» հասկացությանը: Հանձնաժողովը նաև ափսոսանք է հայտնել, որ բացակայում են ուղենիշներ և ընթացակարգեր, որոնցով կարելի է ապահովել երեխայի լավագույն շահը ցանկացած իրավիճակում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 21)՝

- փոփոխության ենթարկել օրենսդրությունը և դրանում ամրագրել «երեխայի լավագույն շահ» սկզբունքը՝ որպես իրավունք (ըստ Կոմիտեի թիվ 14 ԸՄ-ի).
- ավելացնել ջանքերը այդ իրավունքի հետևողական գործադրման ուղղությամբ. բոլոր իրավական, այդ թվում՝ վարչական և դատական վարույթներում, ինչպես նաև քաղաքականության բոլոր ոլորտներում, ծրագրերում և նախագծերում, որոնք առնչություն ունեն

երեխաների հետ և ազդում են նրանց վրա.

- մշակել ընթացակարգեր և չափորոշիչներ, որոնցով կուղղորդվեն շահագրգիռ բոլոր պաշտոնատար անձինք ցանկացած բնագավառում երեխայի լավագույն շահը որոշելիս, և դրանք տարածել հանրային, այդ թվում՝ վարչական, օրենսդիր և դատական մարմիններին, աշխարհիկ և կրոնական ոլորտի ղեկավարների շրջանում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարբեր ոլորտներում ջանքեր են գործադրվել «երեխայի լավագույն շահ» հայեցակարգն **ամրագրելու** և հետագա կարգավորումն ապահովելու ուղղությամբ: Այդ իմաստով Կոմիտեի առաջարկությունները կարելի է համարել զգալիորեն կատարված: Սակայն ինչ վերաբերում է այդ իրավունքի **կիրառությանը**, ապա այդ առումով իշխանությունների կողմից բավարար ջանքեր չեն կիրառվել, մասնավորապես՝ անհրաժեշտ ընթացակարգեր ու չափորոշիչներ մշակելու և դրանք տեղերում իրագրելու, տարածելու ուղղությամբ, որի արդյունքում «երեխայի լավագույն շահը» որպես իրավունք պրակտիկայում էապես չի տարածվել՝ բացառությամբ որոշ ոլորտների: Ներկայացնում ենք մեր դիտարկումները ավելի մանրամասն:

1) ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով առաջին անգամ առանձին՝ 37-րդ հոդվածով ամրագրվեց երեխայի իրավունքների պաշտպանությունը՝ որպես սահմանադրական նորմ: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան: Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի՝ երեխայի՝ իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերությունները և անմիջական շփումները պահպանելու իրավունքը կարող է սահմանափակվել այն դեպքում, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին: Այս երկու դրույթները Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված «երեխայի լավագույն շահ» իրավունքի ամրագրումն է սահմանադրության մակարդակով: Թեև Սահմանադրությունը երեխայի շահը արտահայտությունում բառացիորեն չի նշում «լավագույն» արտահայտությունը, սակայն Սահմանադրությունը իր համատեքստում մեկնաբանելիս, ինչպես նաև հետագա զարգացումները բացահայտեցին, որ Սահմանադրության հեղինակները նկատի են ունեցել երեխայի լավագույն շահ

հասկացությունը: Մասնավորապես, նկատի ունենք այն հանգամանքը, որ հետագայում ընդունված օրենսդրական բարեփոխումներում, օրինակ՝ 2017 թվականի դեկտեմբերին Ընտանեկան օրենսգրքի բարեփոխված տարբերակում, ինչպես նաև տարբեր ռազմավարական ծրագրերում, որոնց մասին հիշատակվում է սույն զեկույցի տարբեր հատվածներում, անխտիր օգտագործվում է երեխայի լավագույն շահ հասկացությունը: Ի հավելումն, ՀՀ սահմանադրական դատարանը «երեխայի լավագույն շահ» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտել է ընտանեկան հարաբերությունները կարգավորող օրենսդրության ոլորտում: 2010 թվականի հոկտեմբերի 5-ի ՍԴԴ-919 որոշման մեջ Սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված «երեխաների շահերից» արտահայտությունը, որոշել է, որ ծնողների ամուսնալուծության դեպքում երեխայի բնակվելու վայրի վերաբերյալ համաձայնության բացակայության պարագայում դատարանների համար գերակա պայման պետք է հանդիսանա «երեխայի լավագույն շահը» և թե՛ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերի հետ, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով: **«Երեխայի լավագույն շահ» հասկա-**

ցությանը սահմանադրաիրավական կարգավիճակ հաղորդելը խոսում է այս սկզբունքի և դրա հիմքում ընկած իրավունքի՝ օրենքներում ու պրակտիկայում տարածական կերպով կիրառելու նպատակի առկայության մասին: ՍԴ այս իրավական դիրքորոշումն ինքնին խոսում է այն մասին, որ Սահմանադրության 37-րդ հոդվածում «երեխայի շահ» հասկացությունը պետք է մեկնաբանվի որպես երեխայի լավագույն շահ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային համահունչ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում են «երեխայի օրինական շահ» սկզբունքը: Նույն մոտեցումը առկա է նաև այլ հարակից օրենքներում, որոնք առնչվում են երեխայի իրավունքների պաշտպանությանը, օրինակ՝ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը, և այլ օրենքներ: Այդուհանդերձ, իր նյութաիրավական բովանդակությամբ «երեխային օրինական շահ» հասկացությունը համարժեք չէ «երեխայի **լավագույն շահ**» հասկացության հետ, քանի որ առաջինը երեխայի շահերը կոնկրետ իրավիճակում սահմանափակում է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենքի շրջանակներով: Մինչդեռ, նշված օրենքները նույ-

նիսկ մոտավոր չեն սահմանում բոլոր այն պայմանների ցանկը (տարրերը), որոնք Կոմիտեի թիվ 14 ԸՄ-ով առաջարկվում է հաշվի առնել երեխայի լավագույն շահերը Կոնվենցիային համապատասխան մեկնաբանելիս ու կիրառելիս: Մասնավորապես, թիվ 14 ԸՄ-ով առաջարկվում է հաշվի առնել կոնկրետ գործի փաստական հանգամանքները և երեխայի շահերին ծառայող հետևյալ տարրերը. երեխայի հայացքները, նրա անձը, ընտանեկան միջավայրը ու կապերը, երեխայի անվտանգության, խնամքի և պաշպանության հետ կապված հարցերը, խոցելիությունը, առողջության և կրթության իրավունքները: Այնուհետև, ըստ Ընդհանուր մեկնաբանության, առաջարկվում է բոլոր այդ շահերը միմյանց հետ փոխհավասարակշռել և այդ ամենը անելիս ապահովել նաև որոշ ընթացակարգային երաշխիքներ: Օրինակ՝ երեխայի լաված լինելու իրավունքը, բոլոր փաստերն ու տեղեկությունները անհրաժեշտ մասնագիտական կարողություններ ունեցող անձանց միջոցով ձեռք բերելու և ամրագրելու պահանջը, իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու և պատճառաբանված որոշումներ ու եզրահանգումներ կայացնելու պահանջները, որոշումները բողոքարկելու և վերանայելու վարույթային պահանջների ապահովումը և այլ ընթացակարգային հատուկ երաշխիքներ: Երեխայի շահերը որոշելիս

բազմաթիվ գործոններ կարող են ի հայտ գալ և այդ ամենը օրենքի շրջանակում սպառիչ սահմանել հնարավոր չէ: Անհրաժեշտ է, որ երեխայի իրավունքներին առնչվող օրենքները սահմանեն ոչ թե երեխայի օրինակյան շահ, այլ երեխայի լավագույն շահ հասկացությունը, որը հնարավորություն կտա կիրառել ԸՄ սահմանված բոլոր պայմանները: **Հետևաբար, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը չեն համապատասխանում Կոնվենցիայի պահանջին՝ այնքանով, որքանով այդ օրենքներում սահմանված է «երեխայի օրինական շահ» սկզբունքը «Երեխայի լավագույն շահ» սկզբունքի փոխարեն:**

Ողջունելի է, որ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի դեկտեմբերին ընդունվեց «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» օրենքը, որը նախևառաջ պայմանավորված է 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներով: Մասնավորապես, Սահմանադրության նոր տեքստում, ինչպես արդեն նշվեց, ծավալուն կարգավորում է տրվել երեխայի իրավունքներին՝ ընդհուպ երեխայի շահի սկզբունքին: Ի հավելումն, օրենքի փոփոխությունները և լրացումները մշակվել են ի կատարումն «Հայաստանի Հանրապետությունում երե-

խայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի» և դրա ժամանակացույցի: «Երեխայի լավագույն շահ» կոնվենցիոն սկզբունքը մանրամասնորեն սահմանված է օրենքում (հոդված 1, մաս 7) և ներառում է ոչ միայն իրավաբանական սահմանումը, այլ նաև երեխայի շահերին ծառայող տարրերը, գործոնները (օրինակ՝ երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, ծնողի և ընտանիքի անդամների հետ շփվելու կարևորությունը, մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը, և այլն): Այս առումով, կարելի է նշել, որ կիրառվել է թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության մոտեցումը: Ավելին, երեխայի լավագույն շահը սահմանված է նաև կոնկրետ իրավահարաբերություններում, օրինակ՝ որդեգրման ժամանակ (հոդված 112), խնամատար ընտանիքի ընտրությունը կատարելիս (հոդված 137), առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դախաստիարակության կազմակերպումը (հոդված 111) և այլն:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի փոփոխության նախագծում «Երեխայի լավագույն շահ» սկզբունքը **նեղ է սահմանված և կիրառելի է միայն ծնողների հետ անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու հարաբերության նկատմամբ** (հոդված 2):

Ներկայում Ազգային ժողովում է գտնվում քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը¹⁸: Կարևոր է, որ նախագծում սահմանված է երեխայի լավագույն շահի սկզբունքը ընտանեկան վեճերով (հոդված 189) և որդեգրման գործերով վարույթների նկատմամբ (հոդված 230): Այդուհանդերձ, հարց է առաջանում՝ թե ինչու է այս սկզբունքը սահմանված միայն նշված երկու տեսակի վարույթների, այլ ոչ թե քաղաքացիական գործերով բոլոր վարույթների նկատմամբ, որոնցում ներգրավված են երեխաները և որոնց շրջանակներում որոշվում է երեխայի շահին առնչվող որևէ հարց: Կոնվենցիան սահմանում է, որ *երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում*, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին (հոդված 3): Օրենսդրական այս փոփոխությունների գործընթացին ներգրավված որոշ փորձագետների հետ քննարկումներից պարզվել է, որ նախագիծը մշակելիս ի սկզբանե նպատակ է եղել երեխայի խնամքի կառուցակարգերի բարեփոխումը, այլ ոչ թե նախագծի ամբողջական համապա-

տասխանեցումը նոր Սահմանադրությանը:

Այդուհանդերձ, հաշվի առնելով վերը նշված բարեփոխումները, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են:**

2) «ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

«Երեխայի լավագույն շահ» սկզբունքը՝ որպես իրավական կատեգորիա աստիճանաբար տարածվում է դատական պրակտիկայում, սակայն դեռ վաղ է պնդել, թե դա լայն կիրառություն ունի՝ բացառությամբ առանձին ոլորտների:

Ընտանեկան հարաբերությունների գործերով ձևավորվել է դատական պրակտիկա «երեխայի լավագույն շահ» հասկացության կիրառության ուղղությամբ: Դա պայմանավորված է ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով: Մարզաբարձր Հովհաննիսյանի վերաբերյալ 01.04.2011թ. թիվ ԵԱԴԴ/1513/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է, որ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների իրականացման և պաշտպանության գործընթա-

18 Հասանելի է հետևյալ հղումով. <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=46922>:

ցում պարտավոր է ելնել միմիայն երեխայի լավագույն շահերից, երեխային ապահովել բարեկեցության

համար անհրաժեշտ հոգատարությամբ:

Իրավիճակ 1

Ռուզաննա Թորոսյանի վերաբերյալ 2011 թվականի հուլիսի 1-ի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է «երեխայի լավագույն շահ» հասկացությանը ամուսինների ամուսնալուծությունից հետո ծնողներից մեկի մոտ երեխայի ապրելու վերաբերյալ համաձայնության բացակայության հարաբերության շրջանակում: Դատարանը սահմանել է, որ համաձայնության բացակայության դեպքում դատարանը հարցը պետք է լուծի՝ «առաջնորդվելով երեխայի լավագույն շահերով», ըստ որի տարբեր երկրներում բնակվող ծնողների երեխայի ապրելու վայրը որոշելիս դատարանը պետք է հաշվի ծնողների կողմից նախապես որոշված երեխայի բնակության վայրը, երեխայի տարիքը, կրթության վայրը, համապատասխան երկրի և այդտեղ բնակվող ծնողի հետ երեխայի կապվածությունը հիմնավորող այլ հանգամանքներ, ինչպես նաև երեխայի ապրելու վայրի պարբերաբար փոփոխության հնարավոր բացասական հետևանքները երեխայի հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման և դաստիարակության վրա: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը որոշել է, որ տվյալ դեպքում առաջին ատյանի դատարանը չէր կարող երեխայի ապրելու վայրը որոշել՝ առաջնորդվելով երեխայի խնամքին և դաստիարակությանը մասնակցելու միայն ծնողներից մեկի իրավունքի ապահովման անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու երեխայի լավագույն շահը:

Անի Մարտիրոսյանի վերաբերյալ 2012 թվականի մարտի 23-ի թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ ստորադաս ատյանները «երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը, դատարանները պետք է հաշվի առնեն

երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը

(ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն)»¹⁹:

Վճռաբեկ դատարանի նշված որոշումներով ըստ էության փորձ է արվել ապահովել «երեխայի լավագույն շահ» կոնվենցիոն սկզբունքի միասնական կիրառությունը կոնկրետ իրավահարաբերության նկատմամբ, այն է՝ երեխայի բնակության վայրը որոշելիս: Դա հենց այն մոտեցումն է, որը համապատասխանում է Կոմիտեի թիվ 14 ԵՄ-ին: Վճռաբեկ դատարանի այդ մոտեցումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական չափանիշներից²⁰:

Ստորադաս ատյանները «երեխայի լավագույն շահ» հասկացության մեկնաբանության առնչությամբ նույնպես զարգացրել են որոշակի դատական պրակտիկա: Օրինակ՝ ամուսնալուծության հարցերով, ալիմենտի բռնագանձման ու վճարման չափը, երեխայի բնակության վայրը և տեսակցության կարգը որոշելու գործերով «երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառության պրակտիկա: Այդուհանդերձ, դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավորները թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության սկզբունքները համակարգված կերպով չեն կիրառում,

այսինքն բացակայում է միասնական դատական պրակտիկա, թե ինչպես պետք է որոշել երեխայի լավագույն շահը տվյալ հանգամանքների ներքո: Դա պայմանավորված է, ի թիվս այլ հանգամանքների, նաև ուղեցուցային փաստաթղթերի, կամ այսպես կոչված «փափուկ օրենքների» բացակայությամբ:

Վարչական արդարադատությունը երեխայի լավագույն շահ սկզբունքը առավել նվազ և պահպանողական կիրառություն ունի: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008-2016 թվականների ընթացքում դատարանների կողմից վարչական դատավարություն իրականացնելիս այս սկզբունքը որոշակի կիրառություն է ստացել այն գործերով, որոնք կապված են որդեգրման, տեսակցության, ալիմենտի չափի, երեխայի խնամքի ու անվտանգության վերաբերյալ վարչական մարմինների ակտերի կամ դատական ակտերի կատարման հետ: Այդուհանդերձ, դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչական արդարադատության շրջանակում առավել զսպված է կիրառվել «երեխայի լավագույն շահ» սկզբունքը: Այսպիսի իրավիճակն ուղղակիորեն կապված է երեխայի իրավունքների առնչությամբ

19 Տե՛ս նաև Սելվ դը չիլդրեն, «Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան» 2015թվական, էջ 38. <https://bit.ly/2LrDDR7>:

20 Օրինակ՝ երեխայի լավագույն շահը գնահատելու համար ՄԻԵԴ զարգացրած չափանիշները (տե՛ս Կ.Շ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 4547/10, կետ 103:

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի թույլ զարգացած վարչարարության հետ:

Քրեական դատավարության ոլորտի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «երեխայի լավագույն շահ» սկզբունքը այստեղ լայն կիրառություն չունի: Կարելի է առանձնացնել միայն մի քանի դատական ակտ, որոնցում անդրադարձ է կատարված այդ սկզբունքին անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ այն էլ նեղ մեկնաբանությամբ և ոչ լիարժեք կիրառությամբ:

3) «ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

«Դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 10.03.2016 թվականի որոշման մեջ սահմանվել է «երեխայի լավագույն շահ» սկզբունքը: Այնուհետև, «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կա-

ռավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N-1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշման մեջ նույնպես ամրագրվեց երեխայի լավագույն շահը՝ որպես սկզբունք: Ընդ որում, ըստ այդ փաստաթղթի, միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ բացառվում է իր կենսաբանական ընտանիքից երեխային երկարաժամկետ բաժանելը: Ի հավելումն, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով երեխային միայն ժամանակավորապես կարելի է բաժանել կենսաբանական ընտանիքից, եթե այդ պայմաններն ակնհայտորեն սպառնում են նրա կյանքին, ֆիզիկական և հոգեկան առողջությանը: Այսինքն՝ հիմքում ընկած է երեխայի լավագույն շահը:

«Երեխայի լավագույն շահ» սկզբունքը ներառվել է երեխայի իրավունքների զարգացման ազգային ռազմավարական ծրագրում: 13.07.2017 թվականի թիվ 30 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և ծրագրի իրականացման միջո-

ցառումների ժամանակացույցին»²¹: Ծրագրում ռազմավարական հիմնական սկզբունքների շարքում, ի թիվս երեխաների տրամադրվող ծառայությունների **մատչելիության**, երեխաների **մասնակցության** ապահովման, սեռի հատկանիշով պայմանավորված **խտրականության** բացառման և այլ սկզբունքների, «երեխայի լավագույն շահը ճանաչելը» առաջին անգամ սահմանվել է որպես ծրագրի ռազմավարական սկզբունք: Նախկին երեք ծրագրերում այս իրավունքը ծրագրի շրջանակներում չի սահմանվել²²: 2015 թվականի օգոստոսի 6-ին ընդունվել է «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման» ռազմավարությունը, որի հիմնական սկզբունքների շարքում նույնպես տեղ է գտել «երեխայի շահերի առաջնահերթությունը»²³:

«Արդարադատության նախա-

րարության կազմում գործող *Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը* 2017 թվականին հրապարակեց «Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույց»²⁴, որի նպատակն է ապահովել երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության միասնական մեկնաբանումը, իրազեկել երեխաներին, ծնողներին ու տվյալներ մշակողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին և բարձրացնել երեխաների անձնական տվյալների պաշտպանության մակարդակը: Ուղեցույցը ներկայացնում է երեխաների անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները, անձնական տվյալների պաշտպանության ոլորտում երեխաների իրավունքները և տվյալներ մշակողների պարտականությունները, երեխաների անձնական տվյալների մշակման առանձ-

21 Տես Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի 10-րդ կետի 1-ին մասը:

22 Առաջին ռազմավարական ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 1745-Ն որոշմամբ, որի նպատակն էր երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի ստեղծումը՝ համայնքային, մարզային և հանրապետական կառուցվածքներով: Երկրորդ ռազմավարական ծրագիրն ընդունվեց Կառավարության 2006 թվականի հունվարի 1-ի N 206-Ն որոշմամբ, որով հաստատվեց կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը: Երրորդ ռազմավարական ծրագիրը հաստատվեց Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու» N 1694-Ն որոշմամբ:

23 ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի արձանագրային որոշում N 37 <http://www.irtek.am/views/act.aspx?aid=81848>: Տես Բաժին 5, կետ 2:

24 Հասանելի է հետևյալ հղումով. http://justice.am/storage/uploads/001.Ughecuyc-erexaneri_andznakan_tvyalner.pdf:

նահատկությունները ուսումնական հաստատություններում, համացանցում և զանգվածային լրատվության միջոցներով և երեխաների անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման համար նախատեսված պատասխանատվության հիմքերը և տեսակները: Ուղեցույցում երեխաների անձնական տվյալների պաշտպանության հինգ հիմնարար սկզբունքներից մեկը սահմանված է երեխաների լավագույն շահի սկզբունքը:

Մինչ ուղեցույցի ընդունումը գործակալությունը նույնպես ուշադրություն է դարձրել երեխայի իրավունքների պաշտպանության հարցերին կոնկրետ գործերով որոշում կայացնելիս: Մասնավորապես, 2016 թվականի մարտի 21-ին գործակալությունն ընդունեց որոշում (խորհրդատվական որոշում ԱՏՊԽ-001/16)²⁵ առցանց լրատվամիջոցի կողմից մի հրապարակման մեջ անչափահասների անձնական տվյալների (գիշերօթիկ հաստատության սաների անունները, ազգանունները, տարիքը, հաստատության անունը, ինչպես նաև լուսանկարներ, որոնցում երևում են երեխաները) հրապարակման վերաբերյալ: Գործակալությունն որոշումը հիմնավորեց երեխայի լավագույն շահի սկզբունքով (ըստ որի՝ անձը, ով դեռևս չի հասել ֆիզիկական եւ հոգեբանական հասունության, ավե-

լի շատ պաշտպանության կարիք ունի, քան մյուսները) և սահմանեց, որ տվյալ հրապարակման մեջ առկա չի եղել երեխայի լավագույն շահից բխող անհրաժեշտ գործողություն, քանի որ երեխաների անձնական տվյալների հրապարակումը միտված չի եղել երեխայի սոցիալական, հոգևոր եւ բարոյական բարեկեցությանը, ինչպես նաև նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն, երեխային պաշտպանելուն: Գործակալությունը նաև եզրակացրեց, որ համացանցում հայտնված և որոնողական համակարգերի միջոցով մշտապես հասանելի այդ տեղեկատվությունն ինքնին հակասում էր երեխայի լավագույն շահին և կարող էր խիստ բացասական ազդեցություն ունենալ երեխաների կյանքի հետագա զարգացման վրա:

Հաշվի առնելով վերը նկարագրված զարգացումները դատական նախադեպում և պրակտիկայում, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները կատարվում են:**

4) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

Խնամակալության և հոգաբարձության մարմինները և դրանց կից գործող հանձնաժողովները իրենց

25 Հասանելի է հետևյալ հղումով. http://www.foi.am/u_files/file/Save%20the%20Children_decision.pdf:

գործառույթներն իրականացնելիս և դրանց առումով կայացրած իրենց եզրակացություններում (օրինակ՝ տեսակցության խոչընդոտները վերացնելու, երեխային ծնողներից կամ խնամքին հանձնված այլ անձանցից վերցնելու, խնամակալներին կամ հոգաբարձուներին նշանակելու և երեխայի կյանքի կամ առողջության վերաբերյալ այլ որոշումներ կայացնելու համար եզրակացությունները) որպես կանոն վկայակոչում են «երեխայի լավագույն շահի» իրավունքը, դրա հիմքում ընկած ներպետական և միջազգային նորմերը (այդ թվում նաև «Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային» և «Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիային»)։ Այդուհանդերձ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման հղումները մեծամասամբ արվում են ձևական կերպով՝ առանց կիրառելու Կոնվենցիայի թիվ 14 ԸՄ սահմանված տարրերը, որոնցով էլ պետք է որոշվի տվյալ իրավիճակում երեխայի լավագույն շահի շրջանակը, առկայությունը կամ բացակայությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո։ Արդյունքում, եզրակացությունները հաճախ առաջարկում են ավանդական լուծումներ, օրինակ՝ հաշվի առնելով երեխայի ծնողի, այլ ոչ թե երեխայի շահը։

Իրավիճակ 2

Արամը (5 տարեկան) և Գայանեն (9 տարեկան) (*անունները փոխված են*) բնակվում են տատիկի և քեռու տանը։ Մայրը մահացել է սրտի հիվանդությունից։ Երեխաները հիշում են, թե ինչպես էր իրենց հայրը հաճախ բռնություն կիրառում իրենց մոր հանդեպ։ Այժմ երեխաները չեն շփվում հոր հետ, մինչդեռ հայրը պահանջում է վերադարձնել երեխաներին, որպեսզի բնակվեն իր հետ։ Նա դիմել է խնամակալության և հոգաբարձության համայնքային մարմնին։ Վերջինս, վկայակոչելով երեխաների լավագույն շահը, իր եզրակացության մեջ որոշել է երեխաներին ժամանակավորապես կացարան տեղավորել, որպեսզի հայրը հնարավորություն ունենա այցելել նրանց, և վերջիններիս հարաբերությունները կարգավորվեն։ Համայնքային մարմինը այդ եզրակացության հիման վրա կայացրել է որոշում երեխաների կացարանում տեղավորելու մասին, որպեսզի իրականացվի երեխաների շփումը իրենց հոր հետ՝ այդպիսով նաև հնարավորություն տալով երեխաներին հաղթահարել հոգեբանական ճնշվածությունը և վերականգնելով իրենց հարաբերությունը հոր հետ։ Խնամակալության մարմնի եզրակացության և վարչական մարմնի որոշման մեջ վերլուծություն չի կատարվել, թե արդյոք կացարանը երեխաների համար տվյալ պահին

լավագույն միջավայրն է՝ ի տարբերություն տատիկի ու քեռու ընտանեկան միջավայրից: Ավելին, թեև եզրակացության ու որոշման մեջ հղում է կատարվել երեխաների լավագույն շահերից, և նույնիսկ վկայակոչվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի որոշում, սակայն բացակայում է փաստերի, սկզբունքների վերլուծություն, հետևաբար, հղումները կատարվել են վերացական կերպով: Ընդ որում, որոշումը կայացվել է առանց երեխաների կարծիքը լսելու: Երբ երեխաներին ասել են կացարան տեղափոխելու որոշման մասին, նրանք արտասվել են ու ասել, որ չեն ցանկանում գնալ մանկատուն:

Վերը նշված օրինակում, բացի այն հանգամանքից, որ տեսականորեն ընտանիքում բռնության դեպքի առկայության պարագայում երեխայի լավագույն շահերից չի բխում նրա վերադարձը (առնվազն ժամանակավորապես) կենսաբանական ընտանիք, որը պետք է հստակորեն նշվեր, խնդիրը նաև այն է, որ վարչական մարմինը չի կիրառել նաև ընտանեկան օրենսգրքի և երեխայի իրավունքների մասին օրենքի դրույթները, որոնցում հստակորեն սահմանված են երեխայի այլընտրանքային խնամքի տեղավորման առաջնահերթությունները ըստ հերթականության, ըստ որի հաստատությունը դիտվում է որպես վերջին, ծայրահեղ միջոց: Վարչական ակտում չի նշվել, թե ինչու որևէ այլ, երեխաների համար առավել բարենպաստ համարվող ընտանեկան միջավայրում տեղավորելը տվյալ հանգամանքում չէր բխում երեխաների լավագույն շահերից, և ինչու էր հաստատությունը, տվյալ հանգամանքների ներքո, համարվել որպես նախընտրելի միջոց:

Հարցումները ցույց տվեցին, որ

խնամակալության մարմինները և հանձնաժողովի անդամները չունեն համապատասխան մասնագիտացում ու փորձ, չեն տիրապետում ուղղորդման մեխանիզմներին, չունեն մեթոդական գրականություն, օրինակ՝ ուղեցույցներ, որոշելու համար երեխայի լավագույն շահերը տվյալ հանգամանքների ներքո, կամ ձևաթղթեր, հարցաթերթիկներ, որոնք անհրաժեշտ են խնամակալության հանձնաժողովի անդամի կողմից հետազոտություն կատարելիս: 2017 թվականի հունվարի 31-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հաստատել է «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը», որը սահմանում է ուղեցույցներ առանց ծնողական խնամքի մնացած (ԱԾԽՄ) երեխաների հետ կապված մի շարք գործողությունների իրականացման վերաբերյալ, օրինակ՝ նրանց հայտնաբերման, հաշվառման, տեղավորման, խնամակալության և

հոգաբարձության, և ԽՀՄ այլ գործառույթների մասին: Այդուհանդերձ, ուղեցույցը թեև նշում է, որ երեխայի վերաբերյալ ցանկացած հարց քննելիս կամ որոշում կայացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի լավագույն շահը, սակայն չի տրամադրում մեթոդական ցուցումներ, թե ինչպես որոշել այն: Թեև Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն ստանում են ՀՀ մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից²⁶, սակայն միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել բազմաթիվ այլ գործոններ, որոնք ազդում են խնամակալության մարմինների աշխատանքի որակի վրա՝ դրանք որպես կանոն գործում են տեղական ինքնակառավարման մարմինների ներսում, անվճար, հասարակական հիմունքներով, չունեն համապատասխան ռեսուրսներ և ընթացակարգեր, և այդ պատճառով ՏԻՄ մարմինները որպես

կանոն օգտագործում են իրենց ներքին ռեսուրսը հանձնաժողովներ կազմավորելու համար, որի արդյունքում հանձնաժողովներում ներգրավված չեն երեխայի պաշտպանության ոլորտի վերապատրաստված և որակավորված մասնագետներ²⁷:

Այսպիսով, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները, որոշ բացառություններով, չեն կատարվում:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է «երեխայի օրինական շահեր» հասկացությունը փոխարինել «երեխայի լավագույն շահեր» հասկացությամբ և դրա հիմքում ընկած իրավունքով:
- «Երեխայի իրավունքների մասին» օրենքում «երեխայի լավագույն շահի» իրավունքին տրված է **նեղ սահմանում՝ սահմանափակվելով միայն ընտանեկան հարաբերությունների, մասնավորապես, միայն ծնողների հետ անձնական**

26 ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշում հնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164 Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, Հավելված 1, Կետ 5:

27 2017 թվականի դեկտեմբերին Մարդու իրավունքների պաշտպանը իրապարակել է արտահերթ զեկույց խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների գործունեության մասին: Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.ombuds.am/images/Final.pdf>:

փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավահարաբերության շրջանակով: Անհրաժեշտ է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը սահմանել այնպես, որ դա կիրառելի լինի երեխայի շահերին վերաբերող բոլոր հարաբերությունների նկատմամբ:

- Քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծում «երեխայի լավագույն շահ» հասկացությունը անհրաժեշտ է կիրառելի դարձնել բոլոր վարույթների նկատմամբ, որոնցում ներգրավված է երեխա, այլ ոչ թե միայն ընտանեկան վեճերով (հոդված 189) և որդեգրման գործերով վարույթների նկատմամբ (հոդված 230):
- Վարչական մարմինների և դատարանների կողմից իրականացվող բոլոր վարույթներում (քաղաքացիական, վարչական կամ քրեական) «երեխայի լավագույն շահ» սկզբունքը պետք է կիրառել այն տարրերի ուղեկցությամբ, որոնք նշված են Կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության մեջ (կետ 52-79): Ընդհանուր մեկնաբանության այս տարրերը պետք է ներառվեն Ոստիկանության ակադեմիայի և Փաստաբանության դպրոցի անչափահասների արդարադատության վերաբերյալ ուսումնական առկա և հեռավար ծրագրերում, ինչպես նաև սոցիալական աշխատողների, կրթության և առողջապահության ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրերում:

և հոգաբարձության մարմինների համար պետք է կազմվեն մեթոդական ուղեցույցներ՝ «երեխայի լավագույն շահ» սկզբունքի կիրառության մասին՝ ըստ թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության ուղեցույցի,

- Ինստիտուցիոնալ և հոգաբարձության մարմինների և մարզպետարաններում գործող ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների համապատասխան աշխատակիցների, համայնքային սոցիալական աշխատողների, դեպք վարողների, ընտանեկան հաշտարարների համար անհրաժեշտ է անցկացնել շարունակական դասընթացներ «երեխայի լավագույն շահ» հասկացության վերաբերյալ՝ թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության հիմքով:

3. ԵՐԵՒԱՅԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐՎՈՒՆՔԸ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ թեև երեխայի լավագույն շահի իրավունքը ներառված է մի շարք օրենքներում, սակայն տարբեր դատական և ոչ դատական վարույթներում երեխաների տեսակետները

իրականում կանոնավոր կերպով հաշվի չեն առնվում: Կոմիտեն նաև մտահոգիչ է համարել, որ մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ բժշկական միջամտություն կատարելու համար համաձայնությունը տալիս է միայն երեխայի օրինական ներկայացուցիչը: Կոմիտեն առաջարկել է միջոցներ ձեռնարկել, որ երեխայի լաված լինելու իրավունքը կիրառվի Կոմիտեի թիվ 12 Ընդհանուր մեկնաբանությանը համահունչ՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխան ուղղված այդ իրավունքի պաշտպանությունը կատարելագործելու ուղղությամբ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 23)՝

- իրականացնել **օրենսդրական և քաղաքականության** միջոցառումներ՝ խթանելով և օժանդակելով երեխային առնչվող ցանկացած հարցի կապակցությամբ երեխայի տեսակետների հարգումն **ընտանիքում, դպրոցներում, խնամքի հաստատություններում և դատարաններում**.
- ապահովել, որ բժշկական միջամտությունների դեպքում հաշվի առնվեն երեխաների իրավունքների տեսակետները՝ ինչպես նախանշված է Կոմիտեի թիվ 15 ընդհանուր մեկնաբանության մեջ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երեխայի լաված լինելու իրավունքի ներառման նպատակով նույնպես կատարվել են գործուն քայլեր, այդ իմաստով հատկանշական է սահմա-

նադրական բարեփոխումը: Այդուհանդերձ, օրենսդրության մեջ դեռ պահպանվել է հիմնական մոտեցումը, ըստ որի երեխայի լաված լինելու իրավունքը սահմանափակված է տարբեր տարիքային շեմերով, որի արդյունքում առանց տարիքային սահմանափակման երեխայի տեսակետը հաշվի առնելու կոնվենցիոն պահանջը դեռ լայն կիրառություն չունի պրակտիկայում:

1) ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՂ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ՈԼՈՐՏՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Ինչպես երեխայի լավագույն շահի հայեցակարգին, այնպես էլ երեխայի լաված լինելու իրավունքին տրվեց սահմանադրաիրավական կարգավիճակ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 37-րդ հոդվածով, որի առաջին մասի համաձայն՝ «*երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում*»: Այս դրույթն ուղղակիորեն բխում է Կոնվենցիայի 12-րդ հոդվածից և Կոմիտեի Թիվ 12 ԸՄ-ով սահմանված այդ

հողվածի իմաստից²⁸: Իր հերթին, վերևում վկայակոչված ՍԴՈ-919 որոշման մեջ Սահմանադրական դատարանը Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված երեխայի լաված լինելու իրավունքը սահմանող դրույթի սահմանադրականությունը քննության է առել «երեխայի լավագույն շահ» հասկացության համակցությամբ՝ որոշելով, որ եթե դատարանի գնահատմամբ երեխայի կարծիքը չի համընկնում երեխայի շահերին, ապա դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի շահերով, այն է՝ երեխայի կարծիքը գնահատել երեխայի շահին ծառայող այլ գործոնների լույսի ներքո, որոնք շարադրված են Ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում: Այսինքն՝ ընտանեկան հարաբերություններում երեխայի լաված լինելու իրավունքի իրացումը, ըստ Սահմանադրական դատարանի, պետք է ապահովվի բոլոր դեպքերում, սակայն որոշումը պետք է կայացվի երեխայի շահին գերապատվություն տալով: Նման սահմանադրական կարգավորումը լիովին համահունչ է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ և 12-րդ հոդվածների առարկային ու նպատակին: Ավելին, երեխայի լաված լինելու իրավունքին սահմանադրաիրավական կարգավիճակ տալը նպաստում է այս իրավունքի հորիզոնական և ուղղահայաց կիրառությանը թեօրենսդ-

րության մեջ, թե՛ պրակտիկայում:

Հատկանշական է Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1333 որոշմամբ երեխայի լաված լինելու իրավունքի մեկնաբանությունը քրեական արդարադատության շրջանակում: Դրանով վկայակոչելով Սահմանադրության 37-րդ հոդվածը և Կոնվենցիայի 3-րդ հոդված՝ Սահմանադրական դատարանն, ըստ էության, *mutatis mutandis* սահմանեց, որ «իրավակիր առարկայի կայուն չլինելը և փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, որը չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Կոնկրետ քրեական դատավարության իմաստով դատարանը սահմանեց, որ վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել»:

Հետևաբար, վերանայման են ենթակա օրենսդրական բոլոր այն դրույթները, որոնք երեխայի լաված լինելու իրավունքը կախվածության մեջ են դնում տարիքից, այլ ոչ թե հասունության աստիճանից:

Սահմանադրական դատարանի վերը նշված մեկնաբանությունները խիստ կարևոր ազդեցություն կարող են ունենալ երեխայի լաված լինելու իրավունքը դատարաններում, ինչ-

28 Տե՛ս Ընդհանուր մեկնաբանության 26-31 կետերը:

պես նաև այլ միջավայրում՝ ընտանիքում, դպրոցներում, խնամքի հաստատություններում հարգելու, այդ ուղղությամբ իրավական և հասարակական մշակույթ ձևավորելու հարցում: Այդուհանդերձ, օրենքներում դեռ շարունակում են պահպանվել երեխայի լաված լինելու իրավունքի տարիքային սահմանափակումներ: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածը մի կողմից սահմանում է երեխայի լաված լինելու իրավունքը առանց տարիքային սահմանափակման (1-ին մաս), իսկ մյուս կողմից որոշակի հանգամանքներում սահմանում է տարիքային սահմանափակում՝ մինչև տասը տարին լրանալը (2-րդ մաս)՝ «կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում»: Նույն հոդվածի երրորդ մասը նույնպես սահմանում է տարիքային սահմանափակում, սահմանելով, որ «օրենսգրքով նախատեսված դեպքերում **փաստը** փարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել **միայն նրա համաձայնությամբ**»:

Նույն մոտեցումն առկա է նաև Ընտանեկան օրենսգրքի 57-րդ հոդվածում (Ծնողական իրավունքների պաշտպանությունը), որի առաջին կե-

տի երկրորդ պարբերությունում նշված է. «*հաշվի առնելով **փաստը** փարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը **չի բխում երեխայի շահերից***»: Ընդ որում, նշված սահմանափակումների հիմքերը երբեմն ձևակերպված են լայն ու անորոշ կերպ, (օրինակ՝ «որոշակի միջոցառումներին մասնակցելը», «օրենքով նախատեսված այլ դեպքերում»), «օրենսգրքով նախատեսված դեպքերում», ինչը բարձրացնում է իրավական անորոշության խնդիր: Բացի այդ, 44-րդ և 57-րդ հոդվածների կարգավորումները հակասության մեջ են գտնվում Կոնվենցիայի 3-րդ և 12-րդ հոդվածի հետ, որոնք երեխայի արտահայտվելու իրավունքը սահմանում են «այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային» (հոդված 12), իսկ սահմանափակումը պայմանավորում են ոչ թե տարիքային շեմով, այլ երեխայի լավագույն շահով (3-րդ հոդվածի 1-ին մաս, ըստ որի «երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում ... առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»: Հետևաբար, նշված հոդվածները պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն Սահմանադրության 37-րդ և Կոնվենցիայի 12-րդ հոդվածներին՝ վերացնելով տարիքային սահմանափակումները:

Ողջունելի է, որ «Երեխայի իրա-

վունքների մասին» ՀՀ օրենքը չի սահմանում տարիքային սահմանափակում երեխայի լսված լինելու իրավունքի հարցում: Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:

Ընտանեկան գործերով դատական պրակտիկայում ընդհանուր առմամբ ձևավորված է երեխաների կարծիքը

հաշվի առնելու դատական մշակույթ: Նման գործերով երեխաների կարծիքը կարող է վճռորոշ լինել դատավորի կողմից որոշում կայացնելու համար՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Երբեմն դատավորները դիմում են դատավարական պրոակտիվ եղանակների՝ երեխայի իրական տեսակետը պարզելու համար, քանի որ տարածված են դեպքերը, երբ, օրինակ, մերձավոր ազգականներն ուղղորդում են երեխաներին և ազդում նրանց կարծիքի ձևավորման վրա:

Իրավիճակ 3

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարաններում խնամակալության մարմնի դիմումի համաձայն քննվում էր 13 տարեկան աղջկա նկատմամբ հոր ծնողական իրավունքները սահմանափակելու դատական գործը: Խնամակալության մարմինը, ուստիկանությունից ստացված տվյալների և իր կողմից հավաքած փաստերի հիման վրա եզրահանգել է, որ երեխան բնակվում էր հոր հետ իրենց սեփական տանը, որը երեխայի համար ոչ բարենպաստ միջավայր էր: Թեև բացակայում էին փաստեր աղջկա նկատմամբ հոր կողմից բռնության մասին, սակայն հայրը ընդհանուր առմամբ դրսևորել է կասկածելի վարքագիծ, հաճախ է օգտագործել ալկոհոլ, ու տանը հաճախ է կազմակերպել հավաքներ, որի ընթացքում հաճախ հնչել են հայիոյանքներ, տանը հակասանիտարական վիճակ է եղել: Հանձնաժողովի եզրահանգման մեջ նշվել է, որ աղջիկը բազմիցս հայտարարել է, որ ցանկանում է ապրել հոր հետ և որ հայրը իրեն լավ է վերաբերվում: Աղջիկը նույնը հայտարարել է դատարանի դահլիճում դատավորի այն հարցին, թե արդյոք ցանկանում է ապրել հոր հետ իրենց տանը: Սակայն դատավորը աղջկա վարքագծում նկատել է իր տարիքին անհամապատասխան անկեղծության բացակայություն: Դատավորը հրահանգել է բոլորին դուրս գալ դատարանի դահլիճից, որից հետո դիմել է Ա-ին ու ասել, որ ինչ-որ հիմա կխոսեն, միայն նա, դատավորը և նիստերի քարտուղար «մորաքույրը» կիմանա: Խնդրել է ասել,

թե արդյոք իր մոտ ամեն ինչ լավ է, և արդյոք հայրը իրեն չի նեղացրել: Աղջիկը այդ պահին սկսել է լաց լինել ու ասել. «բոլորն էլ այդպես են ասում, բայց հեղու պապան իմանում ա ու պատժում»: Դատավորի անկեղծ զրույցը երեխայի մոտ առաջացրել է վստահություն, և նա պատմել է ողջ ճշմարտությունը: Երեխայի համար իր կարծիքն ազատորեն արտահայտելու բարենպաստ միջավայր ու հնարավորություն ստեղծելով դատավորը ստացել է արժեքավոր տեղեկություն, ապացույց և կայացրել երեխայի լավագույն շահից բխող որոշում: Դատավորը որոշել է սահմանափակել հոր ծնողական իրավունքը և երեխային ժամանակավոր տեղավորել Հայ օգնության ֆոնդի (**ՀՕՖ**) երեխաների աջակցության կենտրոնում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում²⁹ առաջին անգամ քաղաքացիական դատավարությունում սահմանվել է երեխայի լաված լինելու իրավունքը: Նախագծի 3-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական դատավարությունում դատավարական իրավունակության և գործունակության հիմքերը: Ըստ այդ դրույթի՝ օրենքով նախատեսված դեպքերում անչափահասները կարող են դատարանում ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը, և օրենքով նախատեսված դեպքերում գործի քննության ընթացքում նրանք ունեն իրենց շահերին առնչվող հարցերի վերաբերյալ լավելու իրավունք: Թեև ողջունելի է, որ երեխայի լաված լինելու իրավունքը հստակորեն սահմանվում է նախագծի ընդհանուր մասում՝ որպես դատավարության հիմնարար սկզբունք, սակայն մյուս

կողմից մտահոգիչ է, որ այս իրավունքը նախատեսվում է տրամադրել, հետևաբար՝ նաև սահմանափակել, «օրենքով» նախատեսված դեպքերում: Նման մոտեցումը հակասում է Կոնվենցիայի 12-րդ հոդվածին, ըստ որի՝ լաված լինելու իրավունքը անհրաժեշտ է ապահովել «այն բոլոր³⁰ դեպքերում, որոնք վերաբերում են երեխային» (մաս 1-ին) և այդ նպատակով «հնարավորություն է տրվում իրեն վերաբերող **ցանկացած**³¹ դատական ... քննության ժամանակ ... ունկնդրվել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով» (մաս 2):

ՀՀ ընտանեկան օրենսգրքով (հոդված 5) ընդլայնվել է սեփական կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը՝ հնարավորություն է տրվել նաև 10 տարին չլրացած երեխայի կարծիքը հաշվի առնել, ըստ վերջի-

29 Հասանելի է հետևյալ հղումով. http://parliament.am/draft_docs6/K-059.pdf:

30 Ընդգծումը մերն է:

31 Ընդգծումը մերն է:

նիս տարիքի և հասունության մակարդակի: Նախագծով առաջարկվում է օրենսգրքի 44-րդ հոդվածը լրացնել ու փոփոխել հետևյալ բովանդակությամբ՝ «1.1.Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխայի կարծիքը լսելիս իրավասու մարմինը ներգրավում է մանկական հոգեբան կամ մանկավարժ, ինչպես նաև սոցիալական աշխատող»: Համանման փոփոխություն է առաջարկվել նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, որում անչափահաս մեղադրյալի հարցաքննությունն առաջարկվում է կատարել ոչ միայն մանկավարժի ներկայությամբ, ինչպես ներկայում, այլ նաև հոգեբանի մասնակցությամբ:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ կատարվել են:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրավակիրառ պրակտիկայում, այսինքն՝ վարչական վարույթներում, քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության շրջանակներում իրավակիրառողները պետք է առաջնորդվեն Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1333 որոշման մեջ արտա-

հայտված իրավադիրքորոշմամբ, համաձայն որի, իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լաված լինելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով:

- Նույն մոտեցմամբ պետք է առաջնորդվեն երեխայի շահերին առնչվող ցանկացած որոշում կայացնելիս նաև այլ միջավայրերում՝ ընտանիքում, դպրոցում, խնամքի հաստատություններում: Կոնվենցիոն այս սկզբունքի մասին պետք է լայնորեն իրազեկել վերը նշված հաստատություններում:
- ՀՀ ընտանեկան օրենսգրքում անհրաժեշտ է վերացնել երեխայի լաված լինելու իրավունքի տարիքային սահմանափակումը, որը սահմանված է 44-րդ հոդվածի 2-րդ մասում և 57-րդ հոդվածում: Այդ իմաստով ողջունելի է «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածը, որը երեխայի լաված լինելու իրավունքը սահմանելիս այդ իրավունքը չի սահմանափակում տարիքային շեմով:
- Երեխայի լաված լինելու և նրա կարծիքը հաշվի առնելու իրավունքների մասին կոնվենցիոն սկզբունքները անհրաժեշտ է ներառել Արդարադատության ակադեմիայի՝ անչափահասների արդարադատության ուսումնական ծրագրում, Փաստաբանների պալատի համապատասխան ուսումնական ծրագրում:

- Երեխայի լաված լինելու իրավունքի և դրա կոնվենցիոն մեկնաբանության մասին անհրաժեշտ է իրազեկել համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների աշխատակիցներին, մարզպետարաններում գործող ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատակիցներին, մանկավարժներին, հոգեբաններին, սոցիալական աշխատողներին և դեպք վարողներին:

2) ԵՐԵՒԱՅԻ ԼՍՎԱԾ ԼԻՆԵ-ԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒ- ԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ բժշկական միջամտություն կատարելու համար համաձայնությունը տալիս է միայն երեխայի օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ չի հարգվում մինչև 18 տարեկան երեխայի լաված լինելու իրավունքը: Այս կարգավորումը սահմանված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով: Կոմիտեն առաջարկել է ապահովել, որ երեխային հնարավորություն տրվի արտահայտել իր կարծիքը բժշկական միջամտության դեպքում, ինչպես նախանշված

է Հանձնաժողովի թիվ 15 ընդհանուր մեկնաբանության (CRC/C/GC/15) մեջ:

Կոմիտեի այս առաջարկը չի կատարվել. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը շարունակում է ուժի մեջ մնալ սույն զեկույցը կազմելու պահի դրությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անհրաժեշտ է վերացնել Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենքի 8-րդ հոդվածում սահմանված տարիքային սահմանափակումը, ըստ որի, մինչև 18 տարեկան երեխայի նկատմամբ բժշկական սպասարկման միջամտություն կատարելու համար համաձայնությունը տալիս է միայն երեխայի օրինական ներկայացուցիչը:
- Նույնանման լրացում և փոփոխություն է պետք կատարել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում, նախատեսելով առանց ծնողների համաձայնության իրավական օգնություն/խորհրդատվություն ստանալու երեխայի իրավունքը, օրինակ՝ այն դեպքում, երբ երեխան բռնության է ենթարկվել ընտանիքում: Ներկայում այն նախատեսված է միայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, կամ նրանց թվին պատկանող անձանց համար:

Գ. ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՒԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ

(ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 19-ՐԴ ՀՈԴՎԱԾ,
37-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ (Ա) ԵՆԹԱԿԵՏ ԵՎ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

1. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏԻԺԸ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել այն տեղեկությունների կապակցությամբ, որ փակ և մասնակի փակ հաստատություններում, մասնավորապես՝ Վանաձորի մանկատանը և Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնում (թիվ 1 գիշերօթիկ դպրոցում) երեխաները ենթարկվում են վատ վերաբերմունքի և բռնության: Չնայած ՀՀ ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի Հայաստանի Հանրապետության օրենքը պարունակում են ֆիզիկական պատիժն արգելող դրույթներ, սակայն այդ դրույթների կիրարկման մեխանիզմներ չկան և ՀՀ օրենսդրությամբ չեն նախատեսվում պատժամիջոցներ խախտումների դեպքերի համար:

Կոմիտեն առաջարկել է (կետ 25)՝

- հրատապ միջոցներ ձեռնարկել փակ և մասնակի փակ հաստատություններում, մասնավորապես՝ Վանաձորի մանկատանը և Վա-

նաձորի երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնում (թիվ 1 գիշերօթիկ դպրոցում) բռնության առանձին դեպքերը քննելու, ինչպես նաև՝ քրեական հետապնդման և մեղավորներին պատժի ենթարկելու ուղղությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2016 թվականին «Փոքր Միեր» կրթահամալիր իրականացրած այցի ընթացքում ներկայացվել են տեղեկություններ տնօրինության կողմից աշակերտներին վիրավորելու, նրանց վերաբերյալ բացասական բնութագրեր ներկայացնելու սպառնալիքների վերաբերյալ: Բացի այդ, կրթահամալիրի սաներն իրենց հետ առանձնագրույցների ընթացքում հաստատել են նաև այն, որ իրենց ապտակել են կարգապահական բնույթի խախտումներ թույլ տալու համար³²:

2013 թվականից մինչև 2017 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, ըստ ՀՀ ԱՍՀՆ պարզաբանման՝ հաստատություններում տեղի է ունեցել երեխաների նկատմամբ

32 «Փոքր Միեր» կրթահամալիրի վերակազմակերպման հետ կապված՝ տե՛ս սույն զեկույցը, էջ 152:

բռնության 2 դեպք: Մասնավորապես. «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում երեխաների նկատմամբ բռնության դեպք է արձանագրվել 2014 թվականին, որի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ այն բանի համար, որ ՊՈԱԿ-ի աշխատակիցն ուսումնական հաստատությունում իր կողմից կազմակերպված տողանների ընթացքում, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացի այլ փուլերում՝ 2010-2014 թվականների ընթացքում, միասնական հանցավոր մտադրությամբ, պարբերաբար, տարբեր պատճառաբանություններով բռնություն է գործադրել հաստատության՝ իր բնորոշմամբ «կարգազանց» ավելի քան մեկ տասնյակ սանների նկատմամբ, ինչով էլ նրանց դիտավորությամբ պատճառել է հոգեկան ուժեղ տառապանք³³: Երկրորդ դեպքում՝ 2016 թվականի մայիսին Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում երեխայի նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ դեպք է արձանագրվել, որի վերաբերյալ հետազայում քրեական գործ չի հարուցվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Նշված խիստ փոքր ցուցանիշը, թերևս, կարող է պայմանավորված լի-

նել առնվազն հետևյալ գործոններով՝

1. բռնության մասին իրազեկվածության ու ընկալումների յուրահատկություններով. ոլորտում իրականացված հետազոտություններից մեկի՝ (որն իրականացվել է հինգ ֆոկուս խմբերի միջոցով մանկավարժների շրջանում) ի տարբերություն Երևանի մանկավարժների, մարզերի մանկավարժները հակված չեն որպես բռնություն դիտարկել իրենց կողմից ձեռնարկվող մի շարք բռնի գործողություններ (ականջ քաշել, սաստել ֆիզիկապես և այլն): Ավելին, նրանք կարծում են, որ նման սահմանումները դրսից են պարտադրվում մեր հասարակությանը և հակասում են մեր ազգային հոգեկերտվածքին: Շատերը նշում են, որ ավանդական կրթության և դաստիարակության մեթոդները՝ իրենց պատժամիջոցների համակարգով, շատ ավելի արդյունավետ են եղել, քան այն ինչ այսօր պահանջում են մանկավարժներից³⁴: Այս իմաստով, ինչպես նման դեպքերի արձանագրումները, այնպես էլ դրանց նկատմամբ համապատասխան իրավական արձագանքի փոքր թվաքանակը կարող է պայմանավորված լինել հենց բռնության ընկալումներով և դրանց նկատմամբ

33 Հիմք՝ ԿԳ2/0060/01/15 քրեական գործ. <https://bit.ly/2saeVNB>

34 Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն // Հետազոտ. աշխատ. խումբ.- Եր.: Լուսաբաց, 2014 թվական 116 էջ:

դրսևորված անտարբերությամբ.

2. ԱՍՀՆ մոնիթորինգի վարչությունում հատկապես բռնության դեպքերի նույնականացման ու մշտադիտարկման գործիքի և այդ գործիքի կիրառման հստակ պարբերականության բացակայություն.
3. հաստատություններում բռնության ցուցիչների, նման դեպքերի արձանագրման վիճակագրության ստեղծման և վերլուծությունների բացակայություն՝ ինչպես ԱՍՀՆ, այնպես էլ՝ Ազգային վիճակագրական ծառայության բազաներում:

ՀՀ կառավարությունը 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 51 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին» և «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգից բխող միջոցառումների ցանկին»: Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը մշակվել է՝ հիմք ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթները: Հայեցակարգը նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ-ի կոնվենցիաների, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ

փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը: Հայեցակարգի նպատակն է սահմանել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանը, կանխարգելմանը և բռնության ենթարկված երեխայի, ինչպես նաև բռնություն գործադրող անձի վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել և 2015 թվականի հունիսի 6-ից ուժի մեջ է մտել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը: Օրենքում, որպես մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում է սահմանված նաև շահագործման նպատակով երեխային կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը:

ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-Ն որոշմամբ սահմանվել են երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների պաշտպանության համապատաս-

խան չափորոշիչներ, որոնց համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է երեխայի պաշտպանությունը հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, վատ վերաբերմունքից, աշխատանքի շահագործումից, հանցագործություններից, անուշադրությունից և անարդարությունից, առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից:

Ընտանեկան բռնության երևույթի կանխարգելման նպատակով ՀՀ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որում սահմանվել է «ընտանեկան բռնություն» եզրույթը, ըստ որի՝ ընտանեկան բռնություն է համարվում ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ, այդ թվում երեխայի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառումը կամ տնտեսական միջոցներից զրկումը: Օրենքով կարգավորվել են նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց, այդ թվում

երեխաներին սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները: 2015 թվականին ընդունվել են օրենքի կիրարկումն ապահովող մի շարք փաստաթղթեր, մասնավորապես՝

- 2015 թվականի սեպտեմբերի 10-ին հաստատվել է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանելու մասին ՀՀ կառավարության N 1069-Ն որոշումը³⁵, ըստ որի կարգավորում են ընտանեկան բռնության ենթարկված անձանց, այդ թվում երեխաներին կացարան (որպես ժամանակավոր օթևան) տրամադրելու, ինչպես նաև նրանց սոցիալական խնդիրներին լուծումներ գտնելու հետ կապված հարաբերությունները:
- 2015 թվականի հոկտեմբերի 20-ին հաստատվել է «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 144-Ա/1 հրամանը, իսկ 2015 թվականի դեկտեմբերի 10-ին՝ «Ընտանեկան

35 Ամբողջական անվանումը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 614-Ն ու 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ լրացում ու փոփոխություն և 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1516-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1069-Ն որոշումը:

բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 177-Ա/1 հրամանը: Այս փաստաթղթերով կանոնակարգվել է ընտանեկան բռնության ենթարկված անձանց նույնացման, ուղղորդման և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացը, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց նույնացում իրականացնող մարմիններին տրամադրվել է համապատասխան մեթոդաբանություն:

- 2015 թվականի սեպտեմբերի 10-ին հաստատվել է նաև ՀՀ կառավարության «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշումը, ըստ որի՝ կարգավորվում են սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում համագործակցության կողմերի, համագործակցության շրջանակներում կողմերի իրավունքների ու պարտականությունների, միջգերատեսչական համագործակցության ձևերի ու կարգի, համագործակցող կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների ծավալի, ժամկետի և ձևի մասին պահանջների, խնդրահարույց

այն դեպքերի, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

Այսուհանդերձ, ՀՀ օրենսդրությունում, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում առկա են մի շարք խնդիրներ, որոնց արդյունքում հնարավոր չէ լիարժեքորեն պաշտպանել երեխային բռնությունից: Խնդիրներից մեկը վերաբերում է հատկապես ծնողի (կամ նրան փոխարինող անձի) կողմից երեխայի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված սահմանափակ պատասխանատվության տեսակներին և պատժատեսակներին, որոնք, որպես կանոն, ոչ միշտ են ապահովում պատժի նպատակների իրացումն ու հատկապես երեխայի հետագա պաշտպանվածությունը նույն ընտանիքում (օրինակ, ֆիզիկական բռնությունների դեպքում, բռնություն գործադրած ծնողի նկատմամբ կիրառվում է տուգանք պատժատեսակ, իսկ երեխան շարունակում է բնակվել նույն ծնողի հետ՝ նույն բնակարանում³⁶): Խնդիրն այսօր էլ ավելի արդիական է դառնում, մեր երկրում երեխաներին և ընտանիքներին հա-

36 Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիավարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԿԴ/0128/01/16/ քրեական գործով 06.12.2016 թ. դատավճի: Տե՛ս նաև Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՍԴ2/0066/01/16 քրեական գործով 2017 թ. վականի հունվարի 31-ի դատավճի:

մալիր ծառայություններ մատուցող համայնքահեն կառույցների սակավության և/կամ դրանց բացակայության պայմաններում:

Դրական գնահատելով այն փաստը, որ երեխաներին ծեծելու դեպքերի վերաբերյալ հաղորդումների հիման վրա հարուցվել են քրեական գործեր, և առկա են դատարանների կողմից կայացված մեղադրական դատավճիռներ՝ այդուհանդերձ, հարկ է նկատել, որ ծեծի համար իբրև պատիժ տուգանքի նշանակումն ու կիրառումը չեն ապահովում պետական միջամտության արդյունավետությունը թե՛ ընտանիքի սոցիալական խնդիրների, թե՛ երեխայի նկատմամբ բռնության հոգեբանական հետևանքների նվազեցման կամ վերացման առումով: Մասնավորապես, կայացված դատավճիռը ընտանիքում բռնության կանխարգելման, բռնության ենթարկված երեխայի վերականգնողական ծառայությունների և բռնություն գործադրած անձի վարքագծի շտկմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ չի նախատեսում: Ավելին, արդեն իսկ խոցելի վիճակում գտնվող ընտանիքի համար սահմանում է ֆինանսական պարտականություններ՝ էլ ավելի խորացնելով առկա լարվածությունն ու ճգնաժամը: Նման իրավիճակներում, արդյունավետ պատիժ չի կարող համարվել նույնիսկ տուգանքի՝

բազմակի անգամ ավելի կամ պակաս լինելը, քանի որ վճռի նման բնույթը մի կողմից սոցիալական առումով բացասական է անդրադառնում խոցելի ընտանիքի անդամների, մասնավորապես երեխայի համար, մյուս կողմից այս միջոցը չի կարող կանխարգելել բռնության կրկնությունը: Նմանօրինակ դեպքերում, անհրաժեշտ է պարտադիր մասնագիտական վերականգնողական ծառայության տրամադրում ինչպես բռնության ենթարկվածներին, այնպես էլ՝ բռնարարին:

Այս ուղղությամբ, ՀՀ երեխաների պաշտպանության ցանցի 2016 թվականի Երեխաների պաշտպանության ինդեքս»-ը ևս փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը սահմանափակ գործողություններ է իրականացնում երեխաների նկատմամբ բռնությունների դեպքերի կանխարգելման, վաղ հայտնաբերման և հաղորդման վերաբերյալ³⁷:

Դեռևս 2010 թվականին իրականացված՝ Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը վկայում է, որ 2-14 տարեկան երեխաների շուրջ 40%-ի նկատմամբ որպես դաստիարակության մեթոդ, մեր երկրում, կիրառվում է ֆիզիկական բռնությունը: Համանուն հետազոտության տվյալները 2015-2016 թվականների կտրվածքով, հաստատում են, որ 15-49 տարեկան

37 Երեխայի պաշտպանության ինդեքս: Հայաստան 2016 թվական, էջ 14, պարբ. 4: Հասանելի է հետևյալ հղումով. <http://mankutyun.am/resursview/18/>

կանանց 6%-ը 15 տարեկանից սկսած երբևէ ենթարկվել է ֆիզիկական բռնության, իսկ 3%-ը ենթարկվել է բռնության վերջին 12 ամիսների ընթացքում: Միևնույն ժամանակ, 15-49 տարեկան կանանց 1%-ը երբևէ ենթարկվել է սեռական բռնության, իսկ 1%-ից քիչը ենթարկվել է բռնության վերջին 12 ամիսների ընթացքում³⁸:

«Հ կառավարությունն, իր 2017 թվականի նոյեմբերի 13-ին կայացրած որոշմամբ հավանություն է տվել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» և հարակից այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախածեղծությանը: Արդեն 2017 թվականի դեկտեմբերի 13-ի Ազգային ժողովի նիստում երկրորդ ընթերցմամբ, այնուհետ՝ ամբողջությամբ օրինագիծն ընդունվել է³⁹:

Պետք է փաստել, սակայն, որ, օրենքի լիարժեք կիրարկման համար անհրաժեշտ է ընդունել մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտեր: Ավելին, ոստիկանության համապատասխան ստորաբաժանումը,

ստանալով մի շարք լիազորություններ, այդ թվում պաշտպանական միջոցների կիրառման իրավասություն, կարիք ունի համապարփակ և պարբերական վերապատրաստման և մասնագիտացման: Միաժամանակ, օրենքը դեռևս չի կիրարկվել, ուստի դժվար է գնահատել դրա արդյունավետությունը երեխաների դեմ բռնության վերացման և բռնության կանխարգելման հարցում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների համաձայն, պետք է ձևավորել երեխաների դեմ բռնության վաղ հայտնաբերման, կանխարգելման և արձագանքման համապարփակ մեխանիզմ՝ հիմնված միջգերատեսչական համագործակցության հստակ կանոնակարգերի վրա, ապահովել տուժողին վերականգնողական ծառայությունների ուղղորդման հստակ ընթացակարգ և երաշխիքներ, ինչպես նաև նախատեսել անհրաժեշտ ծառայություններ բռնություն գործադրած անձի համար՝ հետագայում բռնության դեպքերը կանխելու նպատակով:
- Արգելել ֆիզիկական պատժի կի-

38 «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2015-16», աղբյուրը՝ <http://www.armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf>:

39 Հասանելի է հետևյալ հղումով. http://www.parliament.am/draft_history.php?id=9186&lang=arm:

րառությունը ցանկացած իրավիճակում, ինչպես նաև՝ օրենսդրությամբ նախատեսել կիրարկման մեխանիզմներ, ներառյալ՝ քրեական պատասխանատվություն խախտումների դեպքում:

2. ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ՝ ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վերհիշելով երեխաների նկատմամբ բռնության թեմայով Միավորված ազգերի կազմակերպության 2006 թվականի ուսումնասիրության (A/61/299) առաջարկությունները, և վկայակոչելով թիվ 13 ԸՄ-ն,

Կոմիտեն առաջարկել է (կետ 26)՝

- մշակել համապարփակ ազգային ռազմավարություն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխելու և վերացնելու նպատակով.
- ընդունել համակարգման ազգային ծրագիր երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ պայքարելու նպատակով.
- ընդունել օրենսդրություն, որով ուղղակիորեն կարգելվեն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը ցանկացած իրավիճակներում, առանձնակի ուշադրություն դարձնել բռնության գենդերային բաղադրիչին:

Ինչպես արդեն վերը նշվեց, ՀՀ կառավարության N 51 արձանագ-

րային որոշմամբ դեռևս 2014 թվականի դեկտեմբերի 4-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը: Միաժամանակ, հարկ է նշել, որ 2016-2017 թվականների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից ընդունվել են այլ իրավական ակտեր ու կանոնակարգեր ևս, որոնք այս կամ այն չափով կարևորում են երեխային բռնությունից զերծ պահելու երաշխիքները: Այդ իրավական ակտերն են.

- «Երեխայի իրավունքների պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 38 արձանագրային որոշումը:
- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն արձանագրային որոշումը:
- «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամա-

տարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» 2016 թվականի մարտի 10-ի N 9 արձանագրային որոշումը:

- «ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» 2016 թվականի մայիսի 12-ի N 18 արձանագրային որոշումը:
- «Երեխաների և դեռահասների առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 34 արձանագրային որոշումը:
- «ՀՀ ԱՍՀՆ «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի N 381-Ն որոշումը:
- 2017 թվականի հուլիսի 13-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրա-

վունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30 արձանագրային որոշումը:

- 2017 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Երեխայի իրավունքների պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 41 արձանագրային որոշումը:

Վերոնշյալի հետ մեկտեղ պետք է նշել, որ շրջանառության մեջ դրված «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծում ընդգրկված կերպով նախատեսվել է բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը, հստակ սահմանվել են երեխայի նկատմամբ բռնության տեսակները և տրվել են համապատասխան բնորոշումներ:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ երեխաների նկատմամբ բռնության բոլոր տեսակների վերացմանն ուղղված գործողությունները ոչ միշտ են արդյունավետ: Այս մասին դեռևս 2015 թվականին ներկայացվել է նաև երեխաների պաշտպանության ինդեքսի շրջանակներում՝ շեշտադրե-

լով պետության հաջողությունները հանձնաժողովների, իրավական ակտերի ու կառավարման մեխանիզմների ստեղծման ոլորտում, սակայն դեռևս առկա են մարտահրավերներ համայնքային մակարդակում երեխաների նկատմամբ բռնության դեպքերը բացահայտելու, գնահատելու և հասցեական ու ժամանակին միջամտություն ցուցաբերելու տեսանկյունից: Որպես օրինակ կարելի է բերել հանրակրթական հաստատություններում տիրող իրավիճակը: Ըստ հետազոտության, դպրոցում ուսուցիչների կողմից կարգազանց աշակերտների նկատմամբ կիրառվող մեթոդները սկսվում են բացատրական զրույցներից մինչև հոգեբանական ճնշում, նսեմացնող պատիժներ՝ անկյուն կանգնել, ավլել, մեկուսացում, ապտակ, հրմշտոց, հարվածներ կամ ծեծ: Թեև ֆիզիկական բռնությունները համարվում են ամենաանարդյունավետ միջոցը, սակայն հաշվի առնելով, որ բողոքելը ընդհանուր առմամբ համարվում է ամոթալի արարք, արդյունքում անարդյունավետ համարվող ապտակները և նսեմացնող պատիժները երբեմն արդյունավետ ու ընդունելի են դառնում: Իսիստ տարածված են ավագ դասարանի աշակերտների միջև ֆիզիկական բռնության դեպքերը՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, և նկատվում է դրանց

աճի միտում՝ ինչպես ընդհարումներ և ֆիզիկական ուժի կիրառմամբ կոնֆլիկտներ, այնպես էլ խոշոր կոնֆլիկտներ, այդ թվում սառը զենքի օգտագործմամբ:⁴⁰

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել բռնության ենթարկված երեխաների համապետական աջակցության կարգ կամ միասնական ուղեցույց, որը ուղենիշային կլինի ինչպես պետական լիազորված մարմինների (<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, << կրթության և գիտության նախարարություն, << առողջապահության նախարարություն, << ոստիկանություն և այլն), այնպես էլ երեխաների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպությունների համար:
- Մշակել դրանց վերաբերյալ ուղենիշեր/ուղեցույցներ՝ բռնության դեպքերը արդյունավետ հայտնաբերման, դրանց վերաբերյալ պատշաճ կարգով հաղորդում ներկայացնելու և քննություն իրականացնելու հարցերով:
- Մշակել երեխաների կողմից իրենց նկատմամբ գործադրված բռնությունների մասին անձամբ հայտնելու և պաշտպանված լինելու հստակ երաշխավորված իրավական

40 Տես. Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտության արդյունքների վերլուծության հաշվետվություն: Երևան 2014: <<Հույս և օգնություն>> ՀԿ, 2014: էջ 25-26: Հետազոտությունը հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2IPtoV3>

- ու գործնական ընթացակարգեր:
- Սահմանել իրավական չափանիշների երեխաներին խնամատար ու խնամակալ, ինչպես նաև որդեգիր ընտանիքներում բռնությունից զերծ մնալու հավանականությունը գնահատելու ուղղությամբ: Իրականացնել հատուկ վերապատրաստումներ այդ գործընթացների համար պատասխանատու պետական ու ոչ պետական կառույցների ներկայացուցիչների համար:
 - Վիճակագրական տվյալների հավաքագրման տեսակետից ավելացնել վարչական ռեգիստր՝ պատասխանատու բռնության ենթարկված երեխաների տվյալների հավաքագրման համար՝ հնարավորինս մանրամասն ցուցիչներով (սեռ, տարիք, բռնության սուբյեկտ, բռնության վայր, բռնության տեսակ, հաշմանդամության առկայություն և դրա տեսակ և այլն):
 - Մշակել և ներդնել դրական ծնողավարության դասընթացներ և հանրության շրջանում հետևողականորեն խրախուսել դրական ծնողավարությունը՝ որպես բռնությունը կանխարգելող կարևորագույն միջոց,
 - Ուսումնասիրել կրթության համակարգում բռնության դեպքերը և մշակել հայեցակարգ՝ դպրոցներում բռնությունը նվազեցնելու ուղղությամբ:

3. ՎՆԱՍԱԿԱՐ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Կոմիտեն նշել է, որ եզրիական համայնքի աղջիկները հաճախ ամուսնանում են ավանդական արարողության շրջանակներում՝ նախքան ամուսնության օրինական տարիքի լրանալը:

Կոմիտեն առաջարկել է (կետ 28)՝

- ամուսնության բոլոր ձևերի համար լիարժեքորեն կիրարկել ամուսնանալու համար օրենքով սահմանված տարիքը,
- մշակել և իրականացնել իրազեկության բարձրացման համապարփակ ծրագրեր՝ նվիրված իգական սեռի երեխաների առողջության, կրթության և զարգացման իրավունքների վրա վաղ ամուսնության բացասական հետևանքներին՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ծնողներին և համայնքային առաջնորդներին:

Հայաստանի Հանրապետությունում ամուսնության հետ կապված իրավակարգավորումները այդ ակտի գրանցման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտանեկան օրենսգրքով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրա-

վունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը՝ բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձն առնվազն 18 տարեկան է:

Ինչ վերաբերում է եզրիական համայնքի իգական սեռի ներկայացուցիչների ամուսնությանը, ապա սոցիոլոգիկ որոշակի առանձնահատկություններից ելնելով, նման դեպքերը թեև կարող են առկա լինել, սակայն կրում են լատենտային բնույթ: Առա-

վելագույն դեպքում, փաստացի ամուսնական հարաբերություններում՝ առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված ՔԿԱԳ ծառայության հաշվառման: Այսուհանդերձ, ֆորմալ իմաստով եզրիական համայնքի աղջիկների համար ևս պահպանվում են ամուսնության տարիքի՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված նորմերը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրականացնել մեծածավալ ու հասանելի տեղեկատվական արշավներ ու միջոցառումներ՝ ուղղված սոցիոլոգիկ տարբեր համայնքների կամ խմբերի ներկայացուցիչների շրջանում, ՀՀ օրենսդրության պահանջների և դրանց կիրարկման առանձնահատկությունների վերաբերյալ:
- Դեռահասների շրջանում վաղ ամուսնության դեպքերը կանխարգելելու նպատակով դպրոցականներ և ուսուցչական կազմի շրջանում կազմակերպել տեղեկատվական-մասնագիտական դասընթացներ:

Դ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

(ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ, 18-ՐԴ (1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐ), 9-11-ՐԴ, 19-21-ՐԴ, 25-ՐԴ, 27-ՐԴ (4-ՐԴ ԿԵՏ) ԵՎ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ ԶՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Կոմիտեն ողջունել է երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգը, որը ստեղծվել է ազգային, մարզային և տեղական մակարդակներում, սակայն մտահոգիչ է համարել այն, որ տեղական մակարդակում երեխայի պաշտպանությունը կարծես հիմնականում իրականացվում է անհրաժեշտ որակավորում և մասնագիտական պատրաստվածություն չունեցող կամավորների կողմից, ինչպես նաև, որ դժվարությունների և երեխաների կրթության ծախսերը կամ տարրական կարիքները հոգալու անկարողության պատճառով որոշ ընտանիքներ ստիպված են լինում իրենց երեխաներին տեղավորել գիշերօթիկ դպրոցներ և մանկատներ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 30)՝

- միջոցներ ձեռնարկել՝ տեղական մակարդակում երեխաների պաշտպանության գործին ներգրավելու երեխաների հետ աշխա-

տանքի փորձ ունեցող մասնագետների

- ավելացնել խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին, մասնավորապես՝ ծայրահեղ աղքատության մեջ ապրող ընտանիքներին ցուցաբերվող օժանդակությունը՝ համակարգված, երկարաժամկետ քաղաքականությունների և ծրագրերի միջոցով ապահովելով սոցիալական ծառայությունների և կայուն կերպով եկամուտներ վաստակելու հնարավորությունների հասանելիությունը նրանց համար
- արգելելու երեխաների տեղավորումը խնամքի հաստատություններում միայն ֆինանսական պատճառներով, ինչպես նաև՝ հաստատություններ տեղավորելը կիրառել միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում՝ Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ՄԱԿ-ի կողմից 2009 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված ուղեւիշներին համապատասխան
- ապահովել ընտանիքահեն և հա-

մայնքահեն խնամքի այլընտրանքային բավարար տարբերակներ ընտանեկան միջավայրից զրկված երեխաների համար

- ավելացնել համընդհանուր և հասցեական ծառայությունների տեսքով խոցելի իրավիճակներում հայտնված ընտանիքներին ցուցաբերվող օժանդակությունը՝ զարգացնելով նրանց ծնողավարման հմտությունները, և նրանց ներգրավելով սոցիալական աջակցության ծրագրերի մեջ
- ապահովել խնամքի հաստատություններում տեղավորելը միայն բոլոր այլ միջոցների սպառված լինելու դեպքում, ինչպես նաև՝ համարժեք երաշխիքների և կարիքների վրա և երեխայի լավագույն շահերի վրա հիմնված հստակ չափորոշիչների կիրառությունը երեխային խնամքի հաստատությունում տեղավորելու նպատակահարմարությունը որոշելու համար, և առավելագույն օժանդակություն ցուցաբերել հաստատություններից դուրս եկող երեխաներին ուսման և/կամ աշխատանքի հնարավորություններ գտնելու հարցում, ինչպես նաև նրանց համար ապահովել համարժեք կացարան

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների, գյուղական բնակավայրերում ապրող երեխաների, փողոցում հայտնված և հաստատություններում ապրող երեխաների

նկատմամբ խտրականության իրավիճակը հաղթահարելու նպատակով ՀՀ ԱՍՀՆ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացվել են վերապատրաստումներ «Հաշմանդամ երեխաների սոցիալական ներառումը», «Երեխաների նկատմամբ խտրականության կանխարգելումը», «Անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրները» թեմաներով, որին մասնակցել են երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների, երեխաների ցերեկային հոգաձության կենտրոնների, ինչպես նաև շահագրգիռ գերատեսչությունների և երեխաների պաշտպանության ոլորտում սոցիալական ծառայություններ տրամադրող միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնագետները:

Վերջին տարիներին սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումներից մեկը ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումն է, որն ուղղված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին, սոցիալական հատուկ խմբերին և անձանց նպատակային աջակցության տրամադրմանը՝ կարիքների վրա հիմնված և դեպքի վարման գործընթացի շրջանակներում: Իրականացվող քաղաքականությունը զուգորդվում է նաև զբաղ-

վածության ոլորտում իրականացվող բարեփոխումներին՝ նրանց աշխատանքով ապահովելու, ինքնաբավ դարձնելու, պասիվ սոցիալական վիճակից նրանց հանելու և աշխատաշուկայում լիարժեք և ինքնուրույն կայանալու հնարավորություն ընձեռելու նպատակով:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համակարգի բարելավումը սոցիալական աջակցության ոլորտի ծրագրերից մեկն է, որի նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելն է: Այս նպաստների նշանակումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա: Ըստ ՀՀ ԱՍՀՆ կողմից սույն հետազոտության շրջանակներում տրամադրված պաշտոնական տեղեկատվության՝ Ծրագրի ծածկույթը կազմում է բնակչության շուրջ 14%-ը, իսկ երեխաների դեպքում՝ շուրջ 24%:

Սոցիալապես անապահով ընտանիքների համար ինքնուրույնաբար կայուն եկամուտի ձևավորման իրական հնարավորությունների ստեղծման և դեպի պետական նպաստն առկա ձգտումների առավելագույնս ապա խթանման նպատակով վերանայվել է ընտանիքների անապահովության գնահատման կարգը: Նոր

կարգում հնարավորինս ներառվել են տնտեսապես ակտիվ անձանց աշխատանքի շուկայում ունեցած վարքագծի գնահատականները՝ դրանով խթանելով աշխատանքային գործունեություն ծավալելու իրենց ցանկությունը: Ավելացել է երեխա ունեցող ընտանիքների անապահովության գնահատման հարցում երեխաների առկայության հանգամանքի կշիռը՝ դիտարկելով նման ընտանիքներին աղքատության տեսանկյունից ավելի ռիսկային:

ՀՀ ԱՍՀՆ ներկայացրած տվյալների համաձայն՝ նախարարության ենթակայության՝ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ խնամվում է 1044 երեխա, այդ թվում՝ մանկատանը խնամվում է 632 երեխա, գիշերօթիկում՝ 412, նրանցից 379-ն առնվազն ունի մեկ ծնող՝ մանկատանը՝ 222, գիշերօթիկում՝ 157:

ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշմամբ սահմանվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև կարգավորվում են այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հետ կապված հարաբերությունները: Այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի

տրամադրման նպատակով ուղղորդումն իրականացվում է հիմնականում հետևյալ սկզբունքների հիման վրա⁴¹

- երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելուն ուղղված ջանքերի առաջնահերթությունը՝ այլընտրանքային խնամքի տրամադրումը դիտելով որպես տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ, սակայն պարտադրված միջոց, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված) կամ խնամքի գիշերօթիկ հաստատություններում տեղավորելը՝ որպես ծայրահեղ լուծում, այն էլ հնարավորինս կարճ ժամկետով.
- այլընտրանքային խնամքը կազմակերպել՝ հիմք ընդունելով երեխայի անհատական կարիքներն ու լավագույն շահի պահպանումը՝ ներառյալ երեխայի լաված լինելու իրավունքի ապահովումը.
- երեխայի այլընտրանքային խնամքի պարբերական մշտադիտարկում և դրա հիման վրա ընտրված խնամքի ձևի արդյունավետության անընդհատ գնահատում՝ ապահովելով երեխայի լաված լինելու իրավունքը.
- միայն ֆինանսական և/կամ տնտեսական անբարենպաստ պայ-

մանների առկայության հիմքով երեխայի համար այլընտրանքային և/կամ հաստատությունում խնամքի ձևերի ընտրության բացառում.

- երեխային այլընտրանքային խնամքի տրամադրման վերաբերյալ որոշումների ճկունություն, որը ենթադրում է, որ այդ որոշումները պետք է պարբերաբար վերանայվեն, եթե երեխայի համար այլընտրանքային խնամքի տվյալ ձևի ընտրության հիմնական պատճառները փոփոխվել կամ վերացել են:

Այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հիմքում ընկած են հետևյալ չափորոշիչները՝

- այլընտրանքային խնամքի որոշում ընդունելիս 10 տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը << ընտանեկան օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, իսկ մինչև 10 տարեկան երեխայի դեպքում՝ նրա հասունության աստիճանին համապատասխան.
- այլընտրանքային խնամքի վերաբերյալ որոշման ընդունման գործընթացում սոցիալական աջխատողի, հոգեբանի, սոցիալական և հատուկ մանկավարժների, իրավաբանի և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող այլ մասնա-

41 Տեքստը ծանրաբեռնելուց խուսափելու նպատակով սկզբունքները ներկայացված են խմբավորված կերպով:

գետների ներգրավում.

- կենսաբանական ընտանիքից դուրս բերելու անհրաժեշտության դեպքում, 0-3 տարեկան երեխաների խնամքի կազմակերպում փոխարինող ընտանիքում կամ ընտանեկան տիպի խնամքի որևէ տեսակում.
- միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով երեխային իր կենսաբանական ընտանիքից բաժանելու դեպքում այլընտրանքային խնամքի տրամադրման տևողությունը չպետք է գերազանցի 6 ամիս ժամանակահատվածը.
- երեխայի խնամքի գիշերօթիկ, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում տեղավորված երեխաների վիճակի ամենամյա հետազոտություն՝ վերջիններիս խնամքը փոխարինող ընտանիքներում կամ ընտանեկան տիպի այլընտրանքային խնամքի որևէ այլ տեսակով կազմակերպելու հնարավորությունները գնահատելու նպատակով.
- երեխայի այլընտրանքային խնամքի կազմակերպում՝ նրա ծագման համայնքին հնարավորինս մոտ (բացառությամբ՝ որդեգրման և (կամ) ազգականներին խնամակալության (հոգաբարձության) հանձնելու դեպքերի):

2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է երեխաների խնամքի ու պաշտպանության այլընտրանքային ձևերից մեկի՝ խնամատար ընտանիքի ինստիտուտը: Առանց ծնողական խնամքի մնացած 75 երեխա, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող հինգ երեխա խնամք է ստացել խնամատար ընտանիքներում, որոնց մի մասը դուրս է գրվել 18 տարեկանը լրանալու կամ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորվելու պատճառով: 2017 թվականի դեկտեմբերի դրությամբ խնամատար 21 ընտանիքում խնամք է ստանում 25 երեխա: Այդ ուղղությամբ էական ու համակարգային առաջընթաց ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականի մարտի 10-ին N 9 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին»:

ՀՀ ԱՍՀՆ կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծում «Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցներից պակասեցնելու, այն «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» ծրագ-

րով նախատեսված ֆինանսական միջոցներին ավելացնելու վերաբերյալ:

ԱԾԽՄ երեխաների նկատմամբ խնամքի ձևի ընտրությունը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով: Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է ԱԾԽՄ երեխաների իրավունքների պաշտպանությունը և նրանց նկատմամբ խնամքի ընտրվող ձևերն ու առաջնահերթությունը: Այսպես, նույն օրենսգրքի 111-րդ հոդվածը սահմանում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները դաստիարակության համար ենթակա են հանձնման **ընտանիք (որդեգրման)**, խնամակալության (հոգաբարձության) կամ խնամատար ընտանիք, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բոլոր տիպի կազմակերպություններ (դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ): Այլ իրավական ակտերով սահմանված են կոնկրետ խնամքի ձև ընտրության կարգերը:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ, ի թիվս այլ հարցերի կարգավորված է **բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ երեխաների ուղեգրումը**:

ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշմամբ, ի թիվս այլ հարցերի կարգավորված է երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը և այլն:

Հաճախ հանդիպում են դեպքեր, երբ երեխաների՝ հաստատություն տեղավորվելը կատարվում է հենց կենսաբանական ծնողների նախաձեռնությամբ: Օրինակ՝ ծնողները, երեխայի հաշմանդամություն ունենալու, ընտանիքի սոցիալական անապահով լինելու, ինչպես նաև արտագնա աշխատանքի կամ այլ հիմնավորմամբ, ժամանակավորապես հրաժարվում են իրենց երեխային խնամելուց, ինչի արդյունքում երեխան տեղավորվում է հաստատություն:

Խնդրի էությունը առավել մատչելի դարձնելու համար հարկ է անդրադառնալ առաջին հերթին ծնողի կողմից երեխայից հրաժարվելու իրավական կարգավորմանը:

Ծնողի կողմից երեխայից հրաժարվելը կարգավորվում է որդեգրման հարաբերություններում: Ըստ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 118-րդ հոդվածի՝ երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա ծնողների գրավոր համաձայնությունը: Երեխային որդեգրելու համար ծնողների համաձայնությունը պետք է արտահայտվի դիմումով՝ հաստատված նոտարական կարգով կամ այն կազմակերպության ղեկավարի կողմից, որտեղ գտնվում է առանց ծնողական խնամքի մնացած

երեխան, ինչպես նաև համաձայնությունը կարող է արտահայտվել անմիջականորեն դատարանում որդեգրման վարույթի ժամանակ:

Ծնողները կարող են հետ վերցնել երեխային որդեգրելու համար իրենց տված համաձայնությունը մինչև նրան որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Երեխա որդեգրելու համար համաձայնությունը կարող է տրվել միայն երեխայի ծնվելուց հետո:

Դրանով պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման հավելվածի 16-րդ կետի «է» պարբերությամբ սահմանվում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ ի թիվս այլ փաստաթղթերի Հայաստանի Հանրապետության մարգպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան) է ներկայացնում նաև **«ծնողական իրավունքներից ինքնակամ հրաժարվելու և որդեգրության հանձնելու մասին կամարտահայտության դեպքում՝ ծնողների (կամ միակ ծնողի) գրավոր հայտարարագիրը՝ վավերացված նոտարի կողմից:**

Հաճախ խնամքի հաստատություններում առաջարկվող խնամքը (սնունդը, հագուստը, անկողինը և այլն) շատ ավելի գերադասելի է, քան ծնողների ապահովված խնամքը: Ուստի, գայթակղված կենցաղային հնարավոր ավելի լավ պայմաններով՝

ծնողները ձևական-իրավաբանական կողմը պահելու համար, գնում և նոտարի մոտ հրաժարվում են իրենց երեխաներից, որպեսզի հնարավոր լինի փաստել երեխայի ԱԾԽՄ կարգավիճակը և հնարավոր լինի տեղավորել որևէ հաստատությունում: Տարածված է նաև հետևյալ պրակտիկան. ծնողը չի հրաժարվում երեխայից, իսկ վերջինս որպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա հայտնվում է հաստատությունում, որի արդյունքում չի կարող ոչ որդեգրվել, ոչ էլ տեղավորվել խնամատար ընտանիք: Ծնողը հայտնվում է վեց ամիսը մեկ և դրանով կանխում երեխայի կարգավիճակի հստակեցումը:

Միևնույն ժամանակ, պրակտիկան ցույց է տվել, որ իրավական միևնույն կարգավիճակի մեջ ներառվող երեխաների իրավիճակները իրականում շատ տարբեր են և միավորվում են մեկ կարգավիճակի մեջ որպես ԱԾԽՄ, քանի որ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Մասնավորապես խոսքը վերաբերում է այն դեպքին, երբ ծնողը ըստ էության չի խուսափում երեխայի խնամքից և դաստիարակությունից, սակայն ելնելով սոցիալական պայմաններից, աշխատանքային զբաղվածությունից և այլն, չի կարողանում ապահովել երեխայի խնամքը և այս դեպքում ևս այլընտրանք այլ կարգավիճակ և համապատասխանաբար դրանից բխող

ընթացակարգեր և ծառայություններ չլինելու պատճառով՝ երեխան ճանաչվում է ԱԾԽՄ և հիմնականում տվյալ դեպքերում ուղղորդվում է հաստատություն:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ ծնողի համաձայնությամբ չի կարող տեղի ունենալ նաև երեխայի ժամանակավոր տեղավորում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր կամ հատուկ տիպի հաստատությունում:

Սա թերևս չի վերաբերում հայտնաբերված երեխայի ժամանակավոր տեղավորման դեպքերին, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման հավելվածի 14-րդ կետում, որտեղ սահմանվել է, որ ԽՀՄ-ն հնարավոր ԱԾԽՄ երեխայի հայտնաբերման դեպքում, ի թիվս այլ անհետաձգելի գործողությունների, ապահովում է այդ երեխայի ժամանակավոր (որոշակի ժամկետով) տեղավորումը (այդ թվում՝ բնակչության սոցիալական պաշտպանության համապատասխան հաստատությունում կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպությունում), մինչև **երեխայի տեղավորման հարցի վերջնական լուծումը:**

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածը սահմանում է.

«1. Երեխայի կյանքը կամ առողջու-

թյունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինն իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան:

2. Երեխային վերցնելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է **անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը** և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով»⁴²:

Թերևս դրական կարելի է համարել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 3-ի թիվ 54-Ն հրամանով հաստատվել է ԱՍՀՆ ներկայացվող՝ երեխայի խնամքի տրամադրման մասին եզրակացության ձևը, որտեղ հատուկ կետ է նախատեսվել խնամքի որևէ տեսակի տրամադրման նպատակահարմարության, իսկ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու վերաբերյալ եզրակացության դեպքում նաև՝ այլընտրանքային խնամքի տրամադրման

42 ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշում:

անհնարինության հիմնավորման համար: Ավելին, ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի նիստի N 18 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը, որը նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիայի, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը և բացառում է միայն ֆինանսական պատճառներով երեխաների դուրսբերումը ընտանիքից:

Հայեցակարգով նախատեսվում է, հաշվի առնելով միջազգային պրակտիկայում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի կազմակերպման ընտանիքահեն մի շարք ձևերի կիրառման փորձը՝ միջոցներ ձեռնարկել խնամքի այլընտրանքային ծառայության (որդեգրում, խնամակալություն և հոգաբարձություն, խնամատարություն, մանկական ավան, երեխաների աջակցության կենտրոն, երեխաների բժշկասոցիալական վերականգնողական կենտրոն) տեսակները զարգացնելու ուղղությամբ:

Այսուհանդերձ, չնայած մի շարք

իրավակարգավորումների, գործնականում ստացվում է հետևյալ պատկերը. արձանագրվում է ԱԾԽՄ երեխայի առկայություն, ծնողը վերջնականապես չի հրաժարվում իր իրավունքներից, ուստի որդեգրումը դառնում է անհնարին, խնամատար ծնողների ինստիտուտը դեռևս նորույթ է և զարգացման ճանապարհ պիտի անցնի ու ընկալվի ինչպես պատասխանատու մարմինների, այնպես էլ բնակչության, քաղաքացիների կողմից, (ավելին, սույն Ձեկույցի ժամանակահատվածի համար տարեկան 25 ընտանիքի ֆինանսավորումը չի կարող լուծել այլընտրանքային խնամքի կարիք ունեցողների պահանջարկի բավարարման հարցը), հնարավոր խնամակալների առկայության դեպքում, երեխան հաստատությունում ի սկզբանե չի հայտնվում, ուստի պատկան մարմիններին մնում է հաճախ որոշում կայացնել հաստատության օգտին այն դեպքում, երբ երեխան արդեն հաստատությունում է:

Ինչ վերաբերում է հաստատությունից երեխայի ընտանիք վերադարձին, ապա այստեղ ևս թե՛ իրավակարգավորումների և թե՛ պրակտիկայի առումով կան որոշակի խնդիրներ:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ հաստատվել է նաև **բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատու-**

թյուններից երեխայի դուրսգրման կարգը, ըստ որի Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխան մինչև 18 տարին լրանալը, կարող է դուրս գրվել՝

- 1) նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ՝
- 2) որդեգրման հանձնելու, կամ՝
- 3) բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպություն տեղափոխվելու, կամ՝
- 4) խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնելու կամ՝
- 5) այլ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելու և նրա ընտանիքում տեղավորվելու դեպքում կամ՝
- 6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Նշված կարգի 63-րդ կետի համաձայն՝ «Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխան կենսաբանական ընտանիք է վերադարձվում երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի և ընտանիքի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից

կատարված ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացության հիման վրա, որից մեկական օրինակներ ուղարկվում են նաև լիազորած պետական մարմին և ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին»։ Այստեղից հետևում է, որ երեխայի դուրսգրման համար անհրաժեշտ է հետևյալ հիմքերի միաժամանակյա առկայությունը՝

1. երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմում.
2. ընտանիքի բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացություն:

«Հ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրամանով հաստատված ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրության 8-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված է, որ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն

նում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում, կատարած ուսումնասիրության արդյունքում տալիս է համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական)՝ դրա մեկական օրինակներն ուղարկելով նաև նախարարությանը և տվյալ ընտանիքի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին:

«Հ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 3-ի N 54-Ն հրամանի 4-րդ հավելվածով հաստատվել է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխայի՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու համար տրվող եզրակացության ձևը:

Նշվածի ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ ժամկետներ սահմանված չեն ուսումնասիրության և եզրակացության կազմման համար: Եզրակացության հաստատված ձևի ուսումնասիրությունից պարզ չէ բացասական եզրակացություն կայացնելու հնարավորությունը, չնայած, որ այն նախատեսված է: Եզրակացություն տալու չափորոշիչներ նույնպես բացակայում են:

Վկայակոչված իրավական ակտերից ակնհայտ է, որ երեխան վերադարձվում է ընտանիք, եթե տրվել է

դրական եզրակացություն (ենթադրվում է, որ դիմում տալու պահին վերացել են ծնողից երեխային անջատելու հիմքերը, ծնողական իրավունքների սահմանափակում, զրկում և այլն), սակայն բացասական եզրակացություն տալու դեպքում մի շարք խնդիրներ կարող են առաջանալ, որոնք կրկին առաջ են բերում նախորդ պարբերություններում անդրադարձած երեխային ծնողից անջատելու իրավական հիմնավորումների և ընթացակարգերի բախման:

Քանի որ բացասական եզրակացություն տալու համար կրկին անհրաժեշտ է լինելու հաստատել ծնողական իրավունքների առնվազն սահմանափակում և գործընթացը չի կարող սահմանափակվել միայն բացասական եզրակացությամբ: Առաջ է գալիս նաև բացասական եզրակացությունը վիճարկելու ծնողի իրավասություն և վիճարկման ընթացակարգի անհրաժեշտություն, ինչը ևս կարգավորման կարիք ունի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Օրենսդրությամբ սահմանել երեխայի խնամքի՝ ընտանիքից դուրս ժամանակավոր կազմակերպման հիմքերը՝ հաշվի առնելով արդեն իսկ ձևավորված պրակտիկան և դրա անհրաժեշտությունը:
- Նախատեսել այլընտրանքային ծառայություններ հենց այս երե-

խաների՝ ընտանիք վերադարձի ապահովմանը զուգահեռ, ստեղծելով կամ ամրապնդելով երեխայի՝ ընտանիքում ապրելու հնարավորությունը:

- Վերանայել ծնողի համաձայնության անհրաժեշտությունը երեխայի ժամանակավոր խնամքի կազմակերպման հարցում:
- Վերանայել ԱԾԽՄ երեխայի իրավիճակի գնահատման, ուսումնասիրությունների, կարիքների գնահատման գործառույթների բաշխվածությունը և հստակեցնել յուրաքանչյուր մարմնի իրավունքներն ու պարտականությունները՝ բացառելով դրանց կրկնությունները և անհստակությունները:
- Վերանայել ԱՍՀՆ կողմից իրականացվող վերահսկողության իրականացման գործիքակազմը՝ բացառելով ողջամիտ ժամկետներից ավելի երեխաների ժամանակավոր բնակությունը հաստատություններում:

2. ՈՐԴԵԳՐՈՒՄԸ

Կոմիտեն ողջունել է Ընտանեկան օրենսգրքում որդեգրման ընթացակարգերի 2010 թվականի փոփոխությունները, ինչպես նաև «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի թիվ 33 կոնվենցիայի վավերացումը:

Այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգություն է հայտնել դրանց իրագործման թերությունների առնչությամբ: Մասնավորապես, Կոմիտեին մտահոգել են, որ

- 1) Որդեգրման գործընթացի մշտադիտարկումը և վերանայումը կենտրոնացված չեն և իրականացվում են մարզային մակարդակով՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների կողմից, մինչդեռ որոշումերը կայացվում են տեղական դատարանների կողմից,
 - 2) որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա,
 - 3) որդեգրման գործընթացին մասնակցող սուբյեկտների մասնավոր գաղտնիքի պաշտպանությունն օգտագործվում է որպես հիմք՝ որդեգրման գործընթացի մշտադիտարկման սահմանափակումներն արդարացնելու նպատակով: Կոմիտեն առաջարկել է (կետ 34)՝ ստեղծել արդյունավետ մեխանիզմներ Հաագայի թիվ 33 կոնվենցիայի և որդեգրման 2010 թվականի կարգի կատարումն ապահովելու ուղղությամբ, մասնավորապես՝
- ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված հա-

մակարգ,

- սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն ոչ միայն նրանց նյութական վիճակի, այլ նաև՝ այլ պայմանների վրա, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն՝ մեծանալ առողջ և ապահով միջավայրում, պատասխանատու ծնողների հետ,
- սահմանել կարգ որդեգրող ծնողներին որդեգրումից առաջ վերապատրաստման և օժանդակության ծառայություններ մատուցելու մասին, և ստեղծել որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմի կողմից մշտադիտարկման համակարգ:

**1) ՈՐԴԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԻ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑ-
ՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ
ՈՐԴԵԳՐՈՂ ԾՆՈՂՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՍՏԱԿ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ**

«Օրենսդրությունը չի սահմանում որդեգրման գործի վերանայման կենտրոնացված համակարգ: Կոմիտեի մտահոգությունը այն է, որ որդեգրման գործի հաստատման և մշտադիտարկման մասին որոշումները կայացվում են մարզային մակարդակով (ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության մար-

մինների կողմից), մինչդեռ որոշումները կայացվում են ընդհանուր իրավասության դատարանների կողմից: Առաջարկվում է ստեղծել որոշումների կայացման և վերացման միասնական համակարգ:

Ներկա իրավիճակի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ քաղաքականություն ձևավորող իրավասու մարմինները որոշել են գնալ այլ ճանապարհով՝ զարգացնելով խախտումների դեմ երաշխիքային մի շարք համակարգեր, այդ թվում նաև բարելավելով որդեգրող ծնողների ընտրության հիմքերը: Մասնավորապես, 2017 թվականի դեկտեմբերին ընդունված Ընտանեկան օրենսգրքի փոփոխություններով բարելավվել է որդեգրման ինստիտուտը: Այսպես, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպման հետ կապված բոլոր որոշումները հիմնված են երեխայի լավագույն շահերի ապահովման և նրա կարիքների բազմամասնագիտական գնահատման վրա և պետք է համապատասխանեն հետևյալ երկու հիմնական նպատակներին՝

- 1) ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանեկան միջավայրում, իսկ անհնարինության դեպքում՝ դրան առավել մոտ միջավայրում, և
- 2) ապահովել երեխայի կրթությունը, խնամքն ու դաստիարակու-

թյունը կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները, ներառյալ՝ սոցիալական ու բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները՝ հաշվի առնելով «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները:

Օրենսգրքի փոփոխությամբ որդեգրման եզրույթի նոր սահմանում է տրված: Ըստ այդմ, որդեգրումը սահմանված է որպես **դատական ակտ, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որի արդյունքում որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Որդեգրումն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից՝ որդեգրողի և որդեգրվողի համադրելիության գնահատման հիման վրա:**

Կենտրոնական նյարդային համակարգի, օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներ, բնածին, ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխայի որդեգրում թույլատրվում է այն դեպքում, երբ որդեգրողի մոտ առկա է երեխայի բուժման և խնամքի անհրաժեշտ պայմաններով ապահովելու հնարավորությունը:

Օրենսգրքի փոփոխությամբ խնամակալության և հոգաբարձության

մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձանց կյանքի պայմանների հետազոտություն, ովքեր հավակնում են երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը՝ երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին:

Վերանայվել են նաև որդեգրման վերացման հիմքերը, որոնց հիմքում ընկած են երեխայի լավագույն շահերը: Մասնավորապես, ըստ օրենսգրքի՝ որդեգրումը կարող է վերացվել, երբ որդեգրողը խուսափում է իր վրա դրված ծնողական պարտականությունները կատարելուց, չի փոխում իր վարքագիծը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում, առանց հարգելի պատճառի

հրաժարվել է վերցնել իր երեխային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններից, ինչպես նաև մի շարք այլ հիմքեր, որոնք բխում են երեխայի շահերից:

Օրենսգրքի համաձայն՝ ամուսնության մեջ գտնվող անձանցից յուրաքանչյուրը հաշվառվում է որպես որդեգրող: Հաշվառումն իրականացվում է փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով: Որդեգրելու իրավունք ունի սահմանված կարգով երեխա որդեգրել ցանկացող հաշվառված չափահաս անձը, ով մասնակցել է նախապատրաստական դասընթացներին:

Երեխա որդեգրել ցանկացող անձին հոգեբանական, մանկավարժական և իրավական աջակցություն տրամադրելու նպատակով օրենսդրական փոփոխությամբ սահմանվում է, որ լիազորված պետական կառավարման մարմինը պետք է իրականացնի անվճար նախապատրաստական դասընթացներ: Նշված դասընթացները օտարերկրյա քաղաքացիների համար կազմակերպվելու են Հայաստանի Հանրապետությունում՝ վերջիններիս մոտ օտարերկրյա պետությունում նման դասընթացներին մասնակցելը հավաստող փաստաթղթի բացակայության դեպքում: Օրենսգրքի փոփոխությամբ սահմանված են նաև այլ երաշխիքներ, ապահովելու համար երեխայի որդեգրու-

մը՝ ելնելով նրա լավագույն շահերից: Նախատեսվում է **տարիքային շեմ՝ որդեգրողի և որդեգրվողի միջև**: Որդեգրողի և որդեգրվողի տարիքային տարբերությունը պետք է լինի 18 տարուց ոչ պակաս և 50 տարուց ոչ ավել, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան որդեգրվում է որդեգրելու նախապատվության իրավունք ունեցող անձանց կողմից:

Ի մի բերելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել**։

2) ԱՆԿԱԽ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Օրենքի փոփոխությամբ նախատեսվում է որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողություն, որի նպատակն է նպաստել երեխայի ինտեգրմանը և բարեկեցությանը, ինչպես նաև իրավունքների և շահերի ոտնահարման կանխարգելմանը որդեգրողի ընտանիքում: Վերահսկողությունը պետք է իրականացվի խնամակալության և հոգաբարձության մարմնի և մարզպետարանի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) կողմից՝ համատեղ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղա-

քացիների որդեգրման դեպքում՝ Հաստատանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից՝ օտարերկրյա պետությունում գտնվող որդեգրման գործակալության միջոցով:

Որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության նպատակն է նպաստել երեխայի ինտեգրմանը և բարեկեցությանը, ինչպես նաև իրավունքների և շահերի ունահարման կանխարգելմանը որդեգրողի ընտանիքում: Այդ նպատակով փոփոխված օրենսգիրքը սահմանում է որդեգրման նկատմամբ post-factum վերահսկողության համակարգ որդեգրման դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում: Օրենքը վերահսկող մարմնին տրամադրում է վերահսկողական լիազորություններ, ինչպես օրինակ վերահսկողական մարմնի ներկայացուցչի կողմից սեփականատիրոջ համաձայնությամբ երեխայի բնակության վայր մուտք գործելը, երեխայի կենսապայմանները ուսումնասիրելը,

երեխայի և որդեգրողի, նրա մերձավոր ազգականների, հարևանների, կրթական հաստատությունների աշխատակիցների հետ անարգել շփվելու իրավունքը: Միևնույն ժամանակ, օրենքը պարտավորեցնում է վերահսկողական մարմնին ապահովել որդեգրման գաղտնիությունը: Վերահսկողական մարմնի աշխատակիցների կողմից իրենց գործառույթների խոչընդոտման համար նախատեսվում է տուգանք:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մասամբ են կատարվել :**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ստեղծել որդեգրման գործընթացի հաստատման կենտրոնացված համակարգ:
- Կառավարության որոշումով սահմանել որդեգրող ծնողների՝ մինչև որդեգրումը նրանց օժանդակության և վերապատրաստման կարգ ստեղծելու դրույթներ:



© UNICEF Armenia/2018/Sokhin

**Ե. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ,
ՏԱՐՐԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

**(ԿՈՆԿԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ, 18-ՐԴ (3-ՐԴ ԿԵՏ), 23-ՐԴ,
24-ՐԴ, 26-ՐԴ, 27-ՐԴ (1-3 ԿԵՏԵՐ) ՀՈՂԿԱԾՆԵՐԸ)**

1. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Կոմիտեն ողջունել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումը 2005 թվականին և «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխությունների ընդունումը 2014 թվականին, որոնցով նախատեսվում է անցնել համընդհանուր ներառական հանրակրթության, ներառյալ նախադպրոցական կրթությունը: Կոմիտեին մտահոգել է, որ.

- ա. Մանկատներում գտնվող և հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը և տոկոսաբաժինն աճում են՝ պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ,
- բ. Մարզերում բնակվող և հաշմանդամություն ունեցող երեխաներին հասանելի չեն համարժեք խնամքը և ծառայությունները, հատկապես՝ վաղ հայտնաբերման և վերականգնողական ծառայությունները,
- գ. Հաշմանդամություն ունեցող երեխաները մնում են խնամքի հաստատություններում նույնիսկ ավարտելուց հետո, քանի որ նրանց չեն տրամադրվում այլ լուծումներ, իսկ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները հա-

ճախ տեղավորվում են հոգեբուժական հիվանդանոցներում,

- դ. Չնայած ներառական կրթության ավելացող միտումերին, հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ, ովքեր ապրում են խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում, ֆորմալ կրթություն չեն ստանում,
- ե. Անվճար ծառայությունները ցածրորակ են, ինչը ստիպում է հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին՝ լրացուցիչ վճարումեր կատարել, օրինակ, որակյալ պրոթեզներ կամ օրթոպեդիկ կոշիկներ ստանալու համար,
- զ. Կրթական հաստատություններն ու ծրագրերը պետք է համապատասխանեցվեն համընդհանուր դիզայնի պահանջներին, որպեսզի նվազագույնի հասցվեն հաշմանդամություն ունեցող երեխաների հատուկ դպրոցներում կրթության տրամադրումը:
Կոմիտեն առաջարկել է (կետ 36)՝
 - միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող երեխաների ապահովման համակարգում ուղղությամբ և նրանց տրամադրել ընտանիքահեն և համայնքահեն խնամքի այլընտրանքային տարբերակներ.
 - բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական միջոցներ հատկացնել՝ ապահովելու վաղ հայտնաբերման և վերականգնո-

ղական ծառայությունների առկայությունը հաշմանդամություն ունեցող երեխաների, հատկապես՝ մարզաբնակ երեխաների համար,

- ապահովել համարժեք օժանդակության տրամադրումը հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ անգամ խնամքի հաստատություններն ավարտելուց հետո, ինչպես նաև՝ ապահովել, որպեսզի մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները ոչ թե տեղավորվեն հոգեբուժական հաստատություններում, այլ համայնքում ստանան համարժեք օժանդակություն և տեղ, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակին և մատչելիությանը,
- իրականացնել ծրագրեր որոնք կապահովեն հաշմանդամություն ունեցող երեխաների սահուն անցումը հանրակրթությունից/ հատուկ կրթական հաստատություններից դեպի անկախ, համայնքային կյանք, ներառյալ մասնագիտական կողմնորոշման և նախնական մասնագիտական կրթության ծրագրեր,
- շարունակել ջանքեր գործադրել՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին ներառելու ընդհանուր կրթական համակարգում, ընդ որում՝ այդ ընթացքում առանձնակի ուշադրություն դարձնել խնամքի հաստատություններում և գյուղական շրջաններում բնակվող

հաշմանդամություն ունեցող երեխաներին.

- հրատապ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որպեսզի ծառայություններ մատուցողները վճարներ չգանձեն անվճար ծառայությունների դիմաց, և կանոնավոր հսկողություն իրականացնել մատուցվող ծառայությունների և պրոդուկտների որակի նկատմամբ:

1) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԱՊԱԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

«Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշմամբ սահմանվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև կարգավորվում են այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման հետ կապված հարաբերությունները: Սույն կարգը ամբողջությամբ համահունչ է «Ինստիտուցիոնալ խնամքից դեպի համայնքային խնամքին անցնելու մասին» Եվրոպական և ՄԱԿ-ի երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի հիմնական դրույթներին:

Չնայած նրան, որ բնակչության սո-

ցիալական պաշտպանության ընդհանուր հաստատություններում խնամքի տակ գտնվող երեխաների թիվը շարունակում է նվազել, մասնագիտացված հաստատություններում այն ընդհանուր առմամբ չի նվազում, բժշկական հաստատություններից առողջական խնդիրներ ունեցող նորածիններին մանկատներ շարունակական տեղափոխման պատճառով, ինչպես նաև նշվածը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող երեխաների համար կենսաբանական ընտանիքներ վերադառնալու, որդեգրվելու կամ խնամատար ընտանիք տեղափոխվելու գրեթե անհնարինությամբ: Վերջին երեք տարիների ընթացքում 181 երեխա, այդ թվում՝ 97 առողջական խնդիրներ ունեցող երեխաներ, ծննդատներից տեղափոխվել են մանկատներ:

Ավելին, ըստ ՀՀ ԱՍՀՆ տվյալների՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է 65 երեխա, այդ թվում՝ 25 երեխա որդեգրվել է ՀՀ քաղաքացիների կողմից, նրանցից 3-ն ունեցել է առողջական խնդիր: Օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է 40 երեխա, և որդեգրված երեխաներից հաշմանդամություն է ունեցել 11-ը: Ըստ նախարարության տվյալների՝ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա հիմնականում չի որդեգրվում պայմանավորված այն

հանգամանքով, որ երկրում բավարար չեն առողջապահական ծառայություններն ու առողջական խնդիրներ ունեցող երեխաների վերականգնողական կենտրոնները:

Աշխատանքներ են իրականացվել թեկնածու խնամատար ընտանիքների վերապատրաստման ուղղությամբ: Սահմանվել են խնամատարության 4 տեսակ, որոնցից մեկը **Մասնագիտացված խնամատար ընտանիքը** նախատեսվում է այն դեպքերում, երբ գործ ունենք հաշմանդամություն, ծանր առողջական խնդիրներ, դաստիարակության դժվարություններ ունեցող, հոգեկան կամ վարքի խանգարումով, խորը սթրես ապրած (տրավմայի ենթարկված) երեխաների, ինչպես նաև անչափահաս մայրերի և նրանց երեխաների խնամատարության հետ:

Միաժամանակ, ըստ «Հյուսան Ռայթս Ուոչ» իրավապաշտպան կազմակերպության (Human Rights Watch)՝ ՀՀ կառավարությունը պարտավորվել է երեխաներին դուրս բերել առնվազն 22 մանկատներից, հատուկ դպրոցներից և գիշերօթիկ դպրոցներից և վերափոխել դրանք համայնքահեն ծառայություններ մատուցող ոչ բնակելի կենտրոնների, որևէ ծրագրեր չկան երկրի՝ բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված երեք մանկատները վերափոխելու ուղղությամբ: Բացի այդ, Կառավարությունը բավա-

րար չի կարևորել հաշմանդամություն ունեցող երեխաների վերադարձն իրենց ընտանիքներ և չի նախատեսել խնամքի այլընտրանքային լուծումներ նրանց համար:

րում նորածինների առողջական խնդիրների, զարգացման հապաղումների և վաղ միջամտությունների արդյունավետության վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահիստիտուցիոնալացման գործընթացին զուգահեռ իրականացնել հաշմանդամություն ունեցող երեխաների կենսաբանական ընտանիքների սոցիալական աջակցման ծրագրեր:
- Կենսաբանական և մասնագիտացված խնամատար ընտանիքների համար իրականացնել շարունակական և խորացված մասնագիտական զարգացման ծրագրեր:
- Իրականացնել ծրագրեր ուղղված համայնքահեն բազմաոլորտային (առողջապահական, կրթական և սոցիալական) ծառայությունների զարգացմանն և ստեղծմանը, հատկապես մարզերում բնակվող հաշմանդամություն կամ զարգացման հապաղում ունեցող երեխաների համար, ինչը կնպաստի երեխաների կենսաբանական ընտանիքում մնալուն և ապահիստիտուցիոնալացման գործընթացին:
- Բժշկական հաստատություններում իրականացնել իրազեկման ծրագրեր ծնողների համար՝ առողջապահական հաստատություններ

2) ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

Շարունակվում է ինստիտուցիոնալ խնամքից դեպի համայնքային խնամքին անցնելու գործընթացը, որի շրջանակներում ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել ՀՀ ԱՍՀՆ համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների վերակազմակերպման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծերը: Նախագծերով առաջարկություն է ներկայացվել առկա միջոցների շրջանակում հաստատությունների տեղակայման մարզերի գնահատված կարիքներին համապատասխան մարզի տարբեր համայնքներում ստեղծել երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ, դրանց ծառայությունների մատուցումը պատվիրակել մարզում գործող մասնագիտացված կազմակերպություններին, որոնք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին՝ ըստ գնահատ

ված կարիքների, կտրամադրեն մասնագիտական ծառայություններ, այդ թվում աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ մասնավորապես 0-6 տարեկան երեխաների խնդիրների հայտնաբերումը, կանխարգելումը և վաղ միջամտությունը:

Երեխաների խնամքի և պաշտպանության շուրջօրյա հաստատություններն ավարտելուց հետո հաշմանդամություն ունեցող երեխաները, հնարավորության դեպքում վերամիավորվում են իրենց կենսաբանական ընտանիքներին, իսկ դրա անհնարինության դեպքում մնում են պետության լրիվ խնամքի տակ և գնահատված կարիքների համապատասխան նրանց տրամադրվում է համապատասխան ծառայություն:

ԱՈԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ֆինանսական և տեխնիկական միջոցներ հատկացնել հատկապես մարզերում երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ ստեղծելու և դրանք հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի դարձնելու համար:
- Ուժեղացնել միջգերատեսչական համագործակցությունը՝ հաշմանդամություն կամ զարգացման հպարդում ունեցող երեխաների վաղ հայտնաբերումն, ուղղորդումն ու ծառայությունների մատուցումը

ապահովելու նպատակով,

- Ջանքեր գործադրել կենսաբանական ընտանիքին երեխայի վեամիավորման հնարավորությունները մեծացնելու ուղղությամբ՝ ընտանիքներին ֆինանսական, սոցիալական և մասնագիտական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

3) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՈՎԵՐ ԱՊՐՈՒՄ ԵՆ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

«Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն-

ների կողմից: Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության համակարգը լիովին կներդրվի մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը:

Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման արդյունքում՝

- հանրակրթական դպրոցներում կկիրառվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,.
- կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում.

- կկիրառվի երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ու վկայագրման նոր գործիքակազմ,
- կներդրվի ուսուցչի օգնականի հաստիք:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման համատեքստում, հատուկ դպրոցների վերակազմակերպման գործընթացը սկսվել է 2016 թվականին, ՀՀ Սյունիքի մարզից: Ընդ որում, յուրաքանչյուր մարզում, հատուկ դպրոցների վերակազմակերպմանը զուգահեռ, կիրականացվեն.

- նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում և
- սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոց:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրված՝ համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումն ապահովելու նպատակով, հաստատվել են մի շարք իրավական ակտեր: Որպես առաջին

քայլ, ՀՀ վարչապետի 2015 թվականի փետրվարի 17-ի N108-Ա որոշմամբ հաստատված՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի համաձայն, ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

- «Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N1506-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N1330-Ն որոշումը.
- «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշումը.
- «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության

րության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1047-Ն որոշումը.

- «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N968-Ն որոշումը.
- «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1058-ն որոշումը:
Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը կանոնակարգելու նպատակով հաստատվել են նաև՝
- «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը հաստատելու, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 6-ի N1281-Ն և 2009 թվականի նոյեմբերի 11-ի N927-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի օգոստոսի 23-ի N825-Ն հրամանը.
- «Մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները

հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 23-ի N1202-Ա/2 հրամանը, (նոր չափանիշները մշակվել են Համաշխարհային առողջապահական կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա.

- «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N370-Ն հրամանը:

Համընդհանուր ներառականության անցումը նոր է սկսվել և դեռևս վաղ է գնահատականներ տալը, բայց առկա են որոշակի մտահոգություններ: Մասնավորապես, հանրակրթական դպրոցներում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաները շարունակում են առանձնացվել մյուս երեխաներից: Բազմաթիվ դպրոցներում երեխաներին պիտակավորում են «ներառական երեխաներ» արտահայտությամբ: Թեև իրականացվում են վերապատրաստումներ դպրոցների տնօրենների, ուսուցիչների համար, բայց դեռևս պարզ չէ, թե որքանով են դրանք արդյունավետ, որքանով են ուսուցիչները կարողանում արդյունավետ կիրառել ներառականությունը: Լուրջ անելիքներ կան նաև ուսուցչի

օգնականի հաստիքն առավելապես արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:

Առկա են նաև կրթության իրավունքի իրացման խնդիրներ: 2016 թվականին Պաշտպանին ուղղված դիմում-բողոքով Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում սովորող երեխաների մի խումբ ծնողներ բարձրաձայնել են կրթահամալիրում բացի ռուսերենից այլ օտար լեզու չդասավանդելու խնդիրը: Դիմումի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և որոշ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված է անգլերեն լեզվի ուսուցում, մինչդեռ լսողության խանգարումներ ունեցող երեխաների հանրակրթական հատուկ կրթահամալիրի օրինակելի ուսումնական պլանով այն չի նախատեսվում⁴³:

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Միաժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման սկզբունքներից է այն, որ կրթության առանձնահատուկ

43 ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N1 արձանագրային որոշման Հավելված N1:

պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում: Մինչդեռ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նշված խնդրի կապակցությամբ հայտնել է, որ հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուստարվա օրինակելի ուսումնական պլանների մայրենի (հայերեն) լեզվից բացի նախատեսված է նաև «Ժեստերի լեզու» և «Ռուսաց լեզու» առարկաների դասավանդում: Հայտնել են նաև, որ նոր օտար լեզվի ուսուցումը կարող է առաջացնել ուսումնառության լրացուցիչ դժվարություններ և գրեթե անհաղթահարելի խնդիրներ լսողության խանգարում ունեցող երեխաների մեծ մասի համար: Միաժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ մյուսների հետ հավասար իրավունքներ ունենալու մասին դրույթի հետ կապված նշել են, որ այդ իրավունքն այս դեպքում իրացված է, քանի որ ուսումնական պլանի բովանդակությունը համապատասխանում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի և Հանրակրթության պետական չափորոշի պահանջներին: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ

հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման «Հանրակրթության պետական չափորոշիչ» վերտառությամբ 2-րդ Հավելվածի՝ «Հանրակրթական ծրագրերի առարկայացանկի ձևավորման հիմնական սկզբունքները» վերտառությամբ՝ III-րդ բաժնի 13-րդ կետի համաձայն, միջնակարգ հանրակրթական ընդհանուր պետական ծրագրում «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է երկու լեզվով: Օտար լեզուների ընտրության կարգն ու ըստ դասարանների դրանց դասավանդման հերթականությունը սահմանվում են օրինակելի ուսումնական պլանով: Սահմանվում է նաև, որ հանրակրթական հատուկ և մասնագիտացված պետական ծրագրերի առարկայացանկը մշակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի առարկայացանկի հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների զարգացման առանձնահատկություններն ու

ծրագրի մասնագիտական ուղղվածությունը: Միաժամանակ, ՀՀ ԿԳ նախարարի՝ «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական 287 հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ հաստատելու մասին» 2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն հրամանի 3-րդ Հավելվածով հաստատված Հանրակրթական հատուկ ուսումնական հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների 7-րդ կետի համաձայն՝ օտար լեզվի ընտրության կարգը սահմանված է հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսումնական պլանի (նշված հրամանով հաստատված Հավելված 1)՝ հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում: Նշված կարգի համաձայն՝ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից առաջինը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

Ուսումնական հաստատությունների շենքերի մեծ մասը հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երե-

խաների համար: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզ հաճախում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներ ունեցող մինչև 6 տարեկան միջինը 24 երեխաներ, որոնց մատուցվում են բազմամասնագիտական ծառայություններ: Այդուհանդերձ, նախադպրոցական կրթությունը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների, 2016-2017 թվականների ուսումնական տարում դպրոցից դուրս մնացած 260 երեխաներից միայն 10-ը դուրս են մնացել հաշմանդամություն ունենալու պատճառով: Այդուհանդերձ, այս տվյալները լրացուցիչ ճշգրտման կարիք ունեն:

Հաշվի առնելով վերը նշված զարգացումները, գտնում ենք, որ Կոմիտեի առաջարկությունը մասամբ է կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համընդհանուր ներառականության անցման գործընթացում հիմնական շեշտը դնել ուսուցիչների մասնագիտական վերապատասխանման վրա: Ուսուցչներին արդյունավետ մոտեցումներ առաջարկելուց է մեծապես կախված համընդհանուր ներառականու-

թյան հաջողությունը:

- Ուսումնական հաստատությունների շենքերը և ուսումնական ծրագրերը մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար:
- Կարևորել նախադպրոցական կրթության ոլորտում ներառական կրթության ապահովումը՝ հաշվի առնելով վաղ մանկության կրթության արդյունավետությունը:
- Հետևողականորեն իրագործել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի, 24-րդ հոդվածի պահանջները՝ հաղորդակցմանն ուղղված համապատասխան նյութեր, տեխնիկա և ձևեր ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես՝ կույր և/կամ խուլ երեխաները պետք է ստանան իրենց կրթությունը ուսուցիչների կողմից ցուցաբերվող ամենապատշաճ հաղորդակցման միջոցներով: Կրթական համակարգում պետք է լինեն ուսուցիչներ, ովքեր սահուն տիրապետում են Բրայլին և նշանների լեզվին:
- Ապահովել միջգերատեսչական համագործակցություն ուսումնական հաստատությունների, համանախնային սոցիալական աջակցության կենտրոնների և առողջապահական հաստատությունների միջև՝ հաշմանդամություն ունեցող կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ան-

հատականացված աջակցման ծրագիր մշակելու և իրականացնելու համար:

4) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Իրականացվում են հասցեական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց (երեխաների) վերականգնմանը, նրանց որոշակի խնդիրների լուծմանն ու սոցիալական ներառմանը: Մասնավորապես, պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, այդ թվում վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, սեղմիրաններ, քայլակներ, հենակներ, օրթոպեդիկ կոշիկներ, պրոթեզի կոշիկներ, գուլպաներ, ձեռնոցներ, աչքի պրոթեզներ, լսողական սարքեր, հաշմանդամի սայլակներ և այլն:

Անձի կարիքին համարժեք սոցիալական ծառայություն մատուցելու նպատակով պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման գործընթացում պարբերաբար իրականացվում են բարեփոխումներ: Այսպես, ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման համաձայն,

լսողական սարքերը և հաշմանդամի սայլակները կտրամադրվեն պետական հավաստագրերի հիման վրա: Ի տարբերություն մրցութային ընթացակարգերի, որը պարտադրում է կոնկրետ տեսակի պարագայի հատկացում նախապես մրցութով հաղթած կազմակերպությունից, հավաստագրերը հնարավորություն են տալիս մարդուն ընտրել այն կազմակերպությունը, որը կարող է հատկացնել իր կարիքին համարժեք պարագան: Գործընթացը կրելու է շարունակական բնույթ:

Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ տրամադրող ցերեկային կենտրոնների գործունեությունը՝ պետական աջակցություն է ցուցաբերվում, օրինակ, «Փրկություն», «Լիարժեք կյանք», «Իմ ուղին» հասարակական կազմակերպություններին: Ցերեկային կենտրոններում խնամքի և սոցիալական այլ ծառայությունների մատուցումը նպաստում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառմանը, այլև նրա՝ ընտանիքում ապրելու և նրանց ընտանիքների անդամների զբաղվածության հարցերի կարգավորմանը:

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը չորս ցերեկային կենտրոնում /Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ/ պետական աջակցությամբ ծառայություններ է մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամու-

թյուն ունեցող երեխայի:

Այդուհանդերձ, մատուցվող ծառայությունները հասանելի չեն հատկապես գյուղաբնակ և մարզաբնակ հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Ծնողները ստիպված են հսկայական գումար ծախսել ծառայություն մատուցող հաստատություն երեխային հասցնելու համար: Կան մտահոգություններ անվճար հատկացվող սարքերի, միջոցների որակի հետ կապված: **Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բացառել հաշմանդամություն ունեցող երեխաներին անորակ կամ վճարովի ծառայությունների, սարքավորումների, պարագաների մատուցումը: Այս իմաստով առաջարկվում է զարգացնել **մշտադիտարկման մեխանիզմ, որը թույլ կտա ծառայության որակին վերաբերվող նվազագույն պահանջներ սահմանել և գնահատել տրամադրվող ծառայությունների և պարագաների որակը:** Ինչպես նաև թույլ կտա տեղեկություն ունենալ տրամադրված և անհրաժեշտ ծառայությունների ծավալի և վճարովի տրամադրվող ծառայությունների մասին:
- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն

ունեցող երեխաներին մատուցվող ծառայությունները հասանելի դարձնել բոլոր մարզերում:

- Սահմանել ծառայությունների մատուցման մինիմում չափանիշներ և իրականացնել ծառայությունների որակի մշտադիտարկում:

2. ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իր դիտարկումներում կոմիտեն ողջունել է Անվճար ծննդագնության պետական հավաստագրի 2008 թվականի ծրագիրը և Երեխաների հավաստագրի 2011 թվականի ծրագիրը, որոնք նպատակաուղղված են մոր և մանկան առողջության բարելավմանը: Կոմիտեն նաև ողջունել է Միկրոտարրերով և վիտամիններով ցորենի ալյուրի հարստացման 2011 թվականի հայեցակարգի և Պարենային անվտանգության հայեցակարգի և 2010-2015 թվականների գործողությունների ծրագրի հաստատումը:

Իր դիտարկումներում կոմիտեն մտահոգություն է հայտնել հետևյալ հարցերի շուրջ՝

- ա. քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև առկա են առողջապահական ծառայությունների հասանելիության էական տարբերություններ, քանի որ որոշ ծառայություններ, օրինակ՝ ինտենսիվ նեոնատալ խնամքի ծառայություն-

ները, առկա են միայն մայրաքաղաքում.

- բ. չնայած նորածնային մահացության կրճատման առումով ունեցած ձեռքբերումներին, նեոնատալ և պերինատալ մահացության ցուցանիշները մնում են բարձր՝ պայմանավորված նեոնատալ բաժանմունքներում սարքավորումների անբավարարությամբ և աշխատողների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածությամբ.
- գ. ոչ պաշտոնական (չձևակերպվող) վճարումները լայն տարածում ունեն, հատկապես՝ հիվանդանոցային պայմաններում, ինչը խոչընդոտում է անվճար բուժօգնության հասանելիությանը.
- դ. չկան բավարար թվով որակավորված բուժաշխատողներ, ովքեր կունենային մոր և մանկան առողջության ծառայությունների մատուցման բավարար փորձ թե՛ պրոֆիլակտիկայի, թե՛ արտաքին բուժման ծառայությունների կամ՝ հիվանդանոցներում բուժում իրականացնելու առումերով.
- ե. չնայած սնուցման ոլորտում ունեցած էական ձեռքբերումներին, կանանց և երեխաների շրջանում թերսնուցման խնդիրները շարունակում են լայն տարածում ունենալ, հատկապես՝ գյուղական շրջաններում, և գիրության բարձր ցուցանիշ է նկատվում մինչև 5 տարեկան երեխաների շրջանում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 38)՝

- ապահովել առողջապահական բուժքննարկության ծառայությունների հավասար հասանելիությունը, մասնավորապես՝ արդար կերպով ապահովել առողջապահական ծառայությունների հասանելիությունը հղիության, ծննդաբերության ընթացքում, ներառյալ՝ շտապ ծննդաբերության և նեոնատալ շրջանում նորածնի խնամքի տեսքով, ինչպես նաև՝ բավարար ռեսուրսներ ապահովել գյուղական բնակավայրերում շտապ բուժօգնության և վերակենդանացման ծառայություններ մատուցելու համար.
- առողջապահական հաստատություններին տրամադրել բավարար նյութատեխնիկական միջոցներ, պարագաներ և սարքավորումներ, մասնավորապես՝ նեոնատալ բաժանմունքներում, ինչպես նաև՝ կազմակերպել աշխատողների մասնագիտական վերապատրաստումը.
- վերացնել անվճար առողջապահական ծառայությունների դիմաց կատարվող բոլոր ոչ պաշտոնական վճարումները, և ստեղծել այս պահանջը չկատարելու դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու և միջոցներ ձեռնարկելու գաղտնի համակարգ.
- միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու երեխաների առողջապահության համար պատասխանատու առող-

ջապահական բոլոր մասնագետների պատշաճ որակավորումը և մասնագիտական պատրաստվածությունը.

- շարունակել հղի կանանց, նորածինների, նախադպրոցական տարիքի երեխաների և դեռահասների սնուցման վիճակի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրերի և հայեցակարգերի իրականացումը, հատկապես՝ գյուղական բնակավայրերում: Դա ներառում է առողջ սննդի սովորությունների տարածումը, շաքարով հարուստ ըմպելիքների և վերամշակված արագ սննդի ավելորդ սպառման նվազեցումը, քանի որ դա նպաստում է երեխաների շրջանում գիրության խնդիրների սրացմանը:

1) ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ

Առկա է առողջապահական ծառայությունների հասանելիության տարբերություն քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև, ինչի մասին են վկայում նաև մի շարք ուսումնասիրություններ: Այսպես, 2015 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ

մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» շրջանակներում այցեր են կատարվել ՀՀ մի շարք բժշկական հաստատություններ:⁴⁴ Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գյուղերում և քաղաքներում առկա է առողջապահական որոշ ծառայությունների տարբերություն. որոշ ծառայություններ չեն մատուցվում գյուղերում, ուստի կանայք ստիպված են լինում այցելել մոտակա քաղաքներ:

Մեկ այլ ուսումնասիրության շրջանակներում մի շարք բժշկական կազմակերպությունների ներկայացուցիչներ կարծիք են հայտնել, որ շտապօգնության կայանների տեղաբաշխումը ճիշտ կատարված չէ: Բացի այդ, որպես խնդիր՝ այդ ուսումնասիրությամբ բարձրաձայնվել է նաև բրիգադների քանակի հարցը: Հարցմանը մասնակցած որոշ բուժաշխատողներ նշել են, որ մեկ բրիգադը սպասարկում է 60 կմ շառավղով տարածք, ինչը եղած ռեսուրսներով հնարավոր չէ ապահովել, ինչի արդյունքում հնարավոր է շտապօգնության ուշացում մինչև երկու ժամ և ավել ժամկետով⁴⁵:

Նշյալ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայ-

լեր: Այսպես, ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ վերջին տարիներին հանրապետության 9 մարզային բուժհաստատություն վերանորոգվել է, ստեղծվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած խառը (մեծերի և մանկական) վերակենդանացման բաժանմունքներ, ստեղծվել և հագեցվել է 3 միջմարզային նշանակության մանկական վերակենդանացման բաժանմունք, տրամադրվել են նորածինների խնամքի և անհետաձգելի բուժօգնության սարքավորումներ: Ավելին, 2016 թվականին կառուցված՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու ԲԿ-ի թերապևտիկ բաժանմունքում ներառված է 10 մանկական մահճակալ: Կենտրոնի վերակենդանացման բաժանմունքը հագեցվել է երեխաների ինտենսիվ բուժօգնության համար նախատեսված սարքավորումներով: Ըստ նախարարության տվյալների՝ վերոնշյալ ԲԿ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներում գործում է նորածինների ինտենսիվ թերապիայի ծառայությունը՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով, մասնավորապես՝ նորածինների ինտենսիվ թերապիայի համար նախատեսված սեղան՝ տաքացուցիչով, նորածինների թոքերի արհեստական օդափոխության սարք, հետազոտման լամպ, ինֆուզոմատներ և այլ:

44 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2IORuyW>:

45 Հասանելի է հետևյալ հղումով. <https://transparency.am/files/publications/1515577747-0-615102.pdf>:

Բացի դրանից, Առողջապահության տրամադրած տվյալների համաձայն՝ ԵՊԲՀ-ի «Մուրացան» բժշկական համալիրում գործող նորածնային անհետաձգելի բուժօգնության ծառայությունն համալրվել է 2 ռեանիմոբիլով, իսկ վերջինիս նորածնային վերակենդանացման մասնագետների ներգրավմամբ ներդրվել է շուրջօրյա 24/7 խորհրդատվության համակարգ բոլոր հիվանդանոցների համար: Հանրապետության 35 բուժհաստատություն ապահովվել է անվճար հեռախոսային և ինտերնետային կապով՝ «Մուրացան» հիվանդանոցային համալիրում հիմնված 24/7-ի մասնագետներից խորհրդատվություն ստանալու համար:

Ավելին, նախարարության կողմից տրամադրված տվյալները փաստում են, որ հանրապետության ծննդատներում պտղի սրտի կրիտիկական բնածին արատների վաղ հայտնաբերման սկրինինգի ներդրման նպատակով նորածինների խնամք և բուժօգնություն իրականացնող հանրապետության բոլոր բաժանմունքներին տրամադրվել են պուլս-օքսիմետրեր:

Միջոցառումներ իրականացվել են մաս ալ կազմակերպությունների աջակցությամբ: Ըստ Առողջապահության նախարարության տվյալների՝ Վիժն կազմակերպության կողմից Սիսիանի, Գորիսի, Կապանի, Գավա-

ռի, Վարդենիսի, Ճամբարակի բուժհաստատություններին տրամադրվել են նորածնային խնամքի և ինտենսիվ թերապիայի, նախածննդյան խնամքի և պտղի ախտորոշման համար անհրաժեշտ սարքավորումներ: Ավելին, «Վիվա-Սելլ» ընկերության կողմից 9 մարզային և Երևանի 2 ծննդատներին տրամադրվել են նորածինների վերակենդանացման և ինտենսիվ խնամքի համար անհրաժեշտ սարքավորումներ:

Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվականի զեկույցի՝ մինչև 5 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունների 36.9%-ը պրոֆիլակտիկ զննման կամ հետծննդյան խորհրդատվության համար հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում երեխաներին բերել են պոլիկլինիկա, իսկ չհաճախման պատճառները (պատասխանների նկատմամբ) բաշխվել են հետևյալ կերպ՝ ծառայություններն անհրաժեշտ չեն՝ 95.7%, բուժսպասարկման որակը անբավարար է՝ 0.6%, շատ հեռու է՝ 0.5%, շատ թանկ է՝ 0.6%, բուժհաստատությունը փակ է՝ 0.0%⁴⁶: 2012 թվականի համեմատ արձանագրվել է որոշակի հետընթաց: Եթե 2012 թվականին որակն անբավարար են գնահատել հարցվածների 0.2%-ը⁴⁷, ապա 2016 թվականին՝ այդ ցուցանիշը կազմել է 0.6%: 2012 թվա-

46 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=80&id=1819>:

47 Հասանելի է հետևյալ հղումով. http://armstat.am/file/article/poverty_2013a_4.pdf:

կանին հարցվածները 0.1%-ն է ծառայությունները թանկ գնահատել, իսկ 2016-ին՝ 0.6%-ը⁴⁸:

Չնայած ձեռնարկված վերոնշյալ քայլերի՝ քաղաքայի և գյուղական համայնքների միջև առկա բժշկական որոշ ծառայությունների անհամաչափ հասանելիության հարցը դեռևս համակարգային առումով լուծում չի ստացել: Սույն զեկույցի մշակման ընթացքում ոլորտի փորձագետների հետ իրականացված հարցազրույցների ժամանակ վերջիններս նշել են, որ երկրում գործող նորաձևային բաժանմունքներ ունեցող որոշ հաստատություններ անարդյունավետ են որակի տեսանկյունից: Մասնավորապես, փորձագետների կարծիքով, գյուղերում մանկաբույժները պարբերաբար չեն այցելում նորաձիններին՝ տրանսպորտային խնդիրների պատճառով: Արդյունքում, նորաձինն այցելում է տեղի բժիշկը կամ բուժքույրը:

Ավելին, նշվել է նաև, որ գյուղերի բնակիչները նորաձիններին տանում են Երևան, առանց տեղի մանկաբույժին իրազեկելու կամ նրա հետ խորհրդակցելու, այն պարագայում, երբ կարելի է խորհրդակցել վերջինիս հետ և երեխային տեղափոխել օրինակ Երևան ուղեգրի առկայության պարագայում: Ստացվում է, որ առկա է նաև անվստահություն, որի պատճառով լիարժեք չի գործում ուղեգրման համակարգը: Փորձագետները բարձրա-

ձայնել են նաև նորաձինների՝ Երևան տեղափոխության կատարման խնդիրները, նշելով, որ այն կատարվում է ավտոմեքենաներով կամ Շտապ օգնության մեքենաներով՝ ռեանիմոբիլների բացակայության պատճառով:

Փորձագետների կարծիքով, շրջաններում գտնվող հաստատություններում չկան բավարար թվով սարքավորումներ և մասնագետներ՝ ռիսկային հղիությունը վաղ շրջանում ախտորոշելու և միջոցներ ձեռնարկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրահանգել, որ դեռևս խնդիր է գյուղական վայրերում առողջապահական որոշ ծառայությունների մատչելիության հարցը: **Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տրանսպորտային միջոցներ և ֆինանսական միջոցներ հատկացնել մանկաբույժների պարբերական այցերը դեպի գյուղեր ապահովելու համար:
- Մարզային հաստատությունները հագեցնել սարքավորումներով:
- Բարձրացնել մարզային նորաձևային բաժանմունքներ ունեցող հաստատությունների արդյունավետությունը:

48 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=80&id=1819>:

- Ավելացնել շտապօգնության բրիգադների քանակը և վերանայել կայանների տեղեկայվածությունը:

2) ՆԵՈՆԱՏԱԼ ԵՎ ՊԵՐԻՆԱՏԱԼ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2011 թվականից ի վեր արձանագրվել է երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի, տնային մահերի դեպքերի թվի իջեցում, ինչպես նաև մանկական (0-1 տարեկան) և 0-5 տարեկան երեխաների մահացության էական կրճատում (2016 թվականի մանկական մահացության ցուցանիշը կազմում է 8,8‰՝ 2010 թվականի 11,4‰ համեմատությամբ): Ավելին, 2013 թվականին Հայաստանում առաջին անգամ գրանցվեց 10% ցածր մանկական մահացության ցուցանիշ, ինչի շնորհիվ Հայաստանը դասվեց ցածր մանկական մահացություն ունեցող երկրների շարքում:

Մանկական մահացության կառուցվածքում վաղ նորածնային մահացության տեսակարար կշռի կրճատում շուրջ 10%-ով, իսկ պերինատալ պատճառներից մանկական մահացության ցուցանիշի նվազել է գրեթե 1/3-ով:

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 արձանագրային որոշմամբ ընդունված Երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական

ծրագրով նախատեսվում են հետևյալ թիրախները.

ա. նորածնային (0-28 օրական) մահացության ցուցանիշը կկրճատվի նվազագույնը 15%-ով (ելակետ՝ 6.7 ‰, նպատակակետ՝ $\leq 5,5$ ‰),

բ. բնածին արատներով ծնված երեխաների տեսակարար կշիռը նորածինների ընդհանուր թվաքանակում կնվազի շուրջ 15%-ով (ելակետ՝ 1.7 ‰, նպատակակետ՝ $\leq 1,5$ ‰),

գ. մանկական (0-1 տարեկան) մահացության ցուցանիշը կնվազի 20%-ով (ելակետ՝ 8,8 ‰, նպատակակետ՝ ≤ 7 ‰),

դ. մինչև 5տ. երեխաների մահացության ցուցանիշը կնվազի 20%-ով (ելակետ՝ 10,3%, նպատակակետ՝ $\leq 8,5$ ‰),

ե. մինչև 1 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշը կնվազի 10%-ով (ելքային ցուցանիշ՝ 1.7%, նպատակակետ՝ $\leq 1,5$ ‰),

զ. մինչև 14 տարեկան երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշը կնվազի 20%-ով (ելքային ցուցանիշ՝ 0,5%, նպատակակետ՝ $\leq 0,4$ ‰),

Նեոնատալ մահացածության ցուցանիշը շարունակում է մնալ բարձր, կազմելով մանկական մահացության շուրջ 70%-ը: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2017»

զեկույցի, 2016 թվականին Հայաստանում արձանագրվել է մանկական մահացածության 352 դեպք, որից 249-ը նեոնատալ մահեր են (0-28 օրական)⁴⁹: Ըստ Առողջապահության ազգային ինստիտուտի տվյալների, վաղ նեոնատալ մահերի թիվը 2016 թվականին եղել է 177, որից 67-ը (վաղ նեոնատալ մահացածության դեպքերի 37.9%-ը) ծնվելուց հետո կյանքի առաջին 24 ժամվա ընթացքում⁵⁰: Առկա են էական տարբերություններ քաղաքների և գյուղերի միջև: 1000 կենդանի ծնվածի հաշվով մանկական մահացածության գործակից Հայաստանում 8.6 է: Ըստ քաղաք-գյուղ տարանջատման, այդ ցուցանիշները համապատասխանաբար 7.6 և 1.6 են⁵¹:

Փորձագետները բարձրաձայնում են մասնագետների վերապատրաստման անհրաժեշտության հարցը, հատկապես մարզային հաստատություններում: Փորձագետների կարծիքով, հիմնական խնդիրներից է այն, որ չկա նեոնատալ բուժքույրի մասնագիտացում ուսումնական հաստատություններում, ուստի ոլորտում աշխատող բուժքույրերն ունեն ընդհանուր կրթություն և մասնագիտացած չեն տվյալ հարցերում: Որոշ մարզային հաստատություններում առկա է նեոնատոլոգների պակաս:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բարելավել նեոնատոլոգների և բուժքույրերի նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմները:
- Անհրաժեշտ է ներդնել նեոնատոլոգների և նեոնատալ բուժքույրերի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող մասնագիտական որակավորման չափորոշիչներ:

3) ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ԶԶԵՎԱԿԵՐՊՎՈՂ) ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ (ՀԱՏԿԱՊԵՍ ՀԻՎԱՆԴԱՆՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ)

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն բժշկական օգնության և սպասարկման հիմնական տեսակներից է առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկ-

49 Հասանելի է հետևյալ հղումով. http://armstat.am/file/article/demog_2017_4.pdf:

50 Հասանելի է հետևյալ հղումով. http://nih.am/uploads/files/statbook_2017_arm.pdf:

51 Հասանելի է հետևյալ հղումով. http://armstat.am/file/article/demog_2017_4.pdf:

ման տեսակ: Միաժամանակ, մամուլի հրապարակումները, ոլորտում իրականացված ուսումնասիրությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ դեռևս առկա է բժշկական ծառայությունների դիմաց արվող ոչ պաշտոնական վճարումների պրակտիկան: Ինդիքը թե՛ անվճար ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկման պակասն է, թե՛ գործնականում այդ ծառայությունների դիմաց բուժաշխատողների կողմից վճար պահանջելը:

Այսպես, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ), ԱՄՆ ՄԶԳ-ի և «Ասպարեզ» լրագրողների ակումբի նախաձեռնությամբ «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում Հայաստանի 10 մարզերում իրականացված և 2017 թվականին հրապարակված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շատ հիվանդներ տեղյակ չեն պոլիկլինիկաներում մատուցվող անճար, վճարովի և համավճարի սկզբունքով գործող ծառայությունների մասին: Այսպես, ուսումնասիրության շրջանակներում անցկացված հարցման համաձայն՝ հարցվածների 22.7%-ը կարծում է, որ պոլիկլինիկաներում մատուցվող ծառայությունները

և թերապևտի՝ տուն կանչը «մասամբ են վճարովի», 4.3%՝ որ այդ ծառայությունները լիովին վճարովի են, իսկ մնացած 19% -ը խոստովանել է, որ ընդհանրապես ոչինչ չգիտի վճարովի և անվճար ծառայությունների մասին: Փորձագետների պնդմամբ ստեղծված իրավիճակը բնակչության շրջանում անվճար և վճարովի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման համար բավարար քայլեր չձեռնարկելու արդյունք է:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրությունը պարզել է նաև, որ շատ դեպքերում, նշված մարդիկ վճարել են բուժաշխատողներին սեփական նախաձեռնությամբ, իսկ բուժաշխատողները հազվադեպ են գումար պահանջել (դեպքերի միայն 4%-ը)⁵²: Ինչ վերաբերում է պոլիկլինիկաներին, ապա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդիկ հիմնականում վճարել են տարբեր բժշկական ընթացակարգերի, ախտորոշման, խորհրդատվությունների և հետազոտությունների համար: Միևնույն ժամանակ, 64% դեպքերում նրանք վճարել են բուժաշխատողների պահանջով, իսկ 36% դեպքերում՝ սեփական ցանկությամբ՝ ավելի որակյալ ծառայություններ ստանալու ակնկալիքով⁵³: Ավելին, Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության (ՀԺԱՀՀ) 2015-2016

52 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2xIKhFg>, <https://bit.ly/2GSYUzn>:

53 Տես նույն տեղում:

համաձայն, ծնունդների 13%-ի դեպքում կատարվել են ծննդաբերության հետ կապված վճարումներ: 2010 թվականի նույն հետազոտության համաձայն, վճարողների թիվն ավելացել է շուրջ 5%-ով (7,9%): Ընդ որում աճել է գյուղաբնակների թիվը: Եթե 2010 թվականին վճարումներ կատարել է գյուղաբնակ կանանց 5.8%-ը, ապա 2015-ին ցուցանիշը դարձել է 14.1%: Գրեթե բոլոր կանայք վճարումները կատարել են կանխիկ: Հարցված 5 կանանցից 2-ը վճարել են 51 հազար և ավելի դրամ⁵⁴:

Անվճար բուժօգնության տրամադրման և դրա մատչելիության ապահովման համար իրականացվել են մի շարք քայլեր: Այսպես, ըստ ՀՀ առողջապահության տրամադրած տվյալների՝ 2008 թվականին Հայաստանում ներդրվել է ծննդօգնության պետական հավաստագիրը, որի միջոցով կանայք իրավասու են ստանալ անվճար բուժօժանայություններ ծննդաբերության համար: Ավելին, ոչ պաշտոնական վճարումների նվազեցման և երեխաների բուժօգնության որակի բարելավման նպատակով 2011 թվականի հունվարի 1-ից, որպես ծննդօգնության պետական հավաստագրի տրամաբանական շարունակություն, Հայաստանում ներդրվել է երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը: Հավաստագրի համակարգի

ներդրման երաշխիք հանդիսացավ երեխայի հիվանդանոցային բուժօգնության ծրագրի ֆինանսավորմանն ուղղվող բյուջետային միջոցների կրկնակի ավելացումը, որը 2011 թվականին դարձավ 6,38 մլրդ դրամ՝ 2010 թվականին 3,16 մլրդ համեմատությամբ:

Նախարարության տվյալների համաձայն՝ տրվող բուժօգնության դիմաց գումար գանձելու կամ պահանջելու դեպքերը կանխելու նպատակով 0-7 տարեկան բոլոր երեխաներին տրվում է երեխայի առողջության պետական հավաստագիր, որի դարձերեսին զետեղված է տեղեկատվություն՝ անվճար հիվանդանոցային բուժօգնության ծավալների վերաբերյալ, իսկ անմիջական կապ պահանջելու և հարցերին օպերատիվ լուծում տալու նպատակով նշված են ՀՀ առողջապահության նախարարության շուրջօրյա թեժ գծի և մոր և մանկան առողջության պահպանման վարչության հեռախոսահամարները: Ծրագրի ներդրման ընթացքը մշտադիտարկվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակիցների պարբերական այցելությունների և դուրս գրված հիվանդներին կատարվող հեռախոսազանգերի միջոցով, ինչպես նաև թեժ գծին ուղղված բողոքների և տեղեկատվական հարցերի ուսումնասիրման միջոցով: Ավելին, ծրագրի ներդրման արդյունավե-

54 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf>:

տության գնահատման նպատակով Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից իրականացվել է հետազոտություն Ծրագրի նախնական և ընթացիկ (6 ամիս անց) գնահատման արդյունքները վկայում էին ոչ պաշտոնական վճարների ավելի քան 4-5 անգամ կրճատման մասին: Հարցմանը մասնակից և հավաստագրերից օգտված մայրերի 79% Երևանում և 91% մարզերում նշել էին, որ գոհ են մատուցված ծառայություններից, քանի որ ստացել են անվճար բուժօգնություն:

Ըստ նախարարության տվյալների՝ 2013 թվականին ՀՀ առողջապահության նախարարության և Վորլդ Վիժն Հայաստանի կողմից իրականացվել է Երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագրի ընթացիկ գնահատումը: Ըստ նշված ուսումնասիրության՝ հարցվածների 99% նշել է, որ հիվանդանոց ընդունվելու ժամանակ տեղեկացված է եղել, որ մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բուժօգնությունն անվճար է, ինչը վկայում է բնակչության բարձր իրազեկվածության մասին: Իրազեկման հիմնական աղբյուր ամենից հաճախ նշվել է երեխայի պետական հավաստագիրը (67,3%), բուժաշխատողները (25,2%), այնուհետև՝ լրատվամիջոցները, պաստառները, բարեկամները՝ համապատասխանաբար՝ 4.1%, 2.0%, 1.4%: Այն հարցին,

թե «Հիվանդանոցում երեխայի բուժման համար որևէ գումար վճարել եք (այդ թվում նաև «մաղարիչ»)» հարցին դրական է պատասխանել 149 հարցվածներից 22-ը (14.8%): Ընդ որում, յուրաքանչյուր երկրորդ վճարում կատարող նշել է, որ վճարել է այլ դեղատններից գնված դեղորայքի և բժշկական պարագաների համար՝ միջինում ծախսելով 12.400 ՀՀ դրամ: Վճարում կատարողներից 36%-ը (8) նշել են, որ վճարել են բուժող բժշկին: Բուժող բժշկին տրված վճարի միջին չափը կազմել է 7.600 ՀՀ դրամ:

Չնայած վերոնշյալ քայլերի՝ սույն բաժնում վկայակոչված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս վերացված չէ ոչ պաշտոնական վճարումների պրակտիկան: Հետազոտությունների արդյունքների ամփոփումը վկայում է այն մասին, որ այդ վճարումները կատարվում են թե՛ պացիենտների սեփական նախաձեռնությամբ, թե՛ որոշ դեպքերում նաև բուժաշխատողների պահանջով: Խնդիրը համակարգային առումով դեռևս կապված է նաև անվճար բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ իրազեկման ցածր մակարդակի հետ: Ավելին, դեռևս մշակված և ներդրված չէ դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդում ներկայացնելու գործուն համակարգ:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Բացառել ոչ պաշտոնական վճարումները՝
 - շարունակել բուժաշխատողների և հասարակության իրազեկումն անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ,
 - ներդնել ոչ պաշտոնական վճարումների դեպքերի վերաբերյալ անանուն հաղորդումներ ներկայացնելու գործուն համակարգ:

4) ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԹԵՐՍՆՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կանանց և երեխաների թերսնուցման խնդիրը և դրա հետևանքները բազմիցս քննարկվել և ուսումնասիրվել են մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից: Խնդիրը դիտարկվում է թե՛ կոնկրետ անձի առողջության պահպանման, թե՛ առհասարակ հասարակության վրա դրա ազդեցության տեսանկյունից: Ընդ որում թերսնուցումը կարող է հանդիսանալ որոշ հիվանդությունների ծագման պատճառ, իսկ


կանանց թերսնուցումը հատկապես հղիության ժամանակ կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև պտղի զարգացման վրա:

Հայաստանի վերջին՝ ՀԺԱՀՀ 2015-2016 տվյալների համաձայն, բարելավվել են վաղ հասակի երեխաների սնուցման կարգավիճակը բնութագրող գրեթե բոլոր հիմնական ցուցանիշները: Այսպես 2015 թվականին երեխաների մոտ թերաճությունը, որով բնորոշում է քրոնիկ թերսնուցումը, կազմել է 9%՝ 2010 թվականի 19%-ի համեմատությամբ, թերսնվածության մակարդակը (սուր թերսնուցումը) մնացել է գրեթե նույնը՝ 4,2%, իսկ թերքաշությունը 2010 թվականի համեմատությամբ նվազել է 2%-ով՝ 2015 թվականին կազմելով 3%⁵⁵:

Այդուհանդերձ, ըստ ՀԺԱՀՀ 2015-2016 զեկույցի, մինչև 5 տարեկան երեխաների 14%-ն ունի գերքաշության խնդիր: Գերքաշության խնդիր ունի տղաների 15%-ը, աղջիկների՝ 13%-ը: 2005 թվականին Հայաստանում գերքաշության խնդիր ուներ երեխաների 11%-ը, 2010-ին այդ ցուցանիշը դարձավ 15%: Այսպիսով՝ վերջին 5 տարիներին գերքաշության ցուցանիշը մնացել է գրեթե նույն մակարդակի վրա:

55 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf>:

Աղյուսակ 2. Մինչև 5 տարեկան երեխաների սնուցման կարգավիճակի մի-
տումները, 2005-2016⁵⁶



Ըստ այդմ, թերսնուցման խնդիրը դեռևս մնում է ամբողջությամբ չլուծված, ինչի մասին են վկայում մի շարք ուսումնասիրություններ և փորձագետներ: Թերսնուցման խնդիրը կարող է կապված լինել ընտանիքների սոցիալ-տնտեսական և ֆինանսական իրավիճակի, սննդակարգի, ազգային խոհանոցի առանձնահատկությունների և մի շարք այլ գործոնների հետ⁵⁷: Որոշ ուսումնասիրությունների համաձայն՝ Հայաստանում աղքատ է յուրաքանչյուր երրորդ երեխան, իսկ յուրաքանչյուր երկրորդը խոցելի է բազմաչափ աղքատության տեսանկյունից⁵⁸, ինչն անդրադառնում է նաև սննդի վրա: Ուսումնասիրությունը ցույց է

տալիս, իրավիճակն առավել վիճահարույց է գյուղական համայնքներում ապրող երեխաների համար՝ այստեղ նրանց խոցելիությունը հասնում է 82%-ի: Այսպես, ըստ ուսումնասիրության՝ սննդի առումով խոցելի են 0-5 տարեկան երեխաների գրեթե 1/3-ը, և դա արտացոլվում է երեխաների աճի վրա⁵⁹:

Ավելին, ՀՀ առողջապահության նախարարության 2016 թվականի տվյալների՝ Հայաստանում մինչև 5 տարեկան երեխաների 19%-ը ցածրահասակ է (թերաճ) կամ պարբերաբար թերսնված (հասակն ըստ տարիքի ցուցանիշը ցածր է), իսկ 10%-ը՝ ծայրահեղ թերաճ: Ցուցանիշի

56 Տես նույն տեղում, էջ 193:

57 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2s8BTnx>:

58 2016 թվականի ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության «Մանկական աղքատությունը Հայաստանում» համատեղ զեկույց, հասանելի է հետևյալ հղումով. http://www.un.am/up/file/Child_poverty_Armenia_N-MODA_Report_2016_arm.pdf:

59 Տես նույն տեղում:

ուսումնասիրությունն ըստ տարբեր տարիքային խմբերի ցույց է տալիս, որ թերաճության ամենաբարձր մակարդակը գրանցվել է 24-35 ամսական երեխաների շրջանում (24%), իսկ ամենացածր մակարդակը՝ 6-8 ամսականների շրջանում (12%): Ցուցանիշը շատ չի տարբերվում աղջիկ և տղա երեխաների միջև (20 և 19%): Գյուղաբնակ երեխաների շրջանում այն փոքր-ինչ ավելի է տարածված, քան քաղաքաբնակ իրենց տարեկիցների մոտ (համապատասխանաբար՝ 20 և 19%): Մինչև հինգ տարեկան երեխաների 5.3%-ը եղել է թերսնված (քաշն ըստ հասակի ցածր է)⁶⁰:

Կոմիտեն թերսնուցման մասին խոսելիս հատկապես առանձնացնում է շաքարով հարուստ ըմպելիքների և վերամշակված արագ սննդի ավելորդ սպառման նվազեցման անհրաժեշտությունը, քանի որ դա նպաստում է երեխաների շրջանում գիրության խնդիրների սրացմանը: Առ այսօր դեռևս Հայաստանի մի շարք դպրոցներում վաճառվում է նման սնունդ, չնայած այն նաև արգելված է օրենքով: Դպրոցական սննդի խնդիրը մշտապես բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանների կողմից և համակարգային լուծում դեռ չի ստացել: Պաշտպանի աշխատակազմ 2016-2017 թվականներին Հայաստանի տարբեր մարզերից այցելած երե-

խաների հետ զրույցների ընթացքում պարզվել է, որ իրենց դպրոցների բուֆետներում դեռևս վաճառվում են գազավորված և շաքարի բարձր պարունակություն ունեցող ըմպելիքներ, չիպսերի, ինչպես նաև արգելված այլ սննդի տեսակներ: Չնայած նրա, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՄԱԿ-ի Պարենի զարգացման ծրագրի հետ իրականացնում է Դպրոցական սնունդ ծրագիրը, որի շրջանակներում դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներին դպրոցում տրվում է տաք ճաշ, այնուամենայնիվ խնդիրը համակարգային բնույթ է կրում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թեև դպրոցի օրինակելի կանոնադրությունը դպրոցին հնարավորություն է տալիս իրականացնել սովորողների սննդի կազմակերպում, բայց շատ դպրոցներ նշում են, որ իրենց այդ հարցում ազատություն չի տրվում⁶¹: Առանձին քաղաքներում բոլոր դպրոցներին պարտադրվում է պայմանագիր ստորագրել միևնույն կազմակերպության հետ⁶²:

Ըստ այդմ, խնդրի լուծման ուղղությամբ վերջին տարիների ձեռնարկվել են նաև որոշ քայլեր: Արդյունքում բարելավվել է բացառապես կրճքով սնուցման ցուցանիշը. 2015 թվականին հասնելով 45%-ի՝ 2010 թվականին 35%-ի համեմատությամբ: Վաղ

60 <https://bit.ly/2sa5Ljs>:

61 Հասանելի է հետևյալ հղումով. <https://transparency.am/files/publications/1510654258-0-538483.pdf>:

62 Տես նույն տեղում:

հասակի երեխաների մոտ կրկնակի կրճատվել է սակավարյունության տարածվածությունը՝ 2015 թվականին կազմելով 17% (2005 թվականի 37%-ի համեմատ): Միաժամանակ, ցուցանիշը ևս ցածր է միջազգային ընդունված 60% ցուցանիշից⁶³:

Ըստ Առողջապահության նախարարության տվյալների՝ վերոհիշյալ դրական միտումներին մեծապես նպաստել են վերջին տարիներին «Կարևոր է առաջին 1000 օրը» ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում իրականացված՝ սնուցման հարցերի շուրջ մայրերի գիտելիքների բարելավմանն ուղղված լայնածավալ քարոզչությունը, ինչպես նաև բժշկական գործելակերպի լավացմանն ուղղված ծրագրային միջոցառումները: ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել են վաղ հասակի երեխաների սնուցման ուղեցույցներ՝ բուժաշխատողների համար, որոնցով վերապատրաստվել են մարզերի առաջնային օղակի բոլոր բուժաշխատողները, ինչպես նաև իրազեկման նյութերի փաթեթ՝ մայրերի և խնամողների համար: ՀՀ բոլոր մարզերի պոլիկլինիկաներում և բժշկական ամբուլատորիաներում հիմնվել է ծնողական կրթության 101 ռեսուրսային կենտրոն, որոնց առկայությունը թույլ է տալիս կազմակերպել խորհրդատվություն, խմբային և անհատական դասեր վաղ տարիքի երեխաների ծնողների/խնա-

մողների համար:

Նախարարության տվյալների համաձայն՝ ՀՀ բյուջետային միջոցների հաշվին ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքպետարանին բաշխվել են ՀՀ առողջապահության նախարարության պատվերով տպագրված վաղ հասակի երեխաների սնուցման վերաբերյալ «Հարց ու պատասխան» բուկլետներ մայրիկների համար՝ հանրապետության ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների կողմից հաշվառման վերցրած նորածինների մայրերին տրամադրելու համար: 2016 թվականի բյուջետային միջոցների հաշվին նկարահանվել և հեռարձակվել են «Երեխաների թերսնուցումը», «Գերքաշությունը երեխաների մոտ» և «Հիվանդ երեխայի սնուցում» ֆիլմերը՝ նախատեսված հեռուստադիտողների լայն շրջանակի համար, ինչպես նաև ևս 2 ֆիլմ՝ վաղ հասակի երեխաների սնուցման արդիական հարցերի վերաբերյալ՝ նախատեսված բուժաշխատողների համար:

ՀՀ առողջապահության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 3791-Ա հրամանով հաստատվել է «Դպրոցներում երեխաների առողջ սնուցման և ֆիզիկական ակտիվության սկզբունքների ներառմամբ առողջությունը խթանող օրինակելի քաղաքականությունը», որն ուղարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հանրակրթական

63 <https://bit.ly/2ktAEeK>:

դպրոցներին տրամադրելու համար: Մշակվել և հրատարակվել են «Դպրոցահասակների առողջ սնուցում» ուղեցույցը մանկավարժների համար, «Դեռահասների առողջություն» և «Հոգ տարեք ձեր երեխաների առողջության մասին» բրոշյուրը դպրոցահասակ երեխաների մայրերի համար:

Ներկայումս, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N40 արձանագրային որոշմամբ հաստատված՝ երեխաների սնուցման բարելավման հայեցակարգի իրականացման 2015-2020 թվականների գործողությունների ծրագրի 3-րդ կետի, ընթացքի մեջ են երեխաների կրթական հաստատություններում, սպորտային միջոցառումների և ժամանցի վայրերում հագեցած ճարպերի, տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի բարձր պարունակությամբ ոչ առողջ սննդի վաճառքն արգելելու նպատակով գործող օրենսդրության վերլուծության, առաջարկությունների մշակման նպատակով աշխատանքային խմբի ձևավորման աշխատանքները:

Չնայած վերոնշյալի, առողջ սնուցման պրակտիկան մեծ տարածում չունի դպրոցներում և ընտանիքներում, ինչի մասին են վկայում սույն բաժնում ներկայացված ուսումնասիրությունները: Արդյունքում դեռևս համակարգային առումով խնդրահարույց է մնում երեխաների և կանանց թերս-

նուցման հարցը՝ պայմանավորված տարբեր գործոններով:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ուժեղացնել առողջապահության և կրթության ոլորտների համագործակցությունը՝ ծնողներին և երեխաներին ճիշտ սննդակարգի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու վերաբերյալ:
- Ուժեղացնել վերահսկողությունը դպրոցական սննդի՝ իրավական ակտերով ամրագրված չափանիշների պահպանման նկատմամբ:

3. ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ

Կոմիտեն ափսոսանք է հայտնել, որ տնտեսական ճգնաժամի պատճառով աճել է աղքատության ցուցանիշը երեխաների շրջանում, ընդ որում՝ ամենաշատը տուժել են հաշմանդամություն ունեցող երեխաները: Կոմիտեն ողջունել է երեխաներ ունեցող ընտանիքների համար նախատեսված նպաստների գործող համակարգը, սակայն մտահոգված է, որ ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3%-ը և աղքատ ընտանիքների միայն 4.1%-ն են պարբերաբար օգտվում դրանցից, որն ընտանեկան նպաստների բանաձևի թերությունների և

պետական օժանդակության առկա մեխանիզմների մասին ոչ բավարար իրազեկվածության հետևանք է:

Կոմիտեն առաջարկել է (կետ 44)՝

- նոր թափ հաղորդելով շարունակել պայքարն աղքատության դեմ՝ ապահովելով նպաստների համակարգերի մեջ բոլոր խոցելի ընտանիքների ընդգրկումը, ապահովելով պետական օժանդակության հասանելիությունը նրանց համար, և բարձրացնելով առկա նպաստների մասին իրազեկվածությունը,
- երաշխավորել բոլոր երեխաների համարժեք կենսամակարդակի իրավունքը:

Ըստ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2016 զեկույցի, 2016 թվականին մինչև 18 տարեկան երեխաների 2.0%-ը ապրում է ծայրահեղ աղքատության, իսկ 34.2%-ն՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 1.8 և 29.4%-ը: Այսպիսով, երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր, և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը: 2016 թվա-

կանին մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսությունների 24.0%-ը ստացել է ընտանեկան նպաստ, այդ թվում՝ ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը, ծայրահեղ աղքատների՝ 50.3%-ը և ոչ աղքատների՝ 18.5%-ը⁶⁴:

2016 թվականի տվյալներով աղքատ է աղջիկների 36.1 և տղաների՝ 32.4%-ը (բոլոր երեխաների 34.2%-ը): Մանկական աղքատությունն ըստ տարածաշրջանների. քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 2.1%՝ գյուղական բնակավայրերում բնակվող երեխաների 1.9%-ի համեմատ⁶⁵:

2008 թվականի համեմատ Հայաստանում մանկական աղքատության ցուցանիշները դեռևս շատ բարձր են: Եթե 2008 թվականին ծայրահեղ աղքատ էր երեխաների 2.0%-ը, ապա 2016-ին՝ 1.6%-ն: Աճել է նաև աղքատ երեխաների թիվը: Եթե 2008 թվականին աղքատ էին երեխաների 29.8%-ը, 2016-ին՝ 34.2%-ը⁶⁶:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը չի կատարվել:

64 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=82&id=1988>:

65 Տե՛ս նույն տեղում:

66 Տե՛ս նույն տեղում:



© UNICEF Armenia/2018/Osipova

Զ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**(ԿՈՆՎԵՆՏՑԻԱՅԻ 28-ՐԴ, 29-ՐԴ ԵՎ
31-ՐԴ ՀՈԴԿԱԾՆԵՐԸ)**

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՏՈՒՄԸ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՈՒՄԸ

Կոմիտեն ողջունել է այն, որ մայրենի լեզվով կրթությունը և դասագրքերը հասանելի են փոքրամասնությունների խմբերի երեխաներին: Կոմիտեն մտահոգիչ է համարել հետևյալը.

- հանրակրթական ուսումնական հաստատությունների, հատկապես՝ նախակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների անբավարար վիճակը, այդ թվում՝ ջեռուցման, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների անբավարարությունը.
- կրթության ցածր որակը և ցածր պահանջարկն արհեստավարժ ուսուցիչների նկատմամբ.
- հիմնական կրթությունից հետո դպրոցներից դուրս մնացողների տոկոսային բարձր ցուցանիշը.
- դպրոցների ուսումնական ծրագրերի շրջանակում երկրում առավել տարածված կրոնի ուսուցումը որպես պարտադիր առարկա:
Կոմիտեն առաջարկել է (կետ 46)՝
- ներդրումներ անել հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքի բարելավման համար, այդ թվում՝ բարելավելով ջեռուցման, ապահով խմելու ջրի և սանիտարահիգիեն-

նիկ պայմանների հասանելիությունը, մասնավորապես՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերում.

- համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրել ուսուցիչների կրթությունը բարելավելու համար, ինչպես նաև՝ որակավորման խիստ պահանջներ սահմանել որպես ուսուցիչ աշխատող անձանց համար.
- իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելով դպրոցներից դուրս մնալու խորքային պատճառները, և շահագրգռել երեխաներին, որպեսզի շարունակեն կրթությունը միջնակարգ դպրոցում.
- վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ դրանում արտացոլելով բոլոր երեխաների կրոնի ազատությունը և վերացնելով Հայաստանյայց եկեղեցու պատմության առարկայի պարտադիր դասավանդումը:

1) ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱ- ԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հանրակրթական, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների, այդ թվում՝ ջեռուցման, ջրի

և սանիտարահիգիենիկ պայմանների անբավարարությունը շարունակում է խնդրահարույց մնալ Հայաստանում: Ինդիքը մշտապես բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում:

Այսպես, համաձայն Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» 2017 թվականի տարեկան զեկույցի տվյալների՝ Հայաստանի դպրոցների ենթակառուցվածքների բարելավման

գործում արձանագրվել է փոքր առաջընթաց⁶⁷: Մասնավորապես, 2013 թվականին Հայաստանում գործող 1434 դպրոցների 50%-ն ուներ բավարար շենքային պայմաններ⁶⁸, 2016 թվականին Հայաստանում գործող 1432 դպրոցների 52.8%-ն ունի բավարար շենքային պայմաններ⁶⁹: Այսպիսով, դպրոցների գրեթե կեսը կարիք ունի ընթացիկ նորոգման կամ հիմնանորոգման: 71 դպրոց դեռևս չունի ջրամատակարարում, իսկ 141-ում չկա կոյուղացում, 8 դպրոցներում ջեռուցում չկա⁷⁰:

Աղյուսակ 3. Դպրոցների շենքային պայմանները

	Բավարար շենքային պայմաններ ունեցող	Հիմնանորոգման կարիք ունեցող	Ընթացիկ նորոգման կարիք ունեցող	Ջրամատակարարում չունեցող	Տաք ջրամատակարարում չունեցող	Կոյուղացում չունեցող	Գազամատակարարում չունեցող	Ջեռուցում չունեցող
2013	718 (50%)	491 (34,2%)	225 (15,7%)	91 (6,3%)	1341 (93,5%)	177 (12.3%)	458 (31.9%)	5 (0.3%)
2016	757 (52,8)	428 (30%)	247 (17,2%)	71 (4,9%)	1303 (91%)	141 (9.8%)	416 (29%)	8 (0.5%)

Ավելին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ հաստատված «Հայաս-

տանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի» համա-

67 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=82&id=1958>:
 68 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=82&id=1590>:
 69 Հասանելի է հետևյալ հղումով. http://www.armstat.am/file/article/soc_2016_2.pdf:
 70 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.armstat.am/am/?nid=82&id=1958>:

ծայն՝ Հայաստանի 425 դպրոցներ սեյսմիկ անվտանգության բարելավման կարիք ունեն: Այդ դպրոցներից շուրջ 60-ը 3-րդ 4-րդ կարգի վթարային են⁷¹:

Դպրոցների շենքային վատթար պայմանների մասին բազմաթիվ ահազանգեր են եղել նաև դպրոցի անձնակազմի, աշակերտների ծնողների, ինչպես նաև հենց աշակերտների կողմից: Առանձին դեպքերում ծնողներն արգելել են երեխաներին հաճախել դպրոց: Մասնավորապես, Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի բնակիչները բողոքի ցույց և դասադուլ են կազմակերպել, քանի որ դպրոցի շենքը վթարային վիճակում է և ջեռուցում չունի⁷²: Ի վերջո, դպրոցի ջեռուցման հարցը լուծվել է, իսկ շենքային պայմանների բարելավումը նախատեսվում է իրականացնել առաջիկայում: Դպրոցի շենքային պայմանների բարելավման համար 2017 թվականին գործադուլ է կազմակերպվել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցում, որտեղ առկա է հիմնանորոգման, վերանորոգման ու վերակառուցման խնդիր⁷³: Որոշ ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների

շենքային պայմանների խնդիրն առավել արտահայտված է գյուղական դպրոցներում⁷⁴:

Բացի հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդհանուր շենքային պայմանների խնդիրներից, առակ է նաև մի շարք դպրոցների սահմանափակված պայմանների խնդիրը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս հարցն առավելապես խնդրահարույց են համարում հենց երեխաները: Այսպես, իրականացված հարցման ժամանակ հարցված երեխաների 48%-ը ցանկացել է, որպեսզի բարելավվեն ջրի և սանիտարական պայմանները⁷⁵:

Բացի այդ, դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցման հարցը, որի մասին բարձրաձայնել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2016-2017 թվականներին ՀՀ մի շարք մարզերից այցելած երեխաները: Խնդիրն այն է, որ ընդունված պրակտիկա է հանրակրթական և նախադպրոցական կրթական հաստատությունը ջեռուցել սկսած նոյեմբերի 15-ից, ինչը սակայն օրենսդրությամբ պարտադիր պահանջ չէ: Այսպես, 2017 թվականի մարտի 28-ի «Հանրակրթական

71 Հասանելի է հետևյալ հղումով. <https://www.azatutyun.am/a/27221091.html>:

72 Հասանելի է հետևյալ հղումով. <https://www.youtube.com/watch?v=xNxnHU0tndA>:

73 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2J8hEQM>:

74 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2J5Pzcl>:

75 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2KXn2DG>:

ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի N 12-Ն հրամանի՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցումն իրականացնելիս, ելնելով կլիմայական պայմաններից, դասասենյակում անհրաժեշտ է ապահովել նվազագույնը +18°C և առավելագույնը +22°C ջերմաստիճան: Նշված հրամանով որևէ ամրագրում (այդ թվում՝ սահմանափակում) առկա չէ հանրակրթական ուսումնական հաստատությունը ջեռուցելու ժամանակի վերաբերյալ: Արդյունքում, գործնականում ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու արդյունքում հաշվի չի առնվում հանրակրթական ուսումնական հաստատության տեղակայվածությունը (օրինակ՝ քամոտ կամ խոնավ վայրերում տեղակայված դպրոցներում անհրաժեշտ է ջեռուցումը սկսել ավելի վաղ քան նոյեմբերի 15-ը), ինչպես նաև հաշվի չեն առնվում նաև տվյալ տարվա բնակլիմայական պայմանները:

Ջեռուցման խնդիրը ևս հատկապես արդիական է մարզերում, ինչի

արդյունքում որոշ դեպքերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքը կրում է սեզոնային բնույթ: Ավելին, որոշ դեպքերում էլ խնդրահարույց է նաև կենտրոնացված ջեռուցման համակարգի բացակայությունը: Մասնավորապես, Տավուշի մարզում որոշ նախակրթական ուսումնական հաստատությունների ծնողներ իրենց անհանգստությունն են հայտնել առայն, որ մարզային մանկապարտեզներում էլեկտրական կամ փայտե վառարաններ են օգտագործվում, ինչն անվտանգ չէ իրենց երեխաների համար⁷⁶:

Ուսումնասիրությունները վկայում են նաև, որ դպրոցների ծախսերի առումով, ուսումնասիրված դպրոցների բյուջեի միջին հաշվով 96%-ից ավելին հատկացվում է աշխատավարձերին, հարկերին, ջեռուցմանը և կոմունալ վճարներին: Դպրոցի զարգացման համար գումարներ գրեթե չեն մնում: Կլիմայական գործոնը, դպրոցի շենքային պայմանները հաշվի չեն առնվում ֆինանսավորման գործընթացում: ⁷⁷

Ըստ նախարարության տվյալների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական

76 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2KSVu2b> :

77 Հասանելի է հետևյալ հղումով. <https://transparency.am/files/publications/1510654258-0-538483.pdf>:

դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը», որի շրջանակներում մինչև 2030 թվականը պետք է ամրացվեն կամ նոր կառուցվեն թվով 377 դպրոցներ: Ծրագրի իրականացման համար ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1426-Ն որոշմամբ հաստատվել են «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի» բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիրը, որի 1.1 կետի համաձայն պետք է հաստատվի ուժեղացվող և նոր կառուցվող դպրոցների 46 գերակա շենքերի ցանկը:

Միաժամանակ, ՀՀ ԿԳ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից գործարկվել է «www.emis.am» կայքը, որում յուրաքանչյուր դպրոց ունի անձնագիր: Այն հնարավորություն է տալիս ամբողջական տեղեկություն ստանալ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մասին: Միաժամանակ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների վերաբերյալ տեղեկություններ չեն հրապարակվում:

Չնայած ձեռնարկված վերոնշյալ քայլերին, այնուամենայնիվ սույն բաժնում ներկայացված տվյալները և ուսումնասիրությունները վկայում են,

որ դեռևս նախադպրոցական, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքների, մասնավորապես շենքային, այդ թվում սանիտարական պայմանները, ինչպես նաև ջեռուցման խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ավելացնել հանրակրթական և նախադպրոցական կրթական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ կատարվող բյուջետային ներդրումները:
- Ուժեղացնել հսկողությունը հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցման՝ ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով նախատեսված ջերմաստիճանի ապահովման ուղղությամբ՝ հաշվի առնելով տվյալ հաստատության տեղակայումը և տարվա բնակլիմայական պայմանները:
- Ստեղծել և հասանելի դարձնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մասին տեղեկատվական բազա:

2) ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐՇԵՍՏԱՎԱՐԺ ՌԻՍՈՒՑԻՉ-ՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ

Հայաստանի կրթության որակի մասին հավաստի ցուցանիշներ չկան: Հայաստանը դեռևս չի մասնակցում միջազգային PISA և PIRLS ստուգատեսներին: 2015 թվականին Հայաստանի 4-րդ և 8-րդ դասարանցիները մասնակցել են միջազգային TIMSS ստուգատեսին, որն անցկացվում է Մաթեմատիկա և Բնագիտություն առարկաներից: 2016 թվականին հրապարակվել են մասնակից երկրների ցուցանիշները: Հայաստանի ցուցանիշները դեռևս հրապարակված չեն, բայց Գնահատման և թեստավորման կենտրոնի հավաստիացումներով, այդ տվյալները առաջիկայում հրապարակվելու են: Գնահատման և թեստավորման կենտրոնը ամեն տարի անցկացնում է ազգային ստուգատես, որի նպատակն է չափել դպրոցականների արդյունքները դպրոցական որևէ առարկայից⁷⁸: Մասնավորապես, 2016 թվականին անցկացվել է ստուգատես 8-րդ դասարանցիների շրջանում՝ Անգլերենից⁷⁹: Ըստ հրապարակված արդյունքների, 10 բալանոց համակարգում Հայաստանի դպրոցականների միջին միա-

վորը 5.2 է⁸⁰: Առկա է տարբերություն խոշոր քաղաքների և բարձր լեռնային գյուղերի դպրոցականների միավորների միջև: Մասնավորապես, խոշոր քաղաքներում այդ ցուցանիշը կազմել է 5.5, իսկ բարձր լեռնային գյուղերում՝ 3⁸¹: Այդուհանդերձ, Ազգային ստուգատեսը հիմնավոր պատկեր չի տալիս կրթության որակի մասին, քանի որ ամեն տարի փոխվում է ուսումնասիրվող առարկան, ինչը հնարավորություն չի տալիս երկարատև դիտարկել որևէ առարկայի դինամիկան:

Որոշ ուսումնասիրություններ հաստատում են այն, որ Հայաստանյան հանրակրթական համակարգում առկա է անհավասարություն գյուղում և քաղաքում ապրող, ինչպես նաև սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների համար՝ կրթական հնարավորությունների հասանելիության առումով⁸²: Սովորողների կրթական ձեռքբերումների, ուսման մեջ առաջադիմության, ինչպես նաև հետագայում մասնագիտական կողմնորոշման ու բուհ ընդունվելու հարցում էական դերակատարում ունեն՝ սովորողների ընտանիքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողների կրթվածության մակարդակն, ընտանիքի բնակության վայրի աշխարհագրական

78 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2xeaMwt>:

79 Հասանելի է հետևյալ հղումով <https://bit.ly/2sa6EbM> :

80 Տե՛ս նույն տեղում:

81 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2sa6EbM>:

82 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2J5Pzcl>:

տեղակայումը⁸³:

2013 թվականից ի վեր ուսուցիչների աշխատավարձի էական բարձրացում չի արձանագրվել: Աշակերտների թվի նվազման արդյունքում, հատկապես ավագ դպրոցներում, ուսուցիչների ծանրաբեռնվածությունը նվազել է, ինչի արդյունքում աշխատավարձը նվազել է: Ըստ ՀՀ Սոցիալական վիճակը 2016 զեկույցի, եթե 2013 թվականին Հայաստանի ավագ դպրոցների աշակերտների թիվը եղել է 43576, ապա 2016-ին աշակերտների թիվը 27581 է⁸⁴: Ըստ փորձագետների, բազմաթիվ դպրոցներում կրճատվել են դասղեկության համար ուսուցիչներին տրվող հավելավճարները:

Խնդրահարույց է մնում ուսուցիչների աշխատանքի ընդունման կարգը: Թեկնածու ուսուցիչները գրավոր և բանավոր քննություն են հանձնում աշխատանքի ընդունվելու համար: Քննության հարցերը գերազանցապես վերաբերում են իրավական գիտելիքներին և հնարավորություն չեն տալիս պարզելու թեկնածու ուսուցչի առարկայական և մանկավարժական պատրաստվածությունը⁸⁵:

Անհամապատասխանություններ կան մանկավարժական կրթության և ուսուցչի ամենօրյա աշխատանքի

միջև: Դպրոցների տնօրենների հետ փորձագետի իրականացրած հարցումների արդյունքում պարզվել է, որ մանկավարժական բուհերի ծրագրերը տեսական են և չեն նպաստում են ապագա ուսուցիչների գործնական հմտությունների զարգացմանը: Ներկայումս մանկավարժական բուհերում որոշակի աշխատանքներ են տարվում ուսանողների դպրոցական պրակտիկայի ժամերն ավելացնելու ուղղությամբ⁸⁶:

Դժգոհություններ կան նաև ուսուցիչների ատեստավորման հարցի շուրջ: Հայաստանի բոլոր ուսուցիչները յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ պետք է մասնակցեն պարտադիր վերապատրաստման՝ ատեստավորման նպատակով⁸⁷: Ուսուցիչները հնարավորություն ունեն ատեստավորման արդյունքում ստանալ տարակարգ: Գործում է տարակարգի քառաստիճան համակարգ և առաջին 3 աստիճանը ստանալուց հետո ուսուցչի աշխատավարձը բարձրանում է 10%-ով, իսկ 4-րդ աստիճանի դեպքում 20%-ով, ինչը փոքր գումար է⁸⁸:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել:

83 Տե՛ս նույն տեղում:

84 Հասանելի է հետևյալ հղումով. http://armstat.am/file/article/soc_2016_2.pdf:

85 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=83675>

86 Հասանելի է հետևյալ հղումներով. <https://aspu.am/hy/page/praktika/>, <https://bit.ly/2JaVRb2>:

87 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80631>:

88 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=72774>:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայաստանը պետք է ավելի ակտիվ ներառվի միջազգային ստուգատեսներում՝ մասնակցելով նաև PISA և PIRLS ստուգատեսերին:
- Կրթության որակի մասին առավել հիմնավոր տվյալներ ունենալու նպատակով, պետք է ազգային ստուգատեսներ անցակացվեն տարեկան մի քանի առարկայից: Ընդ որում, ընտրված առարկաների ուսումնասիրությունը պետք է անել 2-3 տարի շարունակ, որպեսզի հնարավոր լինի կրթության որակի մասին որոշակի դինամիկա տեսնել:
- Մանկավարժական կրթություն իրականացնող հաստատությունների և դպրոցների միջև հաստատել սերտ համագործակցություն:
- Սկսնակ ուսուցիչների համար մշակել ծրագրեր՝ մանկավարժական կրթությունից ուսումնական հաստատություն անցումը ապահովելու համար:
- Ուսուցիչների աշխատանքի ընդունման կարգի վերանայում՝ ներմուծելով մասնագիտական գիտելիքների և հմտությունների բացահայտման ձևեր:
- Ուսուցչի տարակարգի համար տրվող հավելավճարի ավելացում:
- Ուսուցիչների համար նյութական և ոչ նյութական խրախուսման մեխանիզմների գործարկում:

3) ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՆԻՑ ՀԵՏՈ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Առ այսօր համակարգային առումով լուծված չէ կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառների վերհանման և այդ երևույթի կանխարգելման հարցը: Խնդրի մասին բազմիցս բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդմամբ:

Նախևառաջ խնդիրն այն է, որ օրենսդրորեն ամրագրված չէ «կրթությունից դուրս մնացած երեխա» եզրույթը. այսինքն ամրագրված չէ, թե որքան ժամանակ երեխան պետք է չհաճախի դպրոց, որպեսզի համարվի կրթությունից դուրս մնացած: Ըստ այդմ, առկա չէ նաև միասնական վիճակագրություն այդպիսի երեխաների թվի վերաբերյալ: Արդյունքում օրինակ՝ Ազգային վիճակագրական ծառայության Հայաստանի սոցիալական վիճակը տարեկան զեկույցներում օգտագործվում է «դպրոցից հեռացած (ուսումը կիսատ թողած)» տերմինը:

Արդյունքում կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ վիճակագրական տվյալների միջև նույնպես առկա են էական տարբերություններ: Մասնավորապես, ըստ Ազգային վիճակագրական ծառայության

2017 թվականի զեկույցի՝ 2016-2017 ուսումնական տարում դպրոցից հեռացած աշակերտների թիվը 260 է⁸⁹: Ըստ աշխատող երեխաների մասին զեկույցի, դուրս մնացած երեխաների թիվը շուրջ 8 հազար է⁹⁰: Իսկ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից անցկացված փորձնական հետազոտության արդյունքում Լոռու մարզում հայտնաբերվել է 228 երեխա⁹¹:

Վերոնշյալ խնդիրների առկայության պարագայում ռժվարանում է նաև կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառների վերհանումը, որոնք թույլ կտան գնահատել յուրաքանչյուր խմբի համար (օրինակ՝ խոցելի խմբերի, հաշմանդամություն ունեցող երեխաների) կրթությունից դուրս մնալու հստակ պատճառները: Մասնավորապես, որոշ տվյալներ վկայում են այն մասին, որ երեխաները կրթությունից դուրս են մնում սոցիալական պայմանների պատճառով: Այսպես, 2016 թվականին ընտանիքների սոցիալական վատ վիճակով պայմանավորված արձանագրվել է երեխայի կրթությունից դուրս մնալու 191 դեպք⁹²: Որոշ դեպքերում էլ երեխաները կրթությունից դուրս են մնացել հաշմանդամության պատճառով: «Հայաստանի սոցիալական պատկե-

րը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2016 թվականի զեկույցի համաձայն՝ 2015-2016 ուսումնական տարվա սկզբին հաշմանդամություն ունենալու պատճառով Հայաստանում հանրակրթությունից դուրս է մնացել 16 երեխա⁹³: Սակայն ոլորտի ներկայացուցիչների պնդմամբ՝ կրթությունից դուրս մնացած հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը հրապարակվածից ավելին է, հատկապես՝ մարզերում ու գյուղական համայնքներում⁹⁴: Կրթությունից դուրս մնալու պատճառների վերհանումը չափազանց կարևոր է, քանի որ այն թույլ կտա նաև մշակել երևույթի կանխարգելման հստակ ուղիները:

Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ հստակ տվյալների հավաքագրման, ինչպես նաև այդ երեխաների հայտնաբերման հարցում խոչընդոտ է նաև այն, որ հաճախ հանրակրթական ուսումնական հաստատություններում հաշվառված երեխաների թիվը կարող է փաստացի հաճախող երեխաների թվից ավել լինել: Ինդիի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն իր եզրափակիչ

89 Հասանելի է հետևյալ հղումով. http://armstat.am/file/article/soc_2016_2.pdf:

90 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2sfnHlJ>:

91 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2xfCU2f>:

92 Հասանելի է հետևյալ հղումով. http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf:

93 Տես նույն տեղում:http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

94 Հասանելի է հետևյալ հղումով. <http://disabilityinfo.am/12650/>:

դիտարկումներում⁹⁵: Պատճառը շարունակում է մնալ այն, որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ուստի ուսուցիչները հաճախ աշակերտների բացակայություններն օբյեկտիվորեն չեն գրանցում⁹⁶: Նույն խնդիրն առկա է նաև ներառական և հատուկ կրթություն իրականացնող դպրոցներում, հատկապես հաշվի առնելով այն, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում⁹⁷:

Բացի այդ, խնդիրն է նաև այն, որ Հայաստանում դպրոցից դուրս մնացած երեխաներին հետևելու և ուղղորդելու գործող համակարգ գոյություն չունի⁹⁸: Այդպիսին կարող է լինել օրինակ՝ կրթության և սոցիալական ոլորտների աշխատակիցների համակարգված համագործակցությունը: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ առկա իրավիճակը կարգավորելու համար, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ, իրականացրել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա մշակվել է

«Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Կարգը սահմանում է «կրթությունից դուրս մնացած երեխա» եզրույթը և նախատեսվում է ստեղծել հաշվառման էլեկտրոնային համակարգ, որում ներգրավված են լինելու բոլոր շահագրգիռ մարմինները: Ավելին, ըստ նախարարության տվյալների ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման շրջանակներում ստեղծել է «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների հաշվառման» ենթածրագիր: Ենթածրագիրը հնարավորություն է տալիս վերահսկել դպրոցում արդեն ընդգրկված երեխաների՝ տարբեր պատճառներով կրթությունից դուրս մնալու ռիսկերը, սակայն ի սկզբանե կրթության մեջ երեխաների չընդգրկվելը բացահայտելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ուսումնական տարվա թղթակցող տարում ծնված բոլոր երեխաների տվյալները: Նախատես-

95 ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի 5-6-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2016 թվականի նոյեմբերի 18, կետ 22 և 36. հասանելի է հետևյալ հղումով. <http://www.refworld.org/pdfid/583863b34.pdf>:

96 Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2LrDDR7>:

97 Տե՛ս նույն տեղում:

98 Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.unicef.am/am/articles/education>:

վում է նաև 2017-2018 ուսումնական տարում իրականացնել ենթածրագրի Լոռու մարզում, որի արդյունավետ իրականացմանը և հետագայում ՀՀ ողջ տարածքում ենթածրագրի ներդրմանը կնպաստի պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման օրենսդրական հիմքերի ստեղծումը:

Այնուամենայնիվ դեռևս հարցը վերջնական լուծում չի ստացել և սույն բաժնում նշված տվյալները վկայում են ոլորտում առկա օրենսդրական բացերի մասին, որոնք գործնականում թույլ չեն տալիս համապարփակ առումով գնահատել կրթությունից դուրս մնալու պատճառները և քայլեր ձեռնարկել դրանց կանխման և կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման ուղղությամբ:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը մասամբ է կատարվել :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Օրենսդրորեն ամրագրել՝ ով կարող է համարվել «կրթությունից դուրս մնացած», նախատեսելով հստակ չափանիշներ, որով հնարավոր կլինի գնահատել երեխայի կարգավիճակը:
- Վարել միասնական և տարանջատված վիճակագրություն կրթու-

թյունից դուրս մնացած երեխաների թվի, կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ:

- Արագացնել «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը հաստատելու մասին» կարգի ընդունումը:
- Ձեռնարկել քայլեր նման դեպքերը կանխելու համար: Այսպիսի քայլեր կարող են լինել՝
 - բազմազանեցնել ավագ դպրոցների ուսումնական ծրագրերը՝ 12-ամյա պարտադիր կրթությունն արդյունավետ դարձնելու համար,
 - ավելի մատչելի դարձնել արհեստագործական կրթությունը հատկապես գյուղական բնակավայրերում,
 - աջակցել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ բնակության վայրից հեռու գտնվող ուսումնական հաստատություններ հասնելու գործում,
 - բացառել հաշմանդամության հիմքով կրթությունից դուրս մնալը՝ ապահովելով կրթական ծրագրերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մատչելիությունը:

4) ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Ըստ այդմ Հայաստանի դպրոցներում դասավանդվում է «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացը, որի ժամանակ ըստ որոշ ուսումնասիրությունների, ուսուցիչների կողմից, երբեմն պարտադրվում են ծիսական գործողություններ, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել:⁹⁹ Նշվածն էլ հենց հակասում է որոշ անձանց կրոնական համոզմունքներին:^{100, 101}

Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում վերանայվում է միջնակարգ կրթության չափորոշիչը: Նախատեսված էր միջ-

նակարգ կրթության նոր չափորոշիչը հաստատել 2016 թվականին: Սակայն այն դեռևս ընդունված չէ: Այդ փաստաթղթի ընդունումից հետո պետք է վերանայվեն նաև առարկայական չափորոշիչները: Միայն միջնակարգ կրթության չափորոշիչի ընդունումից հետո պարզ կլինի, թե ինչ փոփոխություններ են լինելու Հայ եկեղեցու պատմություն առարկայի ծրագրում:

Կոմիտեի վերը նշված առաջարկությունը դեռևս չի կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հայոց եկեղեցի պատմություն առարկայի չափորոշիչների վերանայման ժամանակ շեշտը դնել գիտելիքի բաղադրիչի վրա և ներառել ավելի ծավալուն բովանդակություն այլ կրոնների մասին:
- Արգելել պարտադիր բնույթի գործողություններն ուսումնական գործընթացում (օրինակ՝ աղոթքը, եկեղեցի այցելելը):

99 Հասանելի է հետևյալ հղումով. <https://rm.coe.int/16807023b8>:

100 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2ILYcdg>

101 Հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2IMZchn>

Է. ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 22-ՐԴ, 30-ՐԴ, 38-ՐԴ 39-ՐԴ,
40-ՐԴ, 37-ՐԴ (Բ)-(Դ), 32-36 ՀՈՂՎԱԾՆԵՐ)

1. ՉՈՒՂԵԿՑՎՈՂ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՐԵՒԱՆՆԵՐԸ

Կոմիտեն ողջունել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի ընդունումը 2008 թվականին, որով նախատեսվում են առանց ուղեկցողի փախստական երեխաների և ապաստան հայցող երեխաների պաշտպանության հիմնարար երաշխիքները: Այդուհանդերձ, Կոմիտեն ափսոսանք է հայտնել, որ օրենքը չի համապատասխանում Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայով ամրագրված նվազագույն սոցիալ-տնտեսական չափանիշներին, ինչպիսիք են, օրինակ, բարվոք բնակարանային պայմանների հասանելիությունը, պետական օգնությունը և հպատակագրումը: Հանձնաժողովին մտահոգել է նաև այն հանգամանքը, որ փախստական որոշ ծնողներ դժվարությունների են հանդիպել իրենց երեխաներին դպրոցներում տեղավորելու գործում՝ պայմանավորված նախկին դպրոցների փաստաթղթերի բացա-

կայությամբ և փաստաթղթերի հայերեն թարգմանության խնդիրներով: Հանձնաժողովին մտահոգել է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիության մասին օրենքն ունի բացեր, որոնք կարող են քաղաքացիություն չունենալու վտանգ առաջացնել օտարերկրացի ծնողների երեխաների կամ Հայաստանի քաղաքացիությունից զրկված ծնողների երեխաների համար:

Կոմիտեն առաջարկել է (կետ 48)՝

- հաշվի առնելով Կոմիտեի թիվ 6 ընդհանուր մեկնաբանությունը ծագման երկրից դուրս գտնվող առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին (CRC/GC/2005/6), փոփոխություն կատարել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում՝ ապահովելու համար հիմնարար երաշխիքները և դրանց արդյունավետ իրագործումը.
- ապահովել կրթության հասանելիությունը բոլոր երեխաներին, անկախ նրանց կարգավիճակից, և վերացնել փախստական և ապաս-

տան հայցող երեխաների՝ կրթական համակարգի մեջ ընդգրկման ճանապարհին առկա վարչական խոչընդոտները.

- փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ՝ ապահովելու, որ իր իրավազորության ներքո գտնվող ոչ մի երեխա իրավակարգավորումների կամ պրակտիկայի հետևանքով չդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

Խնդիրները, որոնք ներկայացված են ստորև, մասամբ արծարծվել են «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցում, որը լույս է տեսել 2017 թվականին¹⁰²:

1) «ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

2016 հունվարին ուժի մեջ մտավ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից հաստատված օրենսդրական փոփոխության փաթեթը, որով ամրագրվեցին էապես նոր (կոնվենցիոն) մոտեցումներ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված

երեխաների կարգավիճակի և դրանից բխող երաշխիքների սահմանման ուղղությամբ: Նախևառաջ, օրենքը սահմանեց «հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներ և փախստականներ» հասկացությունը (8-րդ հոդվածի 1-ին մաս), որում ներառված են ապաստան հայցող երեխաները կամ հաշմանդամություն ունեցող անձինք կամ հղի կանայք կամ միայնակ ծնողներ, ովքեր ունեն անչափահաս երեխաներ: Այնուհետև օրենքը հստակորեն և մանրամասնորեն սահմանեց «առանց ուղեկցողի երեխա» և «ընտանիքից անջատված երեխա» հասկացությունները, որոնք իրենց բովանդակությամբ մոտ են Կոմիտեի թիվ 6 ԸՄ-ով առաջարկված ձևակերպումներին, որից էլ կարելի է եզրակացնել, որ նախագծի հեղինակները օգտվել են այս կարևոր փաստաթղթից:

Օրենքը պարտավորեցնում է իրավասու պետական մարմիններին նշված երկու խմբերին ցուցաբերել աջակցություն իրենց իրավասության շրջանակներում՝ առավելագույնս ելնելով նրանց շահերից, իսկ լիազորված մարմինն պարտավորեցնում է աջակցել տեղավորման և խնամքի հարցերում՝ հաշվի առնելով ոչ միայն տարիքը, սեռը և այլ հատկանիշներ, այլ նաև «երեխայի շահերից բխող այլ հանգամանքներ» և ՀՀ օրենսդրությամբ երեխայի համար սահմանված

102 Ձեկույցը հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2INaHRL>

բոլոր իրավունքները: Օրենքը նաև պարտավորեցնում է առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին տեղավորել ժամանակավոր տեղավորման կենտրոնում առաջնահերթության կարգով՝ հաշվի առնելով նրանց լավագույն շահերը և խորհրդակցելով նրանց ներկայացուցչի հետ (հոդված 24), իսկ խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը, Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի կամ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կողմից միջնորդությունը ստանալուց հետո, կատարել յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես ընդյայնվել են այս երկու խմբերի երաշխիքները օրենքի 50-րդ հոդվածով: Մասնավորապես՝ իրավասու մարմինները պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում բացահայտել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաներին՝ որպես հատուկ կարիք ունեցող խմբեր, ապաստանի վարույթի շրջանակներում նշանակել ներկայացուցիչ, ով պարտավոր է պատշաճ կերպով ներկայացնել նման երեխաների լավագույն շահերը, վարույթի ողջ ընթացքում ապահովել, որ բոլոր գործողությունները կատարվեն ներկայացուցչի մասնակցությամբ: Որպես կամայականության դեմ ընդհանուր երաշխիք, սահմանված է, որ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանության տրամադրման գործընթացում

ընդգրկված բոլոր պաշտոնատար անձինք իրենց գործողություններում պետք է ելնեն երեխայի շահերի պաշտպանության սկզբունքից:

Վերը նշված օրենսդրական փոփոխությունները ողջունելի են: Դրանք կնպաստեն, որ նշված խոցելի խմբերի պաշտպանվածությունը էապես մեծանա: Այդուհանդերձ, պրակտիկայում դեռ մնում են որոշ խնդրահարույց կարգավորումներ, որոնք իրենց բնույթով և հետեանքով հակասում են Կոնվենցիային: Ստորև անդրադառնանք այդ խնդիրներին:

Թիվ 6 ԸՄ-ի 31Ա կետը սահմանում է, որ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների համար անհրաժեշտ է ստեղծել նրանց բացահայտման առաջնահերթության համակարգ՝ սահմանային անցակետում նրանց նախնական ստուգման ու գրանցման ընդհանուր ընթացակարգերի շրջանակում: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը նման առաջնահերթ ընթացակարգեր կամ կառուցակարգ չի սահմանում: Բացահայտման ընթացակարգը տեղի է ունենում ընդհանուր վարչական վարույթի շրջանակում՝ միգրացիոն հարցերով լիազոր մարմնի՝ Միգրացիոն պետական ծառայության վարույթում: Սահմանապահ ստորաբաժանումների ծառայողները, ինչպես նաև անձնագրերի և վիզաների վարչությունը, նման գործառույթներ չունեն: Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ հատուկ կարիքներ

ունեցող ապաստան հայցողների ու փախստականների, առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի նկատմամբ կիրառվում են սույն օրենքով նախատեսված ապաստանի ընդհանուր ընթացակարգերը, **եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ**: Մինչդեռ Կոնվենցիան, ի դեմս նաև թիվ 6 ԸՄ-ի, նախատեսում է ստեղծել երեխայի որպես խոցելի խմբի պատկանող անձի բացահայտման առաջնահերթության հիմքով հատուկ ընթացակարգ: Կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները համարվում են Կոնվենցիայի դրույթների մեկնաբանության հիմնական աղբյուր: Հետևաբար, դրանք պարտադիր են այնքանով, որքանով պարտադիր են

Կոնվենցիայի դրույթները: Ուստի, անհրաժեշտ է օրենքով սահմանել նման խոցելի խմբերի՝ սահմանային անցակետում նրանց հայտնաբերման, բացահայտման առաջնահերթության մեխանիզմ: Նման մեխանիզմի բացակայությունը չի ապահովում արդյունավետ երաշխիքներ պետական մարմինների կամայականությունների դեմ: Օրինակ՝ առաջնահերթ մեխանիզմների բացակայության պայմաններում անչափահաս ապաստան հայցողը կարող է հայտնվել քրեակատարողան հիմնարկում անորոշ ժամկետով, քրեական հետապնդման վարույթի շրջանակներում, առանց իրազեկ լինելու, որ իրավունք ունի դիմում ներկայացնել ապաստանի համար՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Իրավիճակ 4

Ն.Ք.-ն անչափահաս է, 17 տարեկան, ծնվել է Աֆղանստանում, խոսում է փուշթուն լեզվով, որը Աֆղանստանի երկու պետական լեզուներից մեկն է: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա նախնական համաձայնության գալով իր ծանոթ՝ ազգությամբ աֆղան տղամարդու հետ, 2017 թվականի հուլիսի 24-ին, ժամը 04:00-05:00-ի սահմաններում, ՀՀ Արարատի մարզի Երասխ համայնքի վարչական տարածքում, առանց սահմանված փաստաթղթերի հատել են ՀՀ պահպանվող պետական սահմանն և Ադրբեջանի Հանրապետության Նախիջևանի ինքնավար մարզից ապօրինի մուտք գործել Հայաստան, սակայն հասնելով Երասխ գյուղի օղակաձև հրապարակ հայտնաբերվել են ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից: Նրան առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով՝ ՀՀ պետական սահմանը մեկ այլ անձի հետ անօրինական կերպով հատելու համար, որից հետո կալանավորվել է և մինչ այժմ

գտնվում է խափանման միջոց կալանքի տակ, սկզբում Նուբարաշեն ՔԿՀ-ում, այնուհետև Արմավիր քրեակատարողական հիմնարկում: Թեև անազատության մեջ է 2017թվականի հուլիսի 24-ից, սակայն միայն մեկ ամիս անց է նրան հաջողվել ներկայացնել ապաստանի դիմում Միգրացիոն պետական ծառայություն, մինչդեռ դա հնարավոր էր անել հենց ձերբակալման պահին՝ «Հոստիկանության աշխատակիցներին ապաստան խնդրանք կամ դիմում ներկայացնելով՝ եթե բացահայտման առաջնահերթության համակարգը գործեր: Հատկանշական է, որ ապաստանի դիմում ներկայացնելու իր իրավունքի մասին նա իմացել է իր խցակցից, այլ ոչ թե իրավասու պետական մարմիններից, օրինակ՝ սահմանապահներից, կամ նրան ձերբակալած կամ կալանավորած իրավասու մարմիններից, մինչդեռ ապաստանի վարույթը պետք է սկսեր հենց այն պահից, երբ նա սահմանապահներին հայտնել է ՀՀ-ում պաշտպանություն գտնելու իր ցանկության մասին: Ի հավելումն, ձերբակալումից երեք ամիս անց դեռ չի լուծվել նրա խնամակալության հարցը, մինչդեռ նա համարվում է ծնողներից անջատված երեխա և առնվազն օգոստոսի 22-ից հետո յոթ օրվա ընթացքում պետք է լուծված լիներ նրա խնամակալության հարցը ծառայության կողմից: Որպես անչափահաս, նա կրում է բազմաթիվ զրկանքներ՝ նա կալանքի տակ է չափահասների հետ, նրա համար դժվար է հաղորդակցվել իր խցակիցների կամ կալանավայրի ղեկավարության հետ, քանի որ խոսում է փուշթու լեզվով, նա որևէ լուր չունի իր ընտանիքից ու ծնողներից, չի ունեցել անհրաժեշտ հագուստ ու մինչ այսօր էլ չի հասկանում, թե որտեղ է և ինչի համար են իրեն ձերբակալել: Խցում բնակվում է Թուրքիայի քաղաքացու հետ, ով չափահաս է և կալանքի տակ է մեկ այլ սահմանախախտի օժանդակելու համար: Հարազատների հետ կապվելու հնարավորություն չունի, քանի որ Աֆղանստան գանգահարելու համար անհրաժեշտ է հեռախոսի քարտ/1 րոպեն 850 դրամ/: Ըստ վերջին տվյալների, նա երկու անգամ ինքնասպանության փորձ է կատարել կալանավայրում:

Փախստական կամ ապաստան հայցող ծնողներից որևէ մեկի կամ այլ օրինական ներկայացուցչի հետ միասին կամ ուղեկցողի կամ միայնակ երեխայի համար ընդունող պետությունը պետք է իրականացնի երեխայի լավագույն շահերի ամփոփ գնահատում և ըստ գնահատ-

ման համապատասխան որոշում կայացնի: Հետևյալ պայմանները երեխայի լավագույն շահերի գնահատման (մինչ ժամանելը, ներկա իրավիճակի և արտաքսման դեպքում) մաս են կազմում: Դրանք են ֆիզիկական բարեկեցություն, համապատասխան ֆիզիկական խնամքը, ապահով

անմիջական ֆիզիկական միջավայրը, խնամքը և դաստիարակությունը, էմոցիանալ միջավայրը, աջակցող և օրինակելի ծնողները, երեխայի հետաքրքրությունները, խնամքի և դաստիարակության ապագա հեռանկարները, ապահով ֆիզիկական միջավայրը, հարգանքը, սոցիալական միջավայրը, կրթությունը, շփումը ընկերների և հասակակիցների հետ, համայնքը, կայունությունը, ապագա զարգացման հեռանկարները և այլն:

Քանի որ, ապաստանի վերաբերյալ վարույթը իրականացվում է Միգրացիոն պետական ծառայության կողմից, որն էլ իրավասու է հայտնաբերել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների՝ որպես ապաստան հայցողների, ինչպես նաև անհապաղ կերպով աջակցի նրանց խնամքի, տեղավորման, խնամակալի նշանակման և այլ անհետաձգելի հարցերում, ստացվում է, որ նման երեխաների սահմանային անցակետում հայտվելուց հետո մինչև միգրացիոն ծառայության կողմից վերը նշված գործառնությունների իրականացումը առկա է նկատելի ժամանակային բաց, որը կարող է տևել օրեր և նույնիսկ շաբաթներ: Օրինակ՝ ըստ օրենքի, առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների համար խնա-

մակալի (կամ) հոգաբարձուի նշանակումը միջնորդությունն ստանալուց հետո կատարվում է յոթ աշխատանքային օրվա ընթացքում (հոդված 7): Նման իրավիճակը չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված «արագության» պահանջին, որը կամայականության դեմ կարևոր ընթացակարգային երաշխիք է համարվում: Ըստ այդմ, սահմանային անցակետ ժամանելու պես նման երեխաներին խնամակալության և հոգաբարձության նպատակով աջակցությունը պետք է ցուցաբերվի անհապաղ կերպով, որքան հնարավոր է շուտ¹⁰³, իսկ խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը՝ որքան հնարավոր է արագությամբ¹⁰⁴: Հետևաբար, օրենքը պետք է վարչական վարույթը կարգավորի այնպես, որ կոնվենցիոն պահանջների իրականացումը հնարավոր լինի ապահովել սահմանային անցակետում ապաստանի հայց ներկայացնելուն անմիջապես հետո, որքան հնարավոր է արագ, քանի որ արագությունը, ըստ Կոնվենցիայի, կարևոր վարույթային երաշխիք է¹⁰⁵:

Օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումից բխում է, որ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս անձի ապաստան հայցելու դեպքում միգրացիոն ծառայությունը աջակցում է խնամակալի

103 Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, կետ 33:

104 Թիվ 6 Ընդհանուր մեկնաբանություն, կետ 21:

105 Տես Նույն տեղում:

նշանակման հարցում: Հստակորեն հասկանալի չէ, թե «աջակցել» ինչ է նշանակում, սակայն ձևավորվում է պրակտիկա, համաձայն որի ծառայությունն իրականացնում է նման երեխաների խնամակալություն: Նման կարգավորումը աննպատակահարմար է և առաջացնում է խնդիրներ: Միգրացիոն ծառայությունը իրականացնում է երեխայի խնամակալություն, որի համար ծառայությունը չունի ինստիտուցիոնալ փորձ ու կարողություններ: Անչափահասի ներկայացուցիչը նրա խնամակալն է, որը նշանակվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ժողով հրավիրելով և վարչական ակտ կայացնելով: Ծառայությունը չի կարող անչափահասի նկատմամբ ներկայացուցիչ նշանակել, քանի որ խնամակալության մարմինը մասնագիտացված մարմինն է, որն էլ հսկողություն է իրականացնում անչափահասի խնամքի և խնամակալի գործողությունների նկատմամբ: Բացի այդ, խնամակալին կամ ներկայացուցչին ծառայությունը նշանակում է միայն ապաստանի վարույթի ընթացքում, իսկ վարույթի ավարտից հետո երեխան, փաստորեն, մնում է առանց ներկայացուցչի: Ավելին, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, խնամակալը պարտավոր է ապրել իր խնամարկյալի հետ, հոգալ նրանց ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը,

պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը, այլ ոչ թե հանդես գալ միայն որպես նրա ներկայացուցիչ ապաստանի վարույթում: Հետևաբար, աննպատակահարմար է և բազմաթիվ խոչընդոտներ են ստեղծվում, երբ երեխայի խնամակալությունը իրականացնում է այդ գործողության համար փորձ չունեցող միգրացիոն ծառայության կողմից:

Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Միգրացիայի հարցերով լիազոր մարմինը պետք է միջոցներ ձեռնարկի երեխայի ինքնությունը և ազգությունը պարզելու համար, ինչպես նաև որոնի երեխայի ծնողներին կամ այլ ազգականներին ընտանիքի միավորման նպատակով, եթե այդ որոնումն ու միավորումը բխում են երեխայի շահերից: Ըստ թիվ 6 ԸՄ 31Բ կետի, այս գործողությունները պետք է կատարվեն արագորեն, նախնական հարցազրույցի միջոցով, կենսատվյալներ և սոցիալական պատմություն արձանագրելու համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից և այլն: Քանի որ, ինչպես նշվեց վերևում, երեխայի ինքնության և որպես հատուկ կարիք ունեցող անձի բացահայտման վարույթը սկսվում է Միգրացիոն պետական ծառայության կողմից, այդ պայմանը հնարավոր չէ ապահովել անհապաղ կերպով և արագորեն, ինչպես սահմանված է Ընդհանուր մեկնաբանության 31Բ կե-

տում՝ այսինքն այն պահից, երբ երեխան հայտնվել է սահմանային անցման կետում կամ այլ կերպ հայտնվել է ՀՀ տարածքում պետական իրավասու մարմինների վերահսկողության տակ, օրինակ՝ անօրինական սահմանը անցնելիս ձերբակալվել է սահմանապահ զորքերի կողմից: Փաստորեն, վերը նշված բոլոր կոնվենցիոն երաշխիքները չեն գործել Իրավիճակ 1-ում ներկայացված մեր պատմության հերոսի համար:

Ռիսկային իրավիճակներից մեկը՝ երեխայի **տարիքի գնահատումն** է: Տարիքի սխալ գնահատման դեպքում կամ վերջինիս բացակայության դեպքում, երեխան կարող է զրկվել ինչպես հատուկ պաշտպանության և աջակցության իրավունքից, այնպես էլ այլ, վարույթային իրավունքներից, որոնք նախատեսված են ԵԻԿ-ով, ենթարկվի շահագործման և բռնության զոհ դառնա: Թե «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը և թե «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը չեն կարգավորում այն դեպքերը, երբ առանց ուղեկցողի փախստական երեխայի կամ ապաստան հայցող երեխայի տարիքը հաստատող

կամ ճամփորդական փաստաթղթերը կամ դրա մասին տեղեկությունները բացակայում են: Այն դեպքերում, երբ բացակայում է (ակնհայտորեն) անչափահասի տարիքում գտնվող անձի տարիքը հաստատող փաստաթղթերը կամ դրա մասին տեղեկությունները, երեխան համապատասխան մարմնի կողմից պետք է ուղղորդվի Երեխայի տարիքը որոշող հանձնաժողով¹⁰⁶, որի եզրակացությունը կարող է հիմք հանդիսանալ երեխայի տարիքը որոշելու և համապատասխան փաստաթղթերը վերականգնելու համար: Ընդ որում, երեխայի տարիքը որոշելիս մասնագիտական մարմիններին անհրաժեշտ է առաջնորդվել հոգուտ երեխայի կասկածի կանխավարկածով, ըստ որի եթե առկա են պատճառներ կարծելու համար, որ անձը, ում տարիքն անհայտ է, անչափահաս է, կամ եթե անձն ասում է, որ ինքն անչափահաս է, ապա կասկածը պետք է աշխատի հոգուտ երեխայի և նա պետք է համարվի երեխա¹⁰⁷:

Ի մի բերելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունները մեծամասամբ չեն կատարվել:**

106 20 հունվարի 2011 թվականի N 18-Ն ՀՀ կառավարության որոշում Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի n 995-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65185>:

107 Տե՛ս. Տարիքի գնահատում: Միգրացիայի համատեքստում երեխաների իրավունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի երկրների քաղաքականությունը, ընթացակարգերը և պրակտիկան: Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների բաժանմունք: Դայա Վենկեյի զեկույցը: Տե՛ս կետ 47: Անգլերեն տեքստը հասանելի է հետևյալ հղումով. <https://bit.ly/2LjyoIZ>:

ԱՈԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անհրաժեշտ է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում սահմանել առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների հայտնաբերման, բացահայտման առաջնահերթության մեխանիզմ, որ այդ խոցելի խմբերի բացահայտումը չիրականացվի օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
- Օրենքում անհրաժեշտ է սահմանել այնպիսի համակարգ, որը հնարավորություն տա երեխաների տեղավորման, խնամակալության և հոգաբարձության խնդիրների կարգավորման հարցերը սկսել իրականացնել սահմանային անցման կետ նրանց հայտնվելուց անմիջապես հետո, ապաստանի դիմումի գրանցման պահից, այլ ոչ թե տևական ժամանակ հետո՝ միգրացիոն ծառայությունում:
- Օրենքը պետք է համապատասխանեցնել կոնվենցիայի պահանջին, որ հնարավոր լինի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված գործողությունների կատարումը սկսել այն պահից, երբ երեխան հայտնվում է սահմանային անցման կետում կամ այլ կերպ առաջին անգամ հայտնվել է ՀՀ տարածքում իրավասու պետական մարմինների վերահսկողության տակ:
- Օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասի կարգավորումը, համաձայն որի միգրացիոն ծառայությունը իրականացնում է առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս անձի խնամակալություն և հոգաբարձություն, անհրաժեշտ է վերացնել և այդ գործառույթները իրականացումը ապահովել ընդհանուր կարգով՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների միջոցով, ծառայությունը չունի մասնագիտական, ինստիտուցիոնալ կարողություններ այս հարցը կոնվենցիայի պահանջների ներքո կատարելու համար:
- Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի, *ընտանիքից անջատված երեխան* կարող է ուղղորդվել չափահաս անձի կողմից, մինչդեռ Կոմիտեի թիվ 6 ԸՄ-ը հստակ նշում է, որ *ընտանիքից անջատված երեխան* կարող է ուղղորդվել ընտանիքի չափահաս այլ անդամներից կողմից: Չհստակեցնելով, որ չափահաս անձը պետք է լինի ընտանիքի անդամ, օրենսդրական այս ձևակերպումը հնարավորություն է տալիս ավելի լայն մեկնաբանության: Ուստի, **տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու և օրենքի նորմի միատեսակ կիրառումը երաշխավորելու նպատակով, առաջարկվում է հստակեց-**

նել, որ ընտանիքից անջատված երեխային կարող է ուղղորդել ընտանիքի չափահաս այլ անդամ:

Այն հանգամանքը, որ երեխան ուղղորդվում է ընտանիքի չափահաս այլ անդամի կողմից, այլ ոչ թե (առհասարակ) չափահաս անձի կողմից, նվազեցնում է երեխայի առևանգված կամ թրաֆիքինգի ենթարկված լինելու ռիսկը:

- Հաշվի առնելով, որ այլընտրանքային խնամքի կազմակերպման դեպքում նախապատվությունը պետք է տրվի ընտանիքահեն խնամքին, օրինակ՝ խնամատար ընտանիքներում, իսկ հաստատությունների ներքո խնամքի կազմակերպումը պետք է սահմանափակված լինի այն դեպքերում, երբ ընտանիքահեն խնամքի կազմակերպումն անհնարին է կամ չի բխում երեխայի շահերից, ապա **անհրաժեշտություն է առաջանում վերանայել վերոնշյալ օրենքի 24-րդ հոդվածը՝ համապատասխանեցնելով այն երեխայի իրավունքների մասին կոնվենցիային և ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային խնամքի ուղեցույցին^{108:109}** Անհրաժեշտ է նաև օրենսդրորեն երաշխավորել, որ առանց ուղեկցողի մնացած երեխայի խնամքով զբաղվող կազ-

մակերպությունները կամ անձինք ունենան համապատասխան փորձառություն, անցնեն հատուկ վերապատրաստում և իրականացվի պարբերաբար վերահսկողություն:

- Անհրաժեշտ է օրենսդրական կարգավորման ենթարկել երեխայի տարիքի գնահատումը՝ ըստ վերևում նշված սկզբունքների: Թե «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, թե «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը չեն կարգավորում այն դեպքերը, երբ առանց ուղեկցողի փախստական երեխայի կամ ապաստան հայցող երեխայի տարիքը հաստատող կամ ճամփորդական փաստաթղթերը կամ դրա մասին տեղեկությունները բացակայում են:

**2) ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ՓԱԽՍՏԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ
ՀԱՅՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ**

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ փախստականի կարգավիճակ ունեցող և ապաստան հայցող երեխաների հանրակրթական դպրոցներում տեղավորման հարցերում հաճախ ծագում են խնդիրներ,

108 ՄԱԿ-ի երեխայի այլընտրանքային ուղեցույց, Բանաձև 64/142 ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից: Տե՛ս, մասնավորապես՝ կետ 111: Հասանելի է հետևյալ հղումով. https://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf:

109 Տե՛ս կետ 111:

որոնք հիմնականում պայմանավորված են ոչ թե օրենսդրության բացով, այլ պրակտիկայով և համապատասխան ռեսուրսների բացակայությամբ: Մասնավորապես, որոշ դեպքերում տնօրենները խուսափում են ընդունել օտարերկրացի երեխաներին հիմնականում լեզվական խոչընդոտների համար, իսկ որոշ դեպքերում էլ ինտեգրման խնդիրների հետ կապված, հատկապես, եթե երեխաները ազգությամբ հայեր չեն: Ընդհանուր առմամբ, բացակայում է փախստական երեխաների համար մշակված հատուկ մասնագիտական մեթոդաբանություն: Խնդիրներ են ծագում նաև, երբ փախստական երեխաները չունեն պահանջված փաստաթղթերը, որոնք ընդհանուր կարգով պահանջվում են, օրինակ՝ ծննդյան վկայականի պատճենը, կամ պատճենը՝ նոտարական թարգմանությամբ ու վավերացմամբ: Հետևաբար, **Կոմիտեի առաջարկությունները այս մասով մնում են չկատարված:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անհրաժեշտ ստեղծել փախստականի կարգավիճակ ունեցող անձանց իրազեկման մեխանիզմ այն մասին, որ իրենք ունեն անվճար իրավաբանական ներկայացուցչության իրավունք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետի հիմքով, և բոլոր այն

դեպքերում, երբ կրթական հաստատության ղեկավարները երեխաներին դպրոց տեղավորելու հարցում անհարկի խոչընդոտներ են հարուցում, նրանք պետք է իրազեկվեն անհապաղ կերպով դիմել անվճար փաստաբանի օգնությանը, որպեսզի արագացված կարգով վիճարկեն կրթության հաստատության ղեկավարի որոշումները և գործողությունները:

3) ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂ ԵՐԵՒԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ ԴԱՌՆԱԼՈՒ ԲԱՑԱՌՈՒՄԸ

Հանձնաժողովը մտահոգություն է հայտնել, որ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը ունի բացեր, որոնք կարող են քաղաքացիություն չունենալու վտանգ առաջացնել օտարերկրացի ծնողների երեխաների կամ Հայաստանի քաղաքացիությունից զրկված ծնողների երեխաների համար: Այս առումով կոմիտեն առաջարկել է փոփոխել օրենսդրությունը այնպես, որ ապաստան հայցող ոչ մի երեխա իրավակարգվորումների կամ պրակտիկայի հետևանքով չդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ-ում բնակվող անձը, ով այլ պետության քաղաքացիություն ունենալու ապացույց չունի, համարվում է քաղաքացիություն չունեցող անձ:

Այսինքն, ապաստան հայցող երեխան իր քաղաքացիության վերաբերյալ վարույթի ընթացքում ապացույց չներկայացնելու դեպքում կարող է դառնալ քաղաքացիություն չունեցող անձ: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը: Այս սահմանումը բխում է «Ապաքաղաքացիության կրճատման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոս ամսից, և որի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ցանկացած Պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը չնորհում է իր փարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ: Այդպիսի քաղաքացիություն չնորհվում է ծնվելիս՝ օրենքի ուժով, կամ շահագրգիռ անձի կողմից կամ նրա անունից համապատասխան մարմնին՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացնելու միջոցով»:* Միգրացիոն պետական ծառայությունից ստացված գրության համաձայն, փախստականների կամ ապաստան հայցողների դիմումների քննության արդյունքում քաղաքացիություն չունեցող անձ դարձած երեխաների վերա-

բերյալ միգրացիոն պետական ծառայությունում տվյալներ չեն հայտնաբերվել: Հետևաբար, ն օրենքը, ն պրակտիկան համահունչ են Կոնվենցիայի պահանջներին այն դեպքում, երբ ՀՀ տարածք մուտք գործած երեխան հայցում է ապաստան կամ փախստականի իրավունք:

Ինչ վերաբերում է հանգամանքին, երբ երեխան ծնվում է ՀՀ-ում, ապա այս առումով «Քաղաքացիության մասին» օրենքի 12-րդ հոդվածը, որը կարգավորում է նման դեպքերը, 2015 թվականին էապես բարեփոխվել է և հարմարեցվել Կոնվենցիայի և վերը նշված՝ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին: 12-րդ հոդվածը իր նախկին խմբագրմամբ միայն սահմանում էր, որ ՀՀ-ում ծնված երեխան, ում ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք էին, ձեռք էին բերում ՀՀ քաղաքացիություն: Օրենքը չէր կարգավորում այն դեպքերը, երբ, օրինակ՝ ծնողների քաղաքացիությունը հայտնի էր, սակայն ծագման երկրի օրեսդրությունը տարբեր պատճառներով թույլ չէր տալիս ծնողին քաղաքացիությունը փոխանցել երեխային: Ստացվում էր, որ նման դեպքերում երեխան հնարավորություն չունեք ընդունել ՀՀ քաղաքացիություն և դառնում էր քաղաքացիություն չունեցող անձ: 2015 թվականի մայիսի 7-ին ՀՕ-33-Ն օրենքով 12-րդ հոդվածը էական փոփոխության են-

թարկվեց և սահմանվեցին բազմաթիվ այլընտրանքային հիմքեր: Մասնավորապես, հողվածի 1-ին մասի ներքո սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունում ծնված երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե, օրինակ՝ 1) ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք են, 2) ծնողների քաղաքացիությունն անհայտ է, 3) ծնողներն այլ երկրի (երկրների) քաղաքացիներ են, սակայն չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի (երկրների) օրենսդրության համաձայն, և այլ հիմքեր, որոնք սովորաբար բնորոշ են ապաստան հայցող անձանց և փախստականներին: Այսինքն, օրենքը համապատասխանեցվեց Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջին, համաձայն որի երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և **քաղաքացիության իրավունք**: Այսինքն, քաղաքացիության ձեռք բերման կամ տրամադրման հարցը պետք է դիտարկել իրավունքի լույսի ներքո, իսկ դա էլ՝ երեխայի լավագույն շահի իրավունքի ընդհանուր լույսի ներքո: Ավելին, Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը պետք է դիտարկել Ապաքաղաքացիության կրճատման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի ներքո:

Այսպիսով, և օրենքը և պրակտիկան համահունչ են Կոնվենցիայի

պահանջներին և համակարգային խնդիրը, որը մատնանշել է Կոմիտեն իր ամփոփիչ դիտարկումներում, լուծվել է: **Այսպիսով, Կոմիտեի առաջարկությունը կատարվել է:**

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ զգալի թվով երեխաներ, ներառյալ՝ 14 տարեկանը չլրացած երեխաներ, դուրս են մնում դպրոցից, որպեսզի աշխատեն ոչ ֆորմալ ոլորտներում, օրինակ՝ գյուղատնտեսությունում, ավտոսպասարկման և շինարարության ոլորտներում, մետաղի ջարդոնի հավաքման գործում և ընտանեկան բիզնեսում: Կոմիտեն առանձնապես մտահոգիչ է համարել փողոցներում մուրալով զբաղված և ծանր ֆիզիկական (բանվորի և բեռնողի) աշխատանք կատարող երեխաների թվի աճի կապակցությամբ, ինչպես նաև այն հանգամանքի առնչությամբ, որ աշխատանքի տեսչություններն արդյունավետորեն չեն վերահսկում մանկական աշխատանքը:

Կոմիտեն առաջարկել է (կետ 50)՝

- ապահովել աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը Կոնվենցիայի 32-րդ հոդվածին, ներառյալ՝ գործող օրենքների արդյու-

նավետ կիրառությունը և աշխատանքի տեսչությունների հզորացումը և ներգրավումը.

- ստեղծել մանկական աշխատանքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ, ապահովել երեխաների շահագործման մեղավորների նկատմամբ համաչափ պատժամիջոցների կիրառությունը, ընդ որում՝ այդ ընթացքում ապահովել հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին երեխաների տեղեկացվածությունը և նման մեխանիզմների հասանելիությունը երեխաներին: Այս առնչությամբ առաջարկվում է տեխնիկական աջակցություն հայցել Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագրից:

**1) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՊԱՏԱՍ-
ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՆՎԵՆՑԻ-
ԱՅԻ 32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ,
ՆԵՐԱՈՅԱԼ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՉՈՐԱՑՈՒՄԸ
ԵՎ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ**

Ազգային վիճակագրական ծառայության 2016 թվականի հրապա-

րակված տվյալների համաձայն, Հայաստանում երեխաների 4-5%-ը ներգրավված է եղել աշխատանքային գործունեության մեջ՝ տղաների բացարձակ մեծամասնությամբ, իսկ գյուղատնտեսությունը եղել է գրառվածության հիմնական ոլորտը:¹¹⁰

«Սահմանադրությունը և օրենսդրությունը սահմանում է երեխայի աշխատանքի վարթարագույն ձևերի բազմաթիվ նյութաիրավական հիմքեր, որոնք համահունչ են Կոնվենցիայի 32-րդ հոդվածի պահանջներին: **Պարտադիր և հարկադիր** աշխատանքի արգելքը սահմանված է Սահմանադրության 57-րդ հոդվածով, Աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածով, և Քրեական օրենսգրքի 132 և 132.2 հոդվածներով: **Վնասակար աշխատանքների** և գործողությունների տեսակները մինչև տասնութ տարեկան երեխաների համար սահմանված են «ՀՀ աշխատանքային օրենսգրքի» բազմաթիվ դրույթներով, օրինակ՝ աշխատաժամանակի համար կրճատ տևողություն (հոդված 140), գիշերային աշխատանքի և հերթապահության ներգրավվելու անթույլատրելիություն (հ. 148-149), հանգստի համար լրացուցիչ ընդմիջում տրամադրելու (հ. 153) և շաբաթվա ընթացքում առնվազն երկու հանգստյան օր տրամադրելու պահանջները, միայնակ գործուղման

110 Հայաստան. երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն: Բաժին 2.5.:

ուղարկելու անթույլատրելիությունը (հ. 155), աշխատանքի ընդունվելիս պարտադիր բժշկական զննություն անցնելու պահանջը (հ. 209), օրենքով սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, և օրենքով սահմանված այլ դեպքերում մինչև տասնութ տարեկան անձանց ներգրավելու արգելքը (հ. 257): Նման աշխատանքների սպառիչ ցանկը սահմանված է կառավարության որոշմամբ¹¹¹: **Երեխայի թրաֆիքինգը**, որպես քրեորեն հետապնդելի արարք սահմանված է Քրեական օրենսգրքի 132 և 132.2 հոդվածներով, իսկ **սեռական շահագործումը**¹¹² 166, 261-263 հոդվածներով: Երեխային **հանցավոր այլ արարքների մեջ ներգրավելը**, որոնք կարող են ներառել հանցավոր բնույթի աշխատանքային գործունեություն, պատժելի արարքներ են Քրեական օրենսգրքի 63, 165, 166.1 և 266.1 հոդվածներով:

Իրավական նորմերի այս բազան ապահովում է Կոնվենցիայի 32-րդ հոդվածին համահունչ իրավական երաշխիքներ, և պատահական չէ, որ «Վորլդ Վիժն» միջազգային կազ-

մակերպության 2016 թվականի սեպտեմբերին հրապարակված Երեխայի պաշտպանության ինդեքսով¹¹² Հայաստանի Հանրապետության ջանքերը Կոնվենցիայի 32-րդ հոդվածով սահմանված պարտականությունների կատարման ուղղությամբ թեև գնահատվել են նվազագույնը ինը պետությունների շարքում (0,381 միավոր առավելագույնը 1,0 միավորից – ամենավատ արդյունքը ինդեքսի ինը երկրների շարքում), օրենսդրության և քաղաքականության ուղղությամբ կիրառված միջոցները գնահատվել են ամենաբարձր ցուցիչով՝ 0,615:

Այդուհանդերձ, Յուրիչյում միևնույն ժամանակ այն կարծիքն է առաջ քաշվել, որ ՀՀ ներպետական օրենսդրությամբ հստակ չէ, թե ինչպես են երեխայի աշխատանքի վերաբերյալ սահմանումները համապատասխանում ԱՄԿ պահանջներին, և այդ իմաստով առաջարկվել է օրենսդրությամբ հստակորեն սահմանել աշխատանքի «վատթարագույն ձևեր» հասկացությունը, և այդ հասկացության մեջ ամբողջությամբ սահմանել, որ արգելվում են աշխատանքի այլ բոլոր ձևերը, որոնք խոչընդոտում են երեխայի

111 Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 116ի N 1599-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 876-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշում:

112 Երեխայի պաշտպանության ինդեքս: Հայաստան 2016. Սեպտեմբեր 2016. Հասանելի է հետևյալ հղումով. <http://mankutyun.am/resursview/18/>

կրթություն ստանալը և վստասում երեխայի ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը: Ի հավելումն, առկա է նաև տեսակետ, որ օրենսդրությունը, մասնավորապես՝ Աշխատանքային օրենսգիրքը չի սահմանում հարկադիր աշխատանքի եզրույթը¹¹³ և այդ առումով բացակայում են նաև հարկադիր աշխատանքի ցուցիչները:

Ի հավելումն վերը նշվածի, ՀՀ-ում բացակայում է աշխատանքի պետական տեսչություն, որի կազմում հնարավոր կլիներ նաև վերահսկել երեխաների անօրինական աշխատանքը տարբեր ձեռնարկություններում: 2013 թվականի հուլիսի 25-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված N 857-Ն որոշմամբ¹¹⁴, ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեցին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության, որի արդյունքում 2014 թվականի դեկտեմ-

բերից Աշխատանքի պետական տեսչությունը դադարեցրեց իր գործունեությունը: Մինչդեռ, դեռ 2004 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել՝ 1947 թվականի հուլիսի 11-ին Ժնևում ստորագրված՝ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով (ՍԴՈ-520), համաձայն որի՝ «Կոնվենցիայով Պայմանավորվող կողմերը պարտավորվում են արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում ստեղծել աշխատանքի տեսչության համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքային պայմաններին և պաշտպանությանը վերաբերող իրավանորմերի կիրառումը»¹¹⁵: ՀՀ սահմանադրական դատարանի որոշման մեջ հստակ նշվում է աշխատանքի տեսչության համակարգի ներդրման մասին, որը պետք է իրականացնի

113 Հարկադիր աշխատանքի արգելքը և բացառությունները ամրագրվել են 2015 թվականի ՀՀ Սահմանադրության փոփոխություններով (հոդված 57.5), ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված 3.1):

114 ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու, 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման մեջ փոփոխություններ, 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 1319-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2004 թվականի հուլիսի 29-ի N 1146-Ն, 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1893-Ն, 2004 թվականի նոյեմբերի 25-ի N 1724-Ն ու 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1316-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին: Տես <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115141>:

115 ՍԴՈ-520, կետ 2:

ոչ միայն աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող թերությունները վերացնելու նպատակով գործառույթներ, այլ նաև ապահովի աշխատողների աշխատանքային պայմաններին և պաշտպանությանը, օրինակ՝ աշխատանքային պայմանագրին, աշխատանքային օրվա տևողությանը, աշխատավարձին, **երեխայի աշխատանքային իրավունքներին վերաբերող իրավանքների կիրառումը:**

Ինչ վերաբերում է Պետական առողջապահական գործակալությունը, ապա այս մարմինը չի իրականացնում աշխատանքային հարաբերությունների վերահսկողություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ Կոմիտեի առաջարկությունները չեն կատարվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անհրաժեշտ է Աշխատանքային օրենսգրքում սահմանել երեխայի աշխատանքի «վատթարագույն ձևեր» հասկացությունը, և դրա շրջանակներում սահմանել, որ արգելվում է աշխատանքի բոլոր վատթարագույն ձևերը, որոնք կարող են խոչընդոտել կրթություն ստանալը և վնասել երեխայի առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը,

- Անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել հարկադիր աշխատանքի սահմանումը և դրա օբյեկտիվ հատկանիշները որոշելու համար անհրաժեշտ ցուցիչներ: Ուսումնասիրել հարկադիր աշխատանքը քրեականացնելու հարցը՝ անգամ այն դեպքում, երբ դա կապված չէ մարդկանց թրաֆիքինգի հետ, և իրականացվել է առանց թրաֆիքինգի հատկանիշների:
- Անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել «անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների» եզրույթները հաշվի առնելով Փողոցային իրավիճակներում հայտնված երեխաների վերաբերյալ Կոմիտեի թիվ N 21 (2017) ԸՄ դրույթները, ինչը թույլ կտա ունենալ իրական պատկեր և ավելի հստակ վիճակագրություն, ինչպես նաև ընդունել ընթացակարգեր, կարգավորումներ, վերանայել հատկացվող բյուջեն, մատուցվող ծառայությունները, իրականացնել վերապատրաստումներ մասնագետների հետ /և ոչ միայն ոստիականների, այլ նաև երեխայի պաշտպանության համակարգի այլ մասնագետների/, մշակել ավելի արդյունավետ և թիրախավորված քաղաքականություն, ուղղորդման մեխանիզմներ և վերականգնողական/ներառական ծրագրեր: Սահմանումների հստակեցման պարագայում անհրաժեշտ կլինի

արդիականացնել նաև ազգային տեղեկատվական բազան և կատարել նոր հետազոտություններ և ուսումնասիրություններ հիմնախնդիրներին լուծումներ տալու նպատակով:

2) ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Թեև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքի համաձայն, Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, սակայն այդ գործառույթը սահմանափակված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև այդ մարմինների պատվիրակած լիազորություններն իրականաց-

նող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտումներին¹¹⁶ և հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերին¹¹⁷: Այսպիսով, Պաշտպանի աշխատակազմը չի կարող ստանձնել մանկական աշխատանքի մասին հաղորդումներ բողոքներ ներկայացնող միասնական, անձնական մարմնի դերը:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, աշխատողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, հետևաբար նաև երեխաների շահերի պաշտպանությունը աշխատանքային հարաբերություններում, հնարավոր է իրականացնել նաև արհեստակցական միությունների միջոցով¹¹⁸: Սակայն, ըստ 2015 թվականին հրատարակված «Հարկադիր աշխատանքը և աշխատանքային թրաֆիկինքը Հայաստանում»¹¹⁹ հետազոտության, ներկայում, արհմիությունների «հսկողական ֆունկցիան» կրում է ձևական բնույթ, քանի որ

116 «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, 2-րդ հոդված, 3-րդ մաս, ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:

117 Տե՛ս նույն տեղում, 15-րդ հոդված:

118 ՀՀ աշխատանքային օրենսգրքը, 21-րդ հոդված: Ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, վերջին անգամ փոփոխվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:

119 Պատրաստվել և հրատարակվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանի գրասենյակի աջակցությամբ և ԱՄՆ պետքարտուղարության մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ու պետությունների մշտադիտարկման գրասենյակի և ԱՄՆ պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի ֆինանսավորմամբ: Տե՛ս <http://www.osce.org/hy/yerevan/212566?download=true>:

չունեն իրավական լծակներ ազդելու գործատուների որոշումների վրա: Այս ամենի վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ աշխատողների մոտ իրավագիտակցության ցածր մակարդակը, արհմիությունների անդամակցման ցածր ցուցանիշը, գործազրկության բարձր մակարդակը, գրավոր աշխատանքային պայմանագրերի կնքման և արտաժամյա աշխատանքը և աշխատավարձի ինդեքսավորման և նվազագույն աշխատավարձի ձևավորման մեխանիզմների հետ կապված այլ խնդիրներ¹²⁰: Հետևաբար, արհմիությունների համակարգը նույնպես չի կարող ծառայել որպես մանկական աշխատանքի վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու համակարգ:

Մանկական աշխատանքի վերաբերյալ հաղորդումների, բողոքների մեխանիզմի իրագործումը հնարավոր կլիներ կատարել Աշխատանքի պետական տեսչության միջոցով, որը որպես պետական մարմին իրավունք ուներ հաղորդումներ ընդունել քաղաքացիներից և քննություն կատարելով վարչական պատասխանատվության ենթարկել գործատուներին օրենքի խախտմամբ անչափահասներին աշխատանքային գործունեության մեջ ներգրավելու համար: Սակայն, ինչպես արդեն նշվեց վերևում, ՀՀ կառավարության կողմից ընդունված N 857-Ն որոշման¹²¹, ՀՀ առողջապա-

հության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեցին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության, իսկ 2014 թվականի դեկտեմբերից Աշխատանքի պետական տեսչությունը դադարեցրեց իր գործունեությունը: Ինչ վերաբերում է Պետական առողջապահական գործակալությանը, այս մարմինը չի իրականացնում աշխատանքային հարաբերությունների վերահսկողություն, այլ իրականացնում է վերահսկողություն միայն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների հետ պետական պատվերի մասով բժշկական ծառայությունների որակի և ծավալի վերահսկում: Հետևաբար, այս մարմինը չի կարող ծառայել որպես մանկական աշխատանքի վերահսկողության մարմին:

Երեխաների աշխատանքի կանխարգելման ու վերացման նկատմամբ պետական վերահսկողությունը ներկայումս իրականացնում է միայն ոստիկանությունը՝ անչափահասների գործերով ոստիկանության տարածքային բաժանմունքների միջոցով, որոնք կատարում են պրոֆիլակտիկ աշխատանք, ինչպես նաև կոնկրետ գործերով իրականացնում

120 Տե՛ս նույն տեղում. <http://www.osce.org/hy/yerevan/212566?download=true> , էջ-221-223:

121 Տողատակի ծանոթություն 56:

են հետաքննություն և քրեաիրավական հիմքերի առկայության դեպքում դիմում են իրավասու մարմիններին քրեական հետապնդում իրականացնելու համար, օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչություն՝ երեխաների թրաֆիքինգի գործերով քննություն իրականացնելու համար: Ոստիկանության տարածաքային բաժանմունքների այդ պրոֆիլակտիկ աշխատանքները համակարգվում են Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության կազմում Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության կողմից:

Սակայն Ոստիկանության անչափահասների գործերով տարածքային բաժինները, ինչպես նաև Քրեական հետախուզության գլխավոր վարչության կազմում Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչությունը մանկական աշխատանքի դեմ իրականացնում են գործունեություն միայն այնքանով, որքանով խնդիրը ունի հանցագործության հատկանիշներ (թրաֆիքինգ, հարկադրանք, սեռական շահագործում, և այլն), և եթե խոսքը վերաբերում է մուրացկանությամբ, թափառաշրջիկությամբ կամ փողոցային առևտուր կատարող երեխաների նկատմամբ պրոֆիլակտիկ գործունե-

ությանը: Երկուսի առումով Ոստիկանությունը իրականացրել է նկատելի գործունեություն: Բացահայտվել են երեխաների վերաբերյալ թրաֆիքինգի գործեր: Ոստիկանության պետի 2013թվականի նոյեմբերի 7-ի N 3837 – Ա հրամանով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիքինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով: ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումների արդյունքում հայտնաբերված մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների մի մասը ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության կողմից ուղղորդվում են Հայ օգնության ֆոնդի Երեխաների աջակցության կենտրոն, ուր գործող բազմամասնագիտական խորհրդի կողմից անչափահասներին ցուցաբերվում է անհրաժեշտ բժշկական, բարոյահոգեբանական և սոցիալական օգնություն: Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասները ուղղորդվում են նաև ՀՀ տարածքում գործող համայնքային վերականգնողական կենտրոններ, որտեղ ինչպես անչափահասների, այնպես էլ նրանց ծնողների հետ իրականացվում են երկարաժամկետ կանխարգելիչ աշխատանքներ: Հայտնաբերված երեխաների վերաբերյալ միջնորդություններ են ուղարկվում նաև ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևա-

նի քաղաքապետարան՝ վերջիններիս դպրոց վերադարձնելու նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության նախարարություններ, ինչպես նաև անչափահասների բնակության վայրերի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ նրանց աջակցություն ցուցաբերելու համար¹²²: Չնայած այս լայնածավալ գործունեությանը, ոստիկանության համակարգը և, մասնավորապես՝ Անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնությունների դեմ պայքարի վարչությունը չի կարող ծառայել որպես մանկական աշխատանքի մասին հաղորդումներ, բողոքներ ներկայացնելու միասնական, ազգային համակարգ՝ ինչպես առաջարկվել է Կոմիտեի կողմից:

2015 թվականին Կառավարության կողմից ընդունվեց «Մուրացկանությանը և թափառաշրջիկությանը զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման» ռազմավարություն,¹²³ որով չի նախատեսվում մանկական աշխատանքի մասին հաղորդումների, բողոքների ներկայացման միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգ:

Այսպիսով, **Կոմիտեի առաջարկությունը մանկական աշխատանքի**

քի վերահսկողության վերաբերյալ միասնական, ազգային համակարգ ստեղծելու մասով չի կատարվել: Բացակայում է մանկական աշխատանքի մասին հաղորդումներ, բողոքներ ներկայացնելու **միասնական, ազգային համակարգ**, երեխաների տարիքին և հանգամանքներին համապատասխան ձևով (child-friendly) հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ: Բացակայում են նաև աշխատանքի վատթարագույն ձևերում ընդգրկված աշխատող երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմները: Վերջինիս մշակումը և ներդրումը նախատեսված է Հայաստանի Հանրապետությանում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցով:

Ինչ վերաբերում է հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին երեխաների տեղեկացվածությունը և նման մեխանիզմների հասանելիությունը երեխաներին ապահովելու վերաբերյալ Կոմիտեի առաջարկին, այս առումով ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաները ընդհանուր առմամբ իրազեկված չեն

122 Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի վերաբերյալ Հայաստանի հանրապետության ազգային զեկույցին (հաշվետու ժամանակաշրջան 2012-2015 թվականների) հավանություն տալու մասին ՀՀ կառավարության 16.03.2017 արձանագրային որոշում N 11: Տե՛ս <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89124>:
123 ՀՀ կառավարության արձանագրային որոշում N 37, 06.08.2015. Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=81848> :

հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների մասին, և նման մեխանիզմները հասանելի չեն նրանց վատ իրազեկման պատճառով¹²⁴: Հասարակական և այլ կազմակերպությունների գործունեության շնորհիվ խնամքի և պաշտպանության հաստատությունների սաների միջավայրում թրաֆիքինգի և շահագործման երևույթների մասին իրազեկվածությունն ավելի բարձր է, քան երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերինը¹²⁵: Հետազոտությունը նշում է նաև երեխայի պաշտպանությամբ զբաղվող մասնագետների մոտ իրազեկվածության պակաս կա այս ոլորտում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անհրաժեշտ է ստեղծել մանկական աշխատանքի վերահսկողության ազգային համակարգ, որն իրավասու կլինի ընդունել բողոքներ, կատարել քննություն, հայտնաբերել իրավախախտներին (դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ), պատասխանատվության ենթարկվել իրավախախտներին, ինչպես նաև իրականացնել հանրային իրազեկման

գործունեություն:

- Վերը նշված համակարգի մշակման համար առաջարկվում է տեխնիկական աջակցություն հայցել ԱՄԿ Մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագրից:
- Անհրաժեշտ է հզորացնել արհմիությունների կարողությունները երեխայի աշխատանքի հետ կապված ստուգումներ աշխատանքներ իրականացնելու նպատակով:
- Օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով հարկադիր աշխատանք եզրույթը և հարկադիր աշխատանքի ցուցիչները սահմանելուց հետո, անհրաժեշտ է դրանց հիման վրա համապատասխան ստուգաթերթեր մշակել՝ տեսուչների կողմից ստուգումներ իրականացնելու նպատակով:
- Իրականացնել երեխայի վատթարագույն աշխատանքի ձևերի վերաբերյալ իրազեկմանն ուղղված աշխատանքներ.
 - ռիսկային խմբի երեխաների,
 - ծնողների (խնամակալների),
 - խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակազմի,
 - երեխայի պաշտպանությամբ զբաղվող մարմինների՝ խնա-

124 «Հարկադիր աշխատանքը և աշխատանքային թրաֆիկինքը Հայաստանում». փորձնական հետազոտություն: ԵԱՀԿ ԱՄՆ Պետքարտուղարության թրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրո: Երևան 2015. Էջ 106: Հասանելի է հետևյալ հղումով. <http://www.osce.org/hy/yerevan/212566?download=true>:

125 Հետազոտությունն իր մեջ ներառում է նաև երեխաների խնամքի և պաշտպանության ու հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում գտնվող երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր ռիսկերի հետազոտություն:

մակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների, մարզպետարանների՝ Ընտանիքի, կանանց և երեխաների հարցերով զբաղվող բաժինների աշխատակիցների,

- ուսումնական հաստատությունների,
- ինտեգրված սոցիալական ծառայության աշխատողների (սոցիալական աշխատողների և դեպք վարողների) համար:

3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՐԴԱՐԱԴԱ- ՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Կոմիտեն ի գիտություն է ընդունել այն հանգամանքը, որ ՀՀ ընդհանուր իրավասության յուրաքանչյուր դատարանում կա երեխաների գործերի քննությամբ մասնագիտացող մեկական դատավոր և որ օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների հարցերը կանոնակարգվում են քրեական օրենսդրությամբ: Այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ՝ ա. բացակայում է անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգ, ներառյալ՝ անչափահասների դատարաններ և անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ համապարփակ օրենսդրություն՝ արտադատական

ուղղորդման մեխանիզմների և արդարադատության պաշտոնական համակարգին արդյունավետ այլընտրանքների վերաբերյալ դրույթների առկայությամբ.

- բ. երեխաները քրեական գործի նախաքննության ընթացքում նախնական կալանքի տակ են պահվում տևական ժամանակ.
- գ. երեխաների նկատմամբ կարող են կիրառվել 5-10 օր ժամկետով մեկուսախցում պահման պատժամիջոցներ.
- դ. «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը, որտեղ պահվում են ազատությունից զրկված երեխաները, ապահովված չէ տարրական հիգիենիկ և անկողնային պարագաներով: Նման հիմնարկներում պահվող երեխաները չեն ստանում պատշաճ կրթություն.
- ե. առկա չեն քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաների վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ ծրագրեր:
Կոմիտեն առաջարկել է (կետ 52)՝
 - սահմանել հստակ ժամանակացույց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի քննարկման համար, որով նախատեսվում է անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգի ստեղծումը, ինչպես նաև ապահովել դրա լիակատար համապատասխանու-

թյունը Կոնվենցիային, մասնավորապես՝ 37-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներին, ինչպես նաև այլ համապատասխան չափանիշներին¹²⁶: Կոմիտեն, մասնավորապես, առաջարկել է՝

ա) ստեղծել անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգ, ներառյալ՝ անչափահասների դատարաններ՝ հիմնված համապարփակ իրավական կարգավորումների վրա, ինչպես նաև ներդնել արտադատական ուղղորդման մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանխել օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների՝ արդարադատության ֆորմալ համակարգում հայտնվելը:

մշակել դատական քննության, պատժի նշանակման և պատժի կատարման նոր այլընտրանքներ, ինչպիսիք են՝ համայնքային աշխատանքը և տուժողի ու իրավախախտի միջև հաշտարարությունը (մեդիացիա)՝ խարանումից խուսափելու և իրավախախտների արդյունավետ վերաինտեգրումն ապահովելու նպատակով:

բ) ապահովել, որ երեխաների նկատմամբ նախնական կալանքը կիրառվի միայն որպես վերջին միջոց և հնարավորինս կարճ ժամկետով:

գ) հրատապ միջոցներ ձեռնարկել՝ արգելելու երեխաների պատժիչ մեկուսացումը, որը հավասարազոր է անմարդկային վերաբերմունքի:

դ) հրատապ միջոցներ ձեռնարկել, որ «Աբովյան» և այլ քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաներին տրամադրվեն բոլոր անհրաժեշտ հիմնական պարագաները, հիգիենայի միջոցներ և անկողնային մաքուր պարագաներ, ապահովել հիմնարկներում պահվող երեխաների պատշաճ կրթությունը:

ե) ներդնել վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ ծրագրեր՝ հատուկ թիրախավորելով քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաներին:

«Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի քննարկման հստակ ժամանակացույց դեռևս սահմանված չէ: Ըստ «Արդարա-

126 Կոմիտեն այդ իմաստով անդրադարձել է Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններին (Պեկինյան կանոններ), Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշներին անչափահասների հանցավորությունը կանխելու վերաբերյալ (Ռիայան ուղենիշներ), Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններին (Հավանայի կանոններ), Քրեական արդարադատության համակարգում հայտնված երեխաների նկատմամբ գործողությունների ուղենիշներին, ինչպես նաև Կոմիտեի թիվ 10 ընդհանուր մեկնաբանությանը (CRC/C/GC/10, 2007):

դատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 5-ի պաշտոնական պարզաբանման՝ ներկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծն այն մշակող աշխատանքային խմբի կողմից լրամշակվում է: Նախագիծը լրամշակվելուց հետո կտեղադրվի e-draft.am իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում, որի արդյունքում ստացված դիտողություններն ու առաջարկություններն ամփոփելուց հետո նախագիծը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ: Ասվածից կարելի է եզրակացնել, որ դեռևս հստակ չեն նախագծի շուրջ հանրային քննարկումների կազմակերպման, նախագիծը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու ժամկետները:

Բացի այդ, Կոմիտեի վերը նշված առաջարկությունների առնչությամբ հարկ է արձանագրել ստորը նշված խնդիրները:

1) ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Թեև 2006 թվականից սկսած Հա-

յաստանի Հանրապետությունում շարունակաբար վերապատրաստվել և յուրաքանչյուր ընդհանուր իրավասության դատարանում գործում են մեկական՝ անչափահասների գործեր քննող դատավորներ, այսուհանդերձ, անչափահասների գործերով արդարադատության ամբողջական համակարգ դեռևս ներդրված չէ: Ավելին, որևէ իրավական կարգավորմամբ, հայեցակարգերով կամ ռազմավարական փաստաթղթերով նման բան չի նախատեսվում: Այսպես, 2015 թվականի Սահմանադրության փոփոխություններով պայմանավորված՝ ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծը¹²⁷: Նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարող են ընտրվել առանձին տեսակի գործեր քննող (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված եւ անօրինական պահվող երեխաների վերադարձի եւ այլն) դատավորներ, ովքեր քննում են նաև համապատասխան մասնագիտացման այլ գործեր:

127 Հասանելի է հետևյալ հղումով. <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=46919>

Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու օրը, բացառությամբ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման վերաբերյալ դրույթների, որոնք ուժի մեջ են մտել սույն օրենսգրքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Չնայած անչափահասների հարցերով մասնագիտացված դատավորներ ընտրելու Բարձրագույն դատական խորհրդի իրավասության օրենսդրական ամրագրմանը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով անչափահասների գործերով մասնագիտացված առանձին դատարաններ նախատեսված չեն: Այլ կերպ ասած, այսպիսի օրենսդրական կարգավորումներով փաստորեն անչափահասների գործերով առանձին դատարանների ստեղծման ինստիտուցիոնալ լուծումներ առկա չեն. ընդհանուր իրավասության դատարաններում շարունակելու են գործել մասնագիտացված դատավորներ:

Արտադատական ընթացակարգերի հետ կապված՝ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Անչափահասների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները» կանոնակարգող դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ անչափահասների վերաբերյալ վարույթը չափահասների վերաբերյալ վարույթից տարբերվող սկզբունքային առանձնահատկություններ չունի: Ի տարբերություն գործող օրենսդրության՝ Նախագիծը պարունակում է անչափահասների վարույթին վերաբերող առանձնահատուկ դատավարական կարգավորումներ, ինչպիսիք են, օրինակ, անչափահասների վերաբերյալ վարույթի արագ և առանց ան-

հարկի ձգձգումների քննության պահանջը և դրանով պայմանավորված՝ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամկետների երկարացման արգելքը, անչափահասի ձերբակալման և կալանավորման կիրառման առանձնահատուկ կանոնները, դաստիարակչական կամ պատժիչ բնույթի հարկադրանքի միջոց կիրառելով քրեական հետապնդումը դադարեցնելու առանձնահատկությունները:

Կոմիտեն անչափահասների գործերով արդարադատության համակարգի ներդրման շրջանակներում առաջարկել է մշակել դատական քննության և պատժի կրման այլընտրանքներ, ինչպիսիք են, օրինակ, հաշտարարությունն ու համայնքային աշխատանքը: Սրա հետ կապված հարկ է նկատել, որ գործող քրեական օրենսդրությունը որպես հանցանք կատարած անչափահասների նկատմամբ կիրառվող պատժին այլընտրանք նախատեսում է միայն դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները. 1) նախազգուշացում, 2) ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման

կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը վեց ամիս ժամկետով, 3) պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում, 4) ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը վեց ամիս ժամկետով: Քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներն են՝ տուգանքը, **հանրային աշխատանքները**, կալանքը, որոշակի ժամկետով ազատագրվումը: Օրենսգրքի մեկ այլ՝ 54-րդ հոդվածի ուժով **հանրային աշխատանքները՝ որպես պատիժ չեն կարող նշանակվել դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անչափահասների նկատմամբ**: Հետևաբար, ստացվում է, որ անչափահասների գործերով արդարադատությանը վերաբերող միջազգային փաստաթղթերի իմաստով համայնքային աշխատանքների կիրառությունը՝ որպես պետության ֆորմալ քրեաիրավական արձագանքին այլընտրանք, ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ:

Ինչ վերաբերում է հաշտեցման գործընթացին, ապա հարկ է նկատել, որ 2016 թվականի հունիսին ուժի մեջ մտած «Պրոբացիայի մա-

սին» ՀՀ օրենքի 8-րդ գլուխը սահմանում է պրոբացիայի ծառայության գործառույթները հաշտարարության ոլորտում՝ ինչպես դատական քննության, այնպես էլ ազատագրվման հետ չկապված պատժի կրման ու հետպատժյա փուլերում: Այդուհանդերձ, դեռևս պարզ չեն հաշտեցման իրավական հիմքերը ինչպես մինչդատական, այնպես էլ դատական քննության փուլերում, բացակայում են հաշտարարություն իրականացնելու հստակ ընթացակարգերը, քրեական գործերով հաշտարարների մասնագիտական պատրաստվածության շեմն ու գործառույթների շրջանակը, ինչպես նաև տուժողների հետ հետագայում իրականացվելիք աշխատանքների բովանդակությունն ու շրջանակները: Այլ կերպ ասած, հաշտարարության ոլորտում պրոբացիոն ծառայության գործունեության վերը նշված կարգավորումներն այնքանով, որքանով հաշտարարությունը դատական քննության փուլում ինքնուրույն իրավական հիմքեր չունի Քրեական օրենսգրքում և Քրեական դատավարության օրենսգրքում, չի կարող դիտարկվել իբրև ֆորմալ արդարադատության այլընտրանք: Բացի այդ, Կոմիտեի առաջարկության տրամաբանությամբ հաշտեցման գործընթացը չի ապահովվում նաև ՀՀ քրեական օրենսգրքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով ան-

ծին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի կիրառությամբ: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը: Իսկ Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի ուժով՝ հոդվածում թվարկված կոնկրետ հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Մեջբերված կարգավորումներից ստացվում է, որ նախ, տուժողի հետ հաշտվելու գործող ընթացակարգերը կիրառելի են հանցանք կատարած բոլոր անձանց նկատմամբ՝ անկախ տարիքից և անչափահասության հանգամանքից: Բացի այդ, հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատում հնարավոր է միայն օրենքով ամրագրված քրեորեն հետապնդելի որոշակի արարքների դեպքում:

Ասվածը վկայում է, որ գործող օրենսդրությունն ամրագրում է հանցանք կատարած անձի և տուժողի հաշտեցման ընթացակարգերի վերա-

բերյալ միայն ընդհանուր կարգավորումներ՝ չնախատեսելով առանձնահատուկ հիմքեր ու պայմաններ անչափահաս իրավախախտների վերաբերյալ գործերի քննության դեպքում:

2) ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԼԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՊՐԱԿՏԻԿԱԼ

2013 թվականի ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 35 անչափահասների վերաբերյալ միջնորդություն, որոնցից դատարանը բավարարել է 31-ը¹²⁸: 2014 թվականի ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 21 անչափահասների վերաբերյալ միջնորդություն, որոնցից դատարանը բավարարել է 16-ը¹²⁹:

ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 48 միջնորդություն, որից 47-ը բավարարվել են: Նշված գործերով անչափահասների՝ կալանքի տակ պահվելու ժամկետը միջի-

128 http://armstat.am/file/article/sv_12_14a_550.pdf:

129 http://armstat.am/file/article/soc_13_52-53.pdf:

նում կազմում է 4,5 ամիս:

Հատկանշական է, որ դատարանների կողմից 2013-2017 թվականների առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում անչափահասների նկատմամբ պատիժների նշանակման մասով կայացվել են հետևյալ դատական ակտերը: Ըստ ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած վիճակագրական տվյալների՝ 2013 թվականի ընթացքում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակվել է 69-ի նկատմամբ, որոնցից 44-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2014 թվականի ընթացքում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակվել է 62-ի նկատմամբ, որոնցից 37-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2015 թվականի ընթացքում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակվել է 53-ի նկատմամբ, որոնցից 49-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2016 թվականի ընթացքում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակվել է 44-ի նկատմամբ, որոնցից 37-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: 2017 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակվել է 19-ի նկատմամբ, որոնցից 18-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

տիժը պայմանականորեն չի կիրառվել:

Վերը նշված վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս անելու հետևյալ եզրահանգումները: Առաջին, պահպանվում են դատարանների կողմից նախաքննության մարմնի ներկայացրած կալանավորման միջնորդությունների գրեթե 90% բավարարումները: Սա մի կողմից կարող է վկայել քրեական հետապնդման մարմնի այդ միջնորդության հիմնավորվածության մասին, սակայն մյուս կողմից՝ խնդրահարույց են երեխաների՝ քրեակատարողական հիմնարկում պահման ժամկետները: Երկրորդ, թեև, օրինակ, 2015-2017 թվականների ընթացքում կալանավորման մասին միջնորդությունների թիվը մեծ չէ, այդուհանդերձ, խնդրահարույց է անչափահասների համար կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հստակ չափորոշիչների բացակայությունը, այդ թվում՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կալանավորման հիմքերի գնահատման համար: Օրենսգրքի 135-րդ հոդվածին համապատասխան՝ խափանման միջոցի ընտրությունը հիմնված է անձի կողմից ապագայում որոշակի վարքագիծ դրսևորելու հնարավորության, ռիսկի գնահատման վրա: Այս առումով, խիստ կարևոր է նման ռիսկը գնահատելու հատուկ գիտելիքների (հոգեբանություն, կրիմինալոգիա,

սոցիալական աշխատանք) ու հմտությունների առկայությունը՝ հատկապես անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցում:

Անչափահասների առնչությամբ բացակայում են խափանման միջոցների հիմքերի գնահատման կոնկրետ ցուցիչներ:

Բացակայում է նաև անչափահասների կալանավորման ու խափանման այլ միջոցների վերաբերյալ հստակ ցուցիչներով միասնական վիճակագրություն: Օրինակ՝ 2013 թվականի պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ կալանավորման միջնորդություն էր ներկայացվել 35 անչափահասների նկատմամբ¹³⁰, բայց դատարանում այդ նույն թվականին մեղադրական դատավճիռ է կայացվել 69-ի նկատմամբ: Արդյունքում, հստակ պատկեր չի ձևավորվում, թե կոնկրետ ժամանակահատվածում անչափահասների նկատմամբ կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառումը ինչ տեսակարար կշիռ ունի իրականացված քրեական հետապնդումների ընդհանուր քանակի, ինչպես նաև ընտրված այլընտրանքային խափանման միջոցների համեմատությամբ: Բացի այդ, անչափահասների նկատմամբ կալանավորման ընտրության և ազատազրկ-

ման ձևով պատժի նշանակման՝ վերը նշված վիճակագրական տվյալներով հավաստվող քանակական տարբերությունը հանգեցրել է այնպիսի դատական պրակտիկայի, որ կալանքը որպես խափանման միջոց փաստորեն առավել հաճախ է կիրառվում, քան ազատազրկման ձևով պատժը:

Այդ առումով, դեռևս 2012 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Երեխաների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրով» կարևորվել է «օրենքի հետ խնդիր ունեցող» երեխաների վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացի բարելավումը՝ ընդ որում հիշատակելով, որ ներկայումս նշված տվյալներին տիրապետող պետական մարմինները տվյալներ հավաքագրելիս պետք է առաջնորդվեն միասնական ցուցիչներով՝ տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով¹³¹: Հիշյալ ռազմավարության 104-րդ կետի 6-րդ ենթակետն էլ ուղղակիորեն նախատեսում էր «տվյալների միասնական շտեմարանի ստեղծում՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ (հաշվի առնելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու թմրանյութերի և հանցավորության հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի (UNODC)

130 Տվյալները հասանելի են հետևյալ հղումով. http://armstat.am/file/article/sv_12_14a_550.pdf:

131 ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N1694-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին», կետ 95:

կողմից մշակված ցուցիչները)»:

Անչափահասների գործերով արդարադատության հստակ ցուցիչների անհրաժեշտության և անչափահասների գործերով արդարադատության բնագավառում միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացման մասին հստակ նշվել է նաև ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) գնահատողական խմբի կողմից 2010 թվականին իրականացված գնահատման առաջարկություններում: Նշված գնահատման մեջ («Հայաստանում անչափահասների գործերով արդարադատության բարեփոխումների ձեռքբերումների գնահատում»), ի թիվս այլ յոթ առաջարկությունների, նշվում է, որ «անհրաժեշտ է ձևավորել անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ ցուցիչներ և համապատասխան տվյալները հրապարակել տարեկան կտրվածքով»¹³²:

Միևնույն ժամանակ, անչափահասների նկատմամբ կալանքի սահմանափակ կիրառության պրակտիկայի ապահովումը պետք է իրականացվի ընթացակարգային երաշխիքների օրենսդրական ամրագրմամբ:

Այսպես, գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում անչափահասի նկատմամբ կալանքի որպես խափանման միջոցի կիրառության, դրա ժամկետների

երկարաձգման առանձնահատուկ կարգավորումներ: Թերևս միայն օրենսգրքի 442-րդ հոդվածն ամրագրում է, որ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է *միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում*:

Այս առումով, հարկ է նկատել, որ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի լուծումներն ամրագրում են համապատասխան օրենսդրական երաշխիքներ, որոնք կապահովեն անչափահասի նկատմամբ կալանքի բացառիկ կիրառության պրակտիկայի ձևավորման իրավական հիմքեր: Մասնավորապես, նախագիծն ամրագրում է կարևոր երաշխիքային դրույթ, համաձայն որի՝ **անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով:**

Բացի այդ, նախագծով ամրագրվել են կալանավորման դեպքում այլընտրանքային խափանման միջոցների կիրառության կամ դրա քննարկման պարտադիր պայմաններ: Մասնավորապես, անչափահաս մեղադրյալի

132 Assessment of Juvenile Justice Reform Achievements In Armenia, UNICEF Regional Office for Central and Eastern Europe/Commonwealth of Independent States January 2010, էջ 8:

նկատմամբ **կալանք կիրառելու հարցը լուծելիս յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկվի նրան դաստիարակչական հսկողության հանձնելու հնարավորությունը**: Իսկ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ կալանք կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նա խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները:

Միջազգային իրավական չափանիշների տրամաբանությանը համահունչ՝ նախագծով ամրագրվել է նաև անչափահաս մեղադրյալի նկատմամբ **կալանքը որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար կիրառելու ընդհանուր կանոնը**:

Ի տարբերություն գործող Քրեական դատավարության օրենսգրքի՝ նախագծով տարբերակված մոտեցում է ցուցաբերվել անչափահասի նկատմամբ կալանքի կիրառության առավելագույն ժամկետների սահմանման հարցում: Այսպես, նախագիծն ամրագրում է, որ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի կամ տնային կալանքի տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել մեկ ամիսը: Մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել՝

1) երկու ամիսը՝ ոչ մեծ կամ միջին

ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

2) վեց ամիսը՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում:

Առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվող անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքը բացառիկ դեպքերում կարող է երկարացվել ևս առավելագույնը երկու ամսով:

3) ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՊԱՏԺԱԽՈՒՑ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

«Պատժամիջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականի 95.3-րդ կետն արգելում է անչափահասների մեկուսացումը որպես պատժամիջոց կիրառելը: Հանձնարարականի 95.4-րդ կետը սահմանում է, որ կարգապահական նպատակներով մեկուսացումը կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ այլ պատժամիջոցների կիրառումը արդյունավետ չի լինի: Մեկուսացման համար պետք է սահմանված լինի հստակ ժամանակահատված, որը պետք է լինի հնարավորինս կարճ: Մեկուսացման ընթացքում պետք է ապահով-

վեն համապատասխան մարդկային շփում, ընթերցանության նյութերից օգտվելու հնարավորություն և առնվազն մեկ ժամ դրսում վարժանքներ կատարելու հնարավորություն՝ լավ եղանակային պայմանների առկայության դեպքում¹³³: Հանձնարարականը նախատեսում է ավելի լայն իրավունքներ անչափահասների համար, քան Եվրոպական բանտային կանոնները: Հանձնարարականն ամբողջությամբ արգելում է պատժախցում անչափահասների մեկուսացումը: Պատժախուց է համարվում այն վայրը, որը չունի տարրական սարքավորումներ, օրինակ՝ չունի մահճակալ կամ ունի միայն մեկ մահճակալ: Ամբողջությամբ արգելվում է մուօ խուցը կամ ցանկացած այլ խուց, որն ունի անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող պայմաններ¹³⁴:

Ի տարբերություն Հանձնարարականի՝ ՀՀ ներպետական օրենսդրությամբ դեռևս ամրագրված է կալանավորված և դատապարտված անչափահասների նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես տույժի միջոց կիրառելու հնարավորությունը: ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝ նկատողություն, խիստ նկատողություն, պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով:

րառվել տույժի հետևյալ միջոցները՝ նկատողություն, խիստ նկատողություն, պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝ նկատողության հայտարարում, պատժախուց տեղափոխելը մինչև տասն օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով:

4) ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում արձանագրվել են հետևյալ խնդիրները: Կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացրած այցի ժամանակ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի՝ անչափահաս դատապարտյալների համար նախատեսված մասնաշենքը

133 [https://www.unicef.org/tdad/councilofeuroperec08\(1\).pdf](https://www.unicef.org/tdad/councilofeuroperec08(1).pdf):

134 [https://www.unicef.org/tdad/councilofeuroperec08commentary\(1\).pdf](https://www.unicef.org/tdad/councilofeuroperec08commentary(1).pdf):

չի շահագործվել: Խցերում տեղադրված են եղել երկհարկանի մահճակալներ, չնայած ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 85-րդ կետի համաձայն՝ «Անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված խցերում կամ կացարաններում տեղադրվում են միահարկ մահճակալներ»: Բացի այդ, անչափահասների պահման համար նախատեսված խցերը նախկինում օգտագործվել են որպես պատժախցեր և այդտեղ դեռևս պահպանվել են պատժախցի համար նախատեսված երկաթյա մահճակալները:

Արձանագրվել են նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անչափահասների դժգոհություններն անկողնային պարագաների որակի և քանակի վերաբերյալ: Այսպես, այցի ընթացքում ազատությունից զրկված անչափահասները նշել են, որ խցերում ջերմաստիճանը ցածր է, իսկ իրենց տրամադրվում է միայն մեկ ծածկոց, լրացուցիչ ծածկոց չի տրամադրվում՝ յուրաքանչյուրի համար միայն մեկը նախատեսված լինելու պատճառաբանությամբ: Այցի ընթացքում ազատությունից զրկված անչափահասներից երկուսը չեն ունեցել սպիտակեղեն և քնել են ներքնակների վրա: Հարկ է նշել, որ օրեր անց

կատարված կրկնայցին արձանագրվել է, որ վերջիններս ապահովվել են սպիտակեղենով¹³⁵:

5) ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդրահարույց է ՀՀ քրեակատարողական համակարգի որոշ հիմնարկներում դպրոցների հարցը: Մասնավորապես, անչափահասների կրթության հետ կապված՝ Կանխարգելման ազգային մեխանիզմի ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դպրոցն այլևս չի գործում, իսկ հիմնարկում պահվող ազատությունից զրկված անչափահաս անձանցից շատերն ուսումը չեն ավարտել:

ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանման համաձայն՝ «Աբովյանի թիվ 2 հատուկ արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը իրականացրել է կրթական երկու ծրագիր՝ հանրակրթություն և մասնագիտական կրթություն, սակայն 2014-2015 ուսումնական տարվանից սկսած հանրակրթության իրականացման համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունից տեղեր չեն հատկացվել, իսկ

135 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2016 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույց, էջեր 20-21, 29. <https://bit.ly/2KVdTve>:

մասնագիտական կրթության՝ մասնավորապես համակարգիչների շահագործման համար հատկացվել է 10 տեղ: 2016-2017 ուսումնական տարվա համար ներկայացված մասնագիտական կրթության 40 տեղերի հայտը մինչ օրս մնացել է անպատասխան: Անազատության մեջ պահվող բոլոր անչափահասներն ընդգրկված են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված կավագործության, փայտի փորագրության, զարդարվեստի, առողջ ապրելակերպ և արդյունավետ հաղորդակցություն դասընթացներին:

Ըստ պարզաբանման՝ անչափահաս դատապարտյալները և կալանավորված անձինք մշտապես օգտվում են բացօթյա զբոսանքի իրենց իրավունքից, որի ընթացքում նրանց ընձեռվում է մարզվելու և ֆիզիկական զարգացման հնարավորություն:

Մինչդեռ, Կանխարգելման ազգային մեխանիզմի կողմից արձանագրվել է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անչափահաս անձանց համար նախատեսված զբոսանքի վայրերում մարմնամարզությամբ զբաղվելու համար չկան պայմաններ: Թեև հիմնարկում այդ նպատակով առանձնացված մարզասրահում առկա են մարզասարքեր,

սակայն դրանք գտնվում են անսարք վիճակում¹³⁶:

6) ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԿԱ ԵՐԵԽԱՆԵՐ

Ի գիտություն ընդունելով, որ որոշ միջոցներ ձեռնարկվել են տուժող և վկա երեխաների պաշտպանության ուղղությամբ, ինչպիսին, օրինակ, շահերի ներկայացուցիչ իրավաբանի և հոգեբանների ներկայությունն է հարցաքննության ընթացքում՝ Կոմիտեն, այնուհանդերձ, ափսոսանք է հայտնել, որ ջանքերը բավարար չեն և հավուր պատշաճի արտացոլված չեն Մասնակից պետության օրենսդրության մեջ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 54)՝

- համարժեք իրավական դրույթների և կարգավորումների միջոցով ապահովել, որ հանցագործության վկա և տուժող բոլոր երեխաներին տրամադրվի Կոնվենցիայով պահանջվող պաշտպանությունը.
- լիարժեքորեն հաշվի առնել «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների մասնակցությամբ գործերով արդարադատության վերաբերյալ» Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները (հավելվածի տեսքով կցված են Տնտեսա-

136 Տե՛ս նույն տեղում, էջ 35:

կան և սոցիալական խորհրդի թիվ 2005/20 բանաձևին):

«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի № 303 որոշման 51-րդ կետով սահմանվել է, որ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքով սահմանել անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգ, որպեսզի, մասնավորապես, բացառվի հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը (secondary victimization): Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 2005/20 բանաձևը, ի թիվս այլ ուղենիշների, սահմանում է, որ «...երեխայի նկատմամբ ճնշումներից խուսափելու նպատակով, նրա հարցաքննությունները/հարցազրույցները պետք է իրականացվեն հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից ... բոլոր գործողությունները պետք է իրականացվեն հնարավորինս երեխայակենտրոն միջավայրում՝ կահավորված այնպես, որ հնարավորինս հարգվեն երեխայի ունակությունները, տարիքը, մտավոր կարողությունները...»¹³⁷:

Վերոհիշյալ թիվ 2005/20 բանաձևի 31-րդ կետի համաձայն՝ անչափահասների ներգրավմամբ վարույթը

իր ամբողջության մեջ պետք է լինի երեխայակենտրոն, և այդ իմաստով վարույթը պետք է կազմակերպել այնպես, որ քրեական գործով քննության ընթացքում հնարավորինս նվազեցվեն արդարադատության համակարգի հետ երեխայի շփումները: Մասնավորապես, ըստ բանաձևի, անհրաժեշտ է նվազեցնել հարցաքննությունների թիվը, «սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լսումների և հարկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ ... կամ, եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով, կապահովվեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման համար մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաներին պետք է հարցաքննել (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման համար մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում: Պետք է նաև կահավորվեն առանձին դատական սպասարահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ:

137 «Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների մասնակցությամբ գործերով արդարադատության վերաբերյալ» Միավորված ազգերի կազմակերպության ուղենիշները (թիվ 2005/20 բանաձև), 13-14 կետեր:

Ապահովել, որպեսզի տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայակենտրոն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ՝ նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան-փորձագետներ նշանակելու միջոցով...»¹³⁸:

Վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «<< քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով, հաշվի առնելով անչափահաս տուժողների և վկաների՝ հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը բացառելու նպատակը՝ (secondary victimization)՝ առաջարկվում է մանկավարժի մասնակցությունը պարտադիր դարձնել մինչև տասնվեց տարեկան անչափահասների մասնակցությամբ առերեսման և ճանաչման ներկայացնելու քննչական գործողություններում: Նախագիծը նախատեսում է անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը համապատասխան որակավորում և մասնագիտական փորձ ունեցող հոգեբանի պարտադիր մասնակցությունը սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված

հանցագործությունների վերաբերյալ գործերով, անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու, հոգեկան խանգարում ունենալու դեպքերում և եթե վարույթն իրականացնող մարմինը կարծում է, որ հոգեբանի մասնակցությունը բխում է անչափահասի լավագույն շահերից: Բացի այդ, անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչին, մանկավարժին կամ հոգեբանին իրավունք է վերապահվում մինչդատական վարույթում քննիչի թույլտվությամբ հարցեր ուղղելու անչափահասին:

Նախագիծը նաև սահմանում է հոգեբանի՝ դատական քննության փուլում անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ կատարվող հարցաքննության մասնակցության հնարավորությունը: Այս փոփոխությունը ևս ուղղված է անչափահասի մասնակցությամբ դատավարական գործողությանը անչափահասի շահերին չվնասելու սկզբունքի համար լրացուցիչ երաշխիք սահմանելուն: Միաժամանակ, դատական քննության փուլում հոգեբանը նախագահողի թույլտվությամբ կարող է առարկություններ և դիտողություններ ներկայացնել հարցաքննության բնականոն ընթացքի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է մանկավարժ տրայնկտն առանձին դեպքե-

138 <http://www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf>:

րում փոխարինել հոգեբանով, քանի որ անչափահասին հոգեբանական աջակցություն ցուցաբերելն անհրաժեշտ է վերապահել այդ ոլորտում որոշակի գիտելիքներ ու փորձ ունեցող մասնագետներին, ովքեր ավելի ճիշտ և բազմակողմանի կարող են գնահատել անչափահասի հատուկ պահանջներն ու հոգեբանական առանձնահատկությունները:

Նախագծով նաև սահմանվում է անչափահասի մասնակցությամբ հարցաքննության, առերեսման և ճանաչման ներկայացնելու տեսաձայնագրման հնարավորությունը, ըստ որի նման միջոցառումներից առաջ քննիչը պարտավոր է հարցաքննությունից առաջ դրա տեսաձայնագրման վերաբերյալ լսել հարցաքննության մասնակիցների կարծիքները և որոշում կայացնել՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով անչափահասի լավագույն շահը, իսկ տեսաձայնագրման վերաբերյալ վերջիններիս կարծիքները ամրագրել արձանագրության մեջ:

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների մասնակցությամբ դատավարական ընթացակարգերի բարելավման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ մշակել է «Երեխաների մասնակցությամբ դատավարական գործընթացների պրակտիկ ուղեցույց» մասնագիտա-

կան ձեռնարկը, որտեղ արտացոլվել են տարբեր կարգավիճակ ունեցող, այդ թվում՝ նաև տուժող և վկա երեխաների հետ կապված վարվելակերպի միջազգային փորձը, ինչպես նաև պրակտիկ խորհուրդներ, այդ թվում՝ հոգեբանական:

2017 թվականին հուլիսին մեկնարկել է «Անչափահասների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում» հեռաուսուցման ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է Արդարադատության ակադեմիայի հեռաուսուցման և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ: Ծրագրի նպատակն է դատավորներին և դատախազներին ծանոթացնել ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև անչափահասների գործերով արդարադատության համակարգերին և հիմնարար սկզբունքներին: Դասընթացի միջոցով կներկայացվեն իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների սոցիալական վերականգնման հնարավորությունները, անչափահաս տուժողների և վկաների պաշտպանության ընթացակարգերը:

Հարկ է նկատել, որ անչափահաս վկաների և տուժողների իրավունքների երաշխավորման ուղղությամբ ձեռնարկվող օրենսդրական փոփոխությունները թեև ամրագրում են հա-

մապատասխան ընթացակարգային երաշխիքներ, այդուհանդերձ, խնդրի լուծումը պետք է տրվի ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլև կազմակերպական, նյութատեխնիկական ապահովվածության միջոցով: Մասնավորապես, անհրաժեշտ է գործնական միջոցներ ձեռնարկել ապահովելու վարույթն իրականացնող մարմին՝ քրեական վարույթի շրջանակներում անչափահաս տուժողի կամ վկայի հետ անմիջական շփման միջազգային պահանջներին համապատասխան հմտություններ՝ շարունակական վերապատրաստումների և դասընթացների կազմակերպմամբ: Բացի այդ, պետք է լուծվեն տուժող և վկա անչափահասների ցուցմունքների տեսաձայնագրման, մինչդաստական և դատական քննության փուլերում անչափահասների համար կահավորված անհրաժեշտ սենյակների, տարածքների ապահովման հետ կապված հարցերը:

ԱՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քրեական դատավարության օրենսգրքով և անհրաժեշտ այլ իրավական ակտերով նախատեսել անչափահասների գործերով արդարադատության գործուն մեխանիզմներ՝ ապահովելով անչափահասների մասնակցությամբ քրեական գործերի արտադատական լուծման միջոցներ (diversion),

քրեական գործերի քննության, դրանց կարճման նոր հիմքեր ու ընթացակարգեր (օրինակ՝ հետաքննիչի, քննիչի կամ դատախազի նախաձեռնությամբ նյութերը մերժելու կամ գործը կարճելու լիազորությունների տրամադրում և այլն)՝ միաժամանակ զերծ պահելով անչափահասներին քրեական արդարադատության ողջ «խողովակով անցնելու» անհրաժեշտությունից:

- Անչափահասների գործերով արդարադատության համակարգի իրավակարգավորումներին զուգահեռ՝ ապահովել վերականգնողական արդարադատության բաղադրիչների ներմուծումը իրավակիրառ պրակտիկա, հատկապես երբ անչափահասի վերաբերյալ վարույթը տարիքով և այլ առանձնահատկություններով ու հիմքերով կարճվում է դեռևս հետաքննության կամ նախաքննության փուլերում (օրինակ՝ տուժողին և համայնքին անչափահասի կողմից խորհանշական փոխհատուցման գործողություններ, անչափահաս իրավախախտի հետ սոցիալական, հոգեբանական, մասնագիտական վերապատրաստումների և այլ վերականգնողական ծրագրերի իրականացում և այլն):
- Անչափահաս իրավախախտների հետ վերականգնողական ծրագրերի ներդրում համայնքում, պա-

տասխանատու մարմինների ու կազմակերպությունների հաստատում ու վերջիններիս լիազորությունների կարգավորում:

- Անհրաժեշտ է ստեղծել անչափահասների գործերով հաշտեցման (մեդիացիայի) ինստիտուտ:
- Անհրաժեշտ է սահմանել անչափահասների գործերով խափանման միջոց կալանավորման կիրառության միասնական չափորոշիչներ՝ կարևորելով անչափահասի՝ համայնքում հնարավոր վտանգավորության և կրկին անգամ հանցանք կատարելու ռիսկի գնահատման գործոնները:
- Անհրաժեշտ է վերանայել օրենքի հետ առնչություն ունեցող երեխաների վերաբերյալ դատավարական և ընթացակարգային օրենսդրությունը՝ խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցների մատչելիության տեսանկյունից, առանց որի երեխայի իրավունքների իրականացումը հաճախ դառնում է անհնար:
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը /Նախագիծը/ պետք է համապատասխանեցվի 2005/20 բանաձևի պահանջներին և դրանց հիման վրա մշակված մոդելային

օրենքի և մեկնաբանությունների ոգուն

- Անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել ազատությունից զրկված անչափահասի նկատմամբ պատժախուց տեղափոխելը՝ որպես կարգապահական տույժ կիրառելու արգելք:
- Անհրաժեշտ է սահմանել անչափահասների հանցավորության վիճակագրական հստակ ցուցիչներ ու չափանիշներ՝ ապահովելով այդ վիճակագրությունը ստեղծող ու հավաքագրող կառույցների գործառությանին տարանջատումը և նրանց շարունակական վերապատրաստումը:
- Մշակել և հաստատել անչափահասների հանցավորության նվազման, կանխարգելման վերաբերյալ ռազմավարական ծրագիր՝ ներառելով ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կառույցների ներուժը:
- Անհրաժեշտ է դիտարկել Հայաստանում երեխայի տան /Barnahus/ ստեղծման հնարավորությունը՝ որպես երեխայի երկրորդային զուգացման կանխարգելմանն ուղղված կարևորագույն մեխանիզմ:

Ը. ՄԱՆԿԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈՌՆԱԳՐԱՖԻԱՅԻ ՄԱՍԻՆ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(ՀՈԴԿԱԾՆԵՐ 3, 4, ԿԵՏ 2, 3; 5; 6 ԵՎ 7)

1. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱ- ՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱ- ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱ- ՔԱԳՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արձանագրության վերաբերյալ Ամփոփիչ դիտարկումներում¹³⁹ Կոմիտեն նշել է, որ թեև ՀՀ-ն արձանագրության բազմաթիվ դրույթներ ներառել է Քրեական օրենսգրքում, դրանք հիմնականում սահմանված են թրաֆիքինգի ներքո, այլ ոչ թե ինքնուրույն բովանդակությամբ, մինչդեռ մանկավաճառության և թրաֆիքինգի հանցակազմերը նույնական չեն, և այդ առումով Կոմիտեն առաջարկում է մանկավաճառությունը սահմանել ինքնուրույն բովանդակությամբ:

Կոմիտեն առաջարկել է (կետ 9)¹

- մանկավաճառության հանցակազմը սահմանել թրաֆիքինգի

բովանդակությունից դուրս և այնպիսի բովանդակությամբ, ինչպիսին նշված է Արձանագրության 2-րդ հոդվածում, այսինքն հետևյալ կերպ՝

«Երեխաների վաճառքը՝ ցանկացած եղանակով երեխային առաջարկելը, տեղափոխելը կամ ընդունելը՝ սեռական շահագործման, շահույթի նպատակով երեխայի օրգանների տեղափոխման, և երեխային հարկադիր աշխատանքի ներգրավման նպատակով».

- վերանայել Քրեական օրենսգրքը և ներմուծել Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված արարքները Քրեական օրենսգրքում՝ որպես քրեորեն հետապնդելի արարքներ.
- ստեղծել Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման միասնական համակարգ:

139 <https://bit.ly/2xd229K>

1) ՄԱՆԿԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

ՀՀ քրեական օրենսգրքում մանկավաճառության հանցակազմը սահմանված չէ այն բովանդակությամբ, որն առաջարկում է Կոմիտեն: ՀՀ քրեական օրենսգրքը մանկավաճառությունը սահմանում է 168-րդ հոդվածով՝ խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը: Մանկավաճառությունը սահմանված է նաև Քրեական օրենսգրքի 132²-րդ հոդվածով՝ երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգի կամ շահագործման հանցակազմի շրջանակներում՝ 132-րդ հոդվածի 4-րդ մասում «շահագործման» բնորոշման հաշվառմամբ: Այս հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները ևս ամբողջությամբ չեն համապատասխանում Արձանագրության 3-րդ հոդվածի 1-ին մասի կետով սահմանված հատկանիշներին: Մասնավորապես, Արձանագրությամբ առաջարկվում է մանկավաճառության հանցակազմում ներառել **երեխայի սեռական շահագործման, վարձատրության դիմաց երեխայի օրգանների հանձնման և հարկադիր աշխատանքներում երե-**

խայի օգտագործման նպատակներով երեխա առաջարկելը, փոխանցելը կամ ստանալը: Մինչդեռ, Քրեական օրենսգրքի 132²-րդ և 168-րդ հոդվածները չեն սահմանում *երեխա առաջարկելը*՝ որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ: Բացի այդ, մանկավաճառությունը, բացի խնամքի նպատակով, սահմանված է երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման հանցակազմի բովանդակությամբ, ինչը նեղացնում է Կոնվենցիոն ձևակերպմամբ մանկավաճառության մեջ ընդգրկվող արարքների շրջանակը՝ այդպիսով դրանք դուրս թողնելով քրեաիրավական ներգործության ոլորտից: Բանն այն է, որ ըստ գործող օրենսդրության՝ շահագործման նպատակով մանկավաճառությունը՝ իբրև քրեորեն հետապնդելի արարք, կարող է դրսևորվել երեխաներին հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու, շահագործելու կամ շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու երկրնտրելի գործողություններով, որոնք ժամանակային և բովանդակային առումներով չեն համընկնում երեխա առաջարկելու գործողությանը: Ստացվում է, որ գործող օրենսդրական կարգավորման պայմաններում երեխային առաջարկելը կարող է առավելագույնս դիտարկվել իբրև նախապատրաստության կամ փորձի փուլում գտնվող չավարտված հանցագործություն՝ ավարտված հան-

ցագործության համեմատությամբ առավել մեղմ պատժի հանգեցնելով:

Հանրային քննարկման ներկայացված Նոր քրեական օրենսգրքի նախագծի¹⁴⁰ լուծումները ևս չեն փարատում Կոմիտեի մտահոգություններն այն առումով, որ մանկավաճառության հանցակազմը նախատեսված է թրաֆիքինգի հանցակազմի, ինչպես նաև 227-րդ հոդվածով ամրագրված երեխայի առքի և վաճառքի շրջանակներում՝ թերևս այն տարբերությամբ, որ վերջինս որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ որևէ նպատակ չի մատնանշում: Նախատեսվող փոփոխություններն այնքանով, որքանով քրեականացվում է երեխայի առքն ու վաճառքը՝ անկախ դրա նպատակից, մասնակիորեն ապահովում են Կոմիտեի առաջարկությունները: Այդուհանդերձ, ո՛չ գործող Քրեական օրենսգրքը, ո՛չ Նոր քրեական օրենսգրքի նախագիծը չեն ամրագրում Արձանագրության 3-րդ հոդվածով նկարագրված բոլոր արարքները:

Հաշվի առնելով վերը նշվածը, գտնում ենք, որ **Կոմիտեի առաջարկությունը չի կատարվել, սակայն Նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ Կոմիտեի առաջարկը մասնակիորեն լուծում կատանա:**

2) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՎԱՔԱՔՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Կոմիտեն նաև մտահոգություն է հայտնել, որ Արձանագրությամբ սահմանված ստորև նշված արարքները սահմանված չեն Քրեական օրենսգրքում որպես քրեորեն հետապնդելի արարքներ և առաջարկել է դրանք քրեականացնել հետևյալ բովանդակությամբ՝

- 1) Երեխաների վաճառքը՝ որպես միջնորդ որդեգրման համաձայնությանը ոչ պատշաճ եղանակով հակելով՝ ի խախտումն որդեգրման վերաբերյալ միջազգային իրավական գործիքների:
- 2) Պոռնկությանը ներգրավելու նպատակով երեխային առաջարկելը, ձեռք բերելը, գնելը կամ տրամադրելը:
- 3) Մանկական պոռնոգրաֆիա ներմուծելը, արտահանելը, առաջարկելը կամ տիրապետելը:
- 4) Վերը նշված ցանկացած գործողության կատարման փորձը և նշված գործողություններին մասնակցելը կամ հանցակցությունը:

Առաջին կետով սահմանված հանցակազմը արտահայտված է Քրեա-

140 <https://www.e-draft.am/projects/496/about>:

կան օրենսգրքի 169-րդ հոդվածում (որդեգրման համաձայնություն տալուն հակելը կամ հարկադրելը շահադիտական նպատակով), ու թեև հոդվածը հստակորեն չի սահմանում որդեգրման համաձայնության տալուն հակելը երեխայի վաճառքի բովանդակությամբ, սակայն «շահադիտական նպատակ» կարող է մեկնաբանվել երեխայի վաճառքի իմաստով:

Այնուհետև, Քրեական օրենսգրքի 132²-րդ հոդվածը սահմանում է երեխայի պոռնկության շահագործումը կամ այդ նպատակով երեխայի հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, կամ պոռնկության շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ այսինքն թրաֆիքինգի բովանդակությամբ: Իսկ օրենսգրքի 166-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային *պոռնկության* կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն *ներգրավելու համար, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները*: Այսինքն՝ սույն հանցակազմի իմաստով քրեորեն պատժելի է երեխային պոռնկության մեջ ներգրավելը, որը, սակայն, չի ընդգրկում այդ նպատակով երեխային առաջարկելու, ձեռք բերելու, գնելու կամ տրամադրելու

արարքները: Հետևաբար, **Կոմիտեի առաջարկությունը չի կատարվել:**

Կոմիտեի երրորդ առաջարկի հետ կապված՝ Քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելու, գովազդելու, իրացնելու, պատրաստելու հանցակազմերը, իսկ երկրորդ մասը՝ համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելը կամ համակարգչում մանկական պոռնոգրաֆիա պահելը ու պահպանելը: Մանկական պոռնոգրաֆիա *ներմուծելու և արտահանելու* գործողությունները՝ որպես քրեորեն հետապնդելի արարքներ, օրենսգրքում **սահմանված չեն**, իսկ առաջարկելու կամ տիրապետելու՝ Արձանագրության ձևակերպմամբ արարքները թերևս ներառվում են քննարկվող հոդվածում գործածվող՝ մանկական պոռնոգրաֆիան «ներկայացնելու» կամ «համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում պահպանելու» ձևակերպումների մեկնաբանության միջոցով: Նոր քրեական օրենսգրքի նախագիծը սահմանում է այնպիսի լուծում, ինչպիսին առաջարկում է Արձանագրությունը՝ ըստ վերը նշված երրորդ կետի: Մասնավորապես, ըստ նախագծի 284-րդ հոդվածի 2-րդ կետի՝ քրեորեն հետապնդելի արարքներ են՝ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելը, ար-

տադրելը, տարածելը, իրացնելը, *ար-
տահանելը, ներմուծելը*, առաջարկե-
լը, գովազդելը կամ համակարգչային
համակարգում կամ համակարգչային
տվյալների պահպանման համակար-
գում կամ ցանկացած այլ եղանակով
մանկական պոռնոգրաֆիա պահպա-
նելը: Ասվածը նշանակում է, որ Կո-
միտեի՝ երրորդ կետով սահմանված
առաջարկությունը **թեև մինչև այժմ
չի կատարվել**, սակայն Նոր քրեա-
կան օրենսգրքի ընդունմամբ այդ
առաջարկության կատարումը **լուծ-
ված կհամարվի**:

Չորրորդ կետով սահմանված
առաջարկի հետ կապված՝ հարկ է
նկատել, որ Քրեական օրենսգրքի
**հատուկ մասում նշված արարքնե-
րի քրեականացման դեպքում** Քրե-
ական օրենսգրքի ընդհանուր մասի՝
չավարտված հանցագործության և
հանցակցության ինստիտուտները
կանոնակարգող դրույթներն ինքնա-
բերաբար կդառնան կիրառելի:

Ինչ վերաբերում է Արձանագ-
րության 3-րդ կետով սահմանված
հանցագործությունների տվյալների
հավաքագրման միասնական հա-
մակարգ ստեղծելուն, ապա այդպի-
սի համակարգ ներկայում **գոյություն
չունի**: Տվյալները հավաքագրվում են
թրաֆիքինգի վերաբերյալ ստեղծված
տվյալների հավաքագրման համա-
կարգի կողմից: 2015 թվականին ուժի
մեջ է մտել «Մարդկանց թրաֆիքինգի
և շահագործման ենթարկված ան-

ձանց նույնացման և աջակցության
մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է
թրաֆիքինգի զոհերի, այդ թվում՝ ան-
չափահաս զոհերի պաշտպանության
երաշխիքները, նրանց տրամադրվող
աջակցության տեսակները, կարգը և
չափերը, ինչպես նաև նրանց վերա-
բերյալ տվյալների հավաքագրման,
կուտակման, վարման, փոխանակ-
ման կարգը, այդ տեղեկություննե-
րի հիման վրա զոհի, այդ թվում նաև
անչափահաս զոհի նույնականացման
կարգը: Տվյալների համակարգումը
կատարում է թրաֆիքինգի և շահա-
գործման դեմ պայքարի հարցերով
ստեղծված խորհուրդը:

Հարկ է նկատել, որ Արձանագ-
րությամբ նախատեսված վերոնշյալ
հանցագործությունների վերաբերյալ
տվյալների վարման համակարգի
ստեղծումը հնարավոր է դրա քրեաի-
րավական հիմքի ամրագրման, այ-
սինքն՝ Քրեական օրենսգրքում այդ
արարքների ներառման և ըստ առան-
ձին հոդվածների վիճակագրության
վարման միջոցով: Հետևաբար, **Կո-
միտեի այդ առաջարկը նույնպես չի
կատարվել**:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քրեական օրենսգրքում մանկա-
վաճառության հանցակազմը ան-
հրաժեշտ է սահմանել ինքնուրույն
բովանդակությամբ՝ թրաֆիքինգի
հանցակազմից առանձին:

- Քրեական օրենսգրքում պետք է ամրագրվի նաև Արձանագրությանը տրված մանկավաճառության բնորոշման բոլոր դրսևորումները՝ մասնավորապես քրեականացնելով երեխա առաջարկելը:
- Մանկական պոռնոգրաֆիայի նպատակով երեխա առաջարկելը, ստանալը, փոխանցելն ու տրամադրելը պետք է քրեականացվեն. թե՛ գործող օրենսգրքով, թե՛ Նոր քրեական օրենսգրքի նախագծով դրանք լիարժեք ներառված չեն: Մանկական պոռնոգրաֆիայի արտահանումն ու ներմուծումը գործող օրենսդրական ձևակերպմամբ ներառված չեն: Նոր քրեական օրենսգրքի նախագծի ընդունմամբ այն ուղղակի ամրագրում կստանա:

2. ԱՐՏԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ

Արձանագրությամբ նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ արտատարածքային իրավազորություն կիրառելու և նրանց հանձնելու առնչությամբ Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը հանձնման բոլոր դեպքերում նախատեսում է երկակի հանցավորության պահանջը (այսինքն, անձին հանձնելը կատարվում է միայն այնպիսի արարքների

համար, որոնք քրեորեն պատժելի արարքներ են և՛ ՀՀ-ում, և՛ հանձնման խնդրանքն ուղարկած օտարերկրյա պետությունում):

Կոմիտեն առաջարկել է (կետ 25)՝

- քայլեր ձեռնարկել, որ երկակի հանցավորության պահանջը չկիրառվի ՀՀ տարածքից դուրս կատարված այն հանցագործությունների համար հանձնման դեպքերում, որոնք ամրագրված են սույն արձանագրությամբ:

ՀՀ քրեական օրենսգիրքն ամրագրում է ՀՀ արտատարածքային իրավազորության երեք սկզբունքներ՝ քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ: Օրենսգրքի 15-րդ հոդվածի կարգավորումների ուսումնասիրությունից բխում է, որ կրկնակի հանցավորության պահանջը նախատեսված է հոդվածի 1-ին մասում ամրագրված քաղաքացիության սկզբունքի կիրառության դեպքում, երբ հանցանքը կատարվում է ՀՀ տարածքից դուրս ՀՀ քաղաքացու կամ Հայաստանում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի կողմից: Միևնույն ժամանակ, օրենսդիրը որոշ հանցագործությունների (օրինակ՝ կոռուպցիոն, խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված որոշ հանցագործություններ) դեպքում բացառություն է սահմանել ՀՀ քրեական իրավազորության կիրառման կրկնակի հանցավորության պահանջից: Մինչդեռ, այդպիսի բացառություն

նախատեսված չէ Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների դեպքում:

Սրա հետ կապված, Նոր քրեական օրենսգրքի նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում՝ քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, ապաստան ստացած կամ փախստականի կարգավիճակով բնակվող անձանց **քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք դիտվելուց:** Ստացվում է, որ նախագծի լուծումների պարագայում քրեական օրենքի գործողության քաղաքացիության սկզբունքն առհասարակ չի ամրագրում կրկնակի հանցավորության պահանջ: Այդուհանդերձ, **գործող օրենսդրական կարգավորման պայմաններում Կոմիտեի այս առաջարկը դեռևս մնում է չլուծված:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Անհրաժեշտ է Քրեական օրենսգրքում վերացնել երկակի հանցավորության պայմանը Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների առնչությամբ: Միաժամանակ, Կոմիտեի այս առաջարկը կարող է համարվել լիարժեք կատարված Արձանագրությամբ ամրագրված բոլոր արարքների քրեականացման օրենսդրական համալիր փոփոխության արդյունքում:

3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կոմիտեն եզրահանգել է, որ թեև Ոստիկանությունը սույն արձանագրության կիրառության համակարգման համար պատասխանատու մարմինն է, այդուհանդերձ, Ոստիկանությունը չունի իրավասություն հետագա քաղաքականության մշակման, մոնիթորինգի, ինչպես նաև Արձանագրությամբ սահմանված գործողությունների մշտադիտարկման ու գնահատման հարցերում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 13)՝

- ստեղծել մի մարմին, որը ոչ միայն կլինի գործադիր, այլ նաև պատասխանատու կլինի պարբերաբար մոնիթորինգ իրականացնելու և գործողությունների գնահատում անելու համար, որպեսզի

գնահատման արդյունքները օգտագործվեն արձանագրությամբ սահմանված բոլոր ոլորտների վերաբերյալ հետագա ռազմավարություն և քաղաքականություն մշակելու համար:

ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կազմում գործում է մասնագիտացված ստորաբաժանում՝ թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը, որը, համաձայն ՀՀ ոստիկանության պետի 2013 թվականի մարտի 22-ի թիվ 890-Ա հրամանի համակարգում է ոստիկանության ստորաբաժանումների կողմից մարդու թրաֆիքինգի և շահագործման, ինչպես նաև հարակից հանցագործությունների (երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը, շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, պոռնկությամբ զբաղվելուն նպատակով, պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելը) դեմ պայքարը:

Համակարգման գործառույթներ ունեցող միասնական գործադիր մարմին ստեղծելու Կոմիտեի առաջարկի հետ կապված՝ հարկ է նկատել, որ

ըստ Ոստիկանության պաշտոնական պարզաբանման՝ այդպիսի հարց Ոստիկանությունում քննարկման առարկա չի դարձել:

4. ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄ

Կոմիտեն գտել է, որ Արձանագրության մասին հանրային իրազեկման ուղղությամբ բավարար միջոցներ չեն կիրառվել: Ջանքերը սահմանափակվել են միայն թրաֆիքինգի և անչափահասների մարմնավաճառության թեմաներով: Մինչդեռ, Արձանագրությամբ սահմանված այլ հանցագործությունների մասին իրազեկում բավարար չափով չի արվել՝ հատկապես արձանագրությունը կիրառող մարմինների, ինչպես նաև լայն հանրության և երեխաների շրջանում:

Կոմիտեն առաջարկել է (կետ 15)՝

- Արձանագրության մասին լայն հանրային իրազեկում իրականացնել՝ մշակելով երկարաժամկետ կրթական և իրազեկման ծրագրեր, այդ թվում՝ քարոզարշավներ՝ կանխարգելման և Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների վսասակար հետևանքների մասին:

Հանրակրթական ուսումնական ծրագրերն առայժմ չեն վերանայվել: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ գոր-

ծընթացը նախատեսվում է իրականացնել ազգային կրթակարգի հաստատումից հետո: Այդուհանդերձ, ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Իրավական համաուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգը», որում նախատեսված է մինչև 2018 թվականի ավարտը լրամշակել և արդիականացնել կրթական ծրագրերն ու չափորոշիչները: Այս ծրագրերում կընդգրկվեն նաև Արձանագրության վերաբերյալ որոշ դրույթներ՝ ինտերակտիվ դասընթացների տեսքով: Սակայն, դեռևս ուղղակիորեն Արձանագրության վերաբերյալ կոնկրետ դասընթացներ նախատեսված չեն:

Արձանագրության վերաբերյալ սոցիալական հոլովակների և այլաբնույթ տեղեկատվությամբ աշխատում է նաև «Աուդիովիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը¹⁴¹, որը նաև ունի պետական ֆինանսավորում՝ հենց այս ուղղությամբ: Այդուհանդերձ, դեռևս գործողությունները պետք է շարունակել առավել լայնամասշտաբ դարձնելու ուղղությամբ:

5. ԿԻՐԱՌՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կոմիտեն գտել է, որ պետությունը չունի մեխանիզմներ հայտնաբերելու, նույնականացնելու և մշտադիտարկելու այն երեխաներին, ովքեր գտնվում են արձանագրությամբ սահմանված հանցագործությունների զոհ հանդիսանալու վտանգի տակ: Նաև, պետությունը չունի ծրագիր հատկապես թիրախավորելու համար աղքատության մեջ ապրող, չուղեկցված և խնամքի հաստատությունները հրաժեշտ տված երեխաներին, ինչպես նաև եզրիների համայնքի աղջիկներին, ովքեր հաճախ ենթարկվում են վաղաժամ ամուսնության:

Կոմիտեն առաջարկել է (կետ 17)՝

- ստեղծել մեխանիզմներ նույնականացնելու, հայտնաբերելու և մշտադիտարկելու խոցելի վիճակում գտնվող երեխաներին, որոնք գտնվում են արձանագրությամբ սահմանված հանցագործությունների զոհ դառնալու վտանգի տակ, ինչպես նաև ստեղծել հատուկ ծրագրեր՝ թիրախավորելու համար աղքատության մեջ ապրող, չուղեկցված և խնամքի հաստատություններից դուրս եկած երեխաներին, ինչպես նաև եզրի համայնքի

141 <http://antitrafficking.am/>

աղջիկներին.

- Կոմիտեն առաջարկել է նաև վերանայել գործող համակարգն այն առումով, որ այդպիսի երեխաներին այցելություններն ու մշտադիտարկումն իրականացվեն ոչ միայն Ոստիկանության, այլև հատուկ պատրաստված սոցիալական աշխատողների կողմից:

Արձանագրությամբ նշված թիրախային խմբին պատկանող երեխաների հայտնաբերման, նույնականացման ու մշտադիտարկման համար գործուն քայլեր դեռևս չեն իրականացվել: Մասնավորապես, համայնքում ապրող բոլոր ընտանիքների ու երեխաների համար նախատեսված է մեկ ընդհանուր կարգ՝ ուղղված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նույնականացմանն ու աջակցություն ցուցաբերելուն: Ավելին, թե՛ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ և թե՛ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում չեն նախատեսվել հստակ ուղղություններ՝ քննարկվող հանցագործությունների հնարավոր զոհ դառնալու վտանգի տակ գտնվող երեխաների բացահայտման ու նույնականացման մեխանիզմների ներդրման վերաբերյալ:

Բանն այն է, որ «Սոցիալական աջակցության մասին» օրենքով նախատեսված կառուցակարգերն ար-

դյունավետ չեն այն առումով, որ դրանց հասցեատերերն օրենքի բնորոշմամբ բռնության, թրաֆիքինգի, դաժան վերաբերմունքի «ենթադրյալ» զոհ դարձած երեխաներն են: Այլ կերպ ասած, նշված օրենքի երաշխիքներն ու աջակցության տրամադրման հետ կապված կարգավորումները չեն տարածվում Կոմիտեի մատնանշած՝ խնդրո առարկա հանցագործությունների զոհ դառնալու վտանգի տակ գտնվող երեխաների նկատմամբ:

Ինչ վերաբերում է հանրային քննարկման ներկայացված «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի նախագծի լուծումներին, հարկ է նկատել, որ դրանով ընդլայնվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հասկացությունների բովանդակությունը, կարգավորվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սկզբնական, տարածքային և կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները: Այդուհանդերձ, գործող օրենսդրական կարգավորումները չեն ապահովում Կոմիտեի առաջարկության կատարմանն ուղղված լիարժեք կառուցակարգեր: Հետևաբար, **Կոմիտեի առաջարկությունը չի կատարվել:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Օրենսդրորեն ամրագրել Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների զոհ դառնալու վտանգի տակ գտնվող երեխաների նույնականացման, հայտնաբերման և մշտադիտարկման, վերջիններիս սոցիալական աջակցության ապահովման կառուցակարգեր:

6. ԵՐԵՒԱ ՁՈՎԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒ- ԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Կոմիտեն գտել է, որ որոշ դեպքերում հանցագործությունից տուժած կամ վկա երեխաներին չեն տրամադրվել պատշաճ պաշտպանություն դատավարությունների ընթացքում, և որ մարմնավաճառության մեջ ներգրավված երեխաները ենթարկվել են վարչական տույժերի:

Կոմիտեն առաջարկել է (կետ 27)՝

- Պարտադիր դարձնել հատուկ պաշտպանության միջոցների կիրառումը քրեական դատավարությունում մինչև 18 տարեկան բոլոր անչափահաս զոհերի և վկաների նկատմամբ:

Գործող քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլուխը վերաբերում է քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող անձանց

պաշտպանությանը: Օրենսգրքի 98-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Քրեական վարույթն իրականացնող մարմինը, հայտնաբերելով, որ պաշտպանվող անձը պաշտպանության կարիք ունի, այդ անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ որոշում է կայացնում պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, որը ենթակա է անհապաղ կատարման:

«Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի լուծումները գործող կարգավորման նման չեն ամրագրում այդպիսի միջոցներ կիրառելու պարտադիր պահանջ՝ վկայի կամ տուժողի անչափահաս լինելով պայմանավորված: Այսպես, Նախագծի 9-րդ գլուխը վերաբերում է քրեական վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությունը: Նախագծով ամրագրված է, որ քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին սպառնում է իրական վտանգ: Նախագծի համաձայն՝ կիրառվող հատուկ պաշտպանության միջոցը պետք է համաչափ լինի պաշտպանվող անձին սպառնացող վտանգի բնույթին և հնարավոր հետևանքներին: Անհրաժեշտության դեպքում նույն անձի նկատմամբ կարող են կիրառվել հատուկ պաշտպանության մեկից ավելի

միջոցներ:

Ստացվում է, որ թե՛ գործող Քրեական դատավարության օրենսգրքի, թե՛ Նախագծի կարգավորումներով Կոմիտեի առաջարկությունն օրենսդրական ամրագրում չի ստացել: Այսպիսով, **Կոմիտեի վերը նշված առաջարկությունը չի կատարվել:**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել, որ քրեական դատավարությանը մասնակցող անչափահաս անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոցների կիրառությունը պարտադիր է՝ վարույթն իրականացնող մարմնի համապատասխան պարտականության ամրագրմամբ:

7. ԶՈՒՅՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Կոմիտեն եզրահանգել է, որ սոցիալական վերաինտեգրումը և օգնությունը իրականացվում են հիմնականում հասարակական կազմակերպությունների կողմից, և փոքր օգնություն է տրամադրվում Ոստիկանության ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Կոմիտեն առաջարկել է (կետ 29)՝

- կիրառել բոլոր հնարավոր միջոցները ապահովելու համար, որ Արձանագրությամբ սահմանված հանցագործությունների անչափահաս զոհերը ստանան պատշաճ օգնություն, այդ թվում՝ ֆիզիկական և հոգեբանական վերականգնում, և ամբողջական սոցիալական վերաինտեգրում՝ վերականգնողական ծրագրերի կիրառմամբ:

2015 թվականին ուժի մեջ է մտել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է թրաֆիքինգի զոհերի, այդ թվում՝ անչափահաս զոհերի պաշտպանության երաշխիքները, նրանց տրամադրվող աջակցության տեսակները, կարգը և չափերը: Օրենքը սահմանում է, որ զոհերի, այդ թվում՝ անչափահաս զոհերի աջակցությունը նպատակաուղղված է կյանքի բնականոն ընթացքից մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելու հետևանքով առաջացած շեղումների վերացմանը, հասարակությանը լիարժեք սոցիալական վերաինտեգրմանը: Զոհերի, այդ թվում՝ անչափահաս զոհերի աջակցությունը կարող է ներառել՝ 1) կացարանի տրամադրում, 2) բնափրային օգնություն, 3) անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում, 4) բժշկական օգնություն և սպասարկում, 5) հոգեբանական օգնություն, 6) խորհրդատվական օգնու-

թյուն, 7) իրավաբանական օգնություն և բազմաթիվ այլ միջոցներ:

Թրաֆիքինգի կամ շահագործման երեխա զոհերը մինչև աջակցության դադարեցումն ապահովվում են հիմնական կրթությամբ: Այդ կրթությունը, ըստ նպատակահարմարության, կարող է մատուցվել ինչպես մասնավոր դասընթացների, այնպես էլ հանրակրթական կամ հատուկ դպրոցներում աշակերտելու միջոցով: Օրենքով սահմանված է նաև, որ երեխա զոհերի աջակցության հասանելիությունը ապահովվում է մինչև նրանց չափահասության տարիքի հասնելը: Ոստիկանության կողմից հայտնաբերված բռնության զոհեր հանդիսացող անչափահասներն անհրաժեշտության դեպքում ուղղորդվում են ՀՕՖ-ի երեխաների աջակցման կենտրոն, ուր գործող բազմամասնագիտական խորհրդի կողմից (հոգեբան, ոստիկան, մանկավարժ, սոցիալական աշխատող) անչափահասներին ցուցաբերվում է անհրաժեշտ ինչպես բժշկական, այնպես էլ բարոյահոգեբանական և սոցիալական օգնություն: Անչափահասներն անհրաժեշտու-

թյան դեպքում ուղղորդվում են նաև ներկայումս ՀՀ-ում գործող համայնքային վերականգնողական կենտրոններ, որտեղ ևս անչափահասի վիճակի գնահատումից հետո նրան ցուցաբերվում է հոգեբանական, մանկավարժական կամ այլ անհրաժեշտ օգնություն: Բացի այդ, անչափահասներին թրաֆիքինգի և շահագործման ենթարկելու դիսկերը նվազեցնելու, նրանց մուրացկանության կամ մարմնավաճառության մեջ ներգրավելու դեպքերը նախականիսելու նպատակով ոստիկանության ծառայողների կողմից պարբերաբար անց են կացվում համապատասխան միջոցառումներ, այդ թվում նաև ստուգայց շրջագայություններ, դպրոցներում կազմակերպվում են հանդիպումներ, զրույցներ, որոնց ընթացքում անչափահասների հետ իրականացվում են կանխարգելիչ աշխատանքներ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ **Կոմիտեի առաջարկության ուղղությամբ կատարվում են շարունակական քայլեր, որոնք կարելի է համարել բավարար:**



© UNICEF Armenia/2018/Sokhin

**Թ. ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ՝ ԶԻՆՎԱԾ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՄԸՆՏԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվենցիային կից՝ Ձինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտրի արձանագրությունը 2005թ. մարտի 21-ին, որը մտել է ուժի մեջ 2005 թվականի հոկտեմբերի 30-ին:

1. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ՝

- դպրոցական ծրագրերում 8-րդ դասարանի աշակերտների համար (14 տարեկան և բարձր) ներառված է «Քաղաքացիական պաշտպանություն» առարկա, որի շրջանակներում ներառված է հրազենով ուսուցում.
- «Փոքր Միեր» ռազմական համալիրի կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս ընդունել 14 տարեկան երեխաներին, ինչպես նաև ներառում է հրազենով ուսուցում.
- Մոնթե Մելքոնյանի ռազմական դպրոցը, որն ընդունում է 16 տարեկան երեխաներ, որոնցից շատերը սոցիալապես անապահով ընտանիքներից են կամ խնամքի հաստատություններից, անցկացնում է հրազենի կիրառման կամ մարտարվեստի օգտագործման պարտադիր դասընթացներ: Կոմիտեն առաջարկել է (կետ 11)՝
- հանրակրթական դպրոցների ու-

սումնական ծրագրերից բացառել զինվորական դասընթացները.

- միջոցներ ձեռնարկել, որ ռազմական դպրոցներում արգելվեն 18 տարեկանից ցածր երեխաների համար հրազենի օգտագործմամբ դասընթացները, ինչպես նաև մարտարվեստի դասընթացները.
- իրականացնել ռազմական դպրոցների պարբերաբար մոնիթորինգ՝ ապահովելու համար, որ դպրոցական ծրագրերը և ուսուցչական կազմը համապատասխանեն Արձանագրության պահանջներին.
- 18 տարեկանից ցածր երեխաները, ովքեր ընդունվել են ռազմական համալսարաններ, ենթակա չլինեն պարտադիր զինվորական ծառայության այն դեպքում, երբ տեղի ունենան զինված բախումներ, ինչպես նաև չպետք է ենթարկվեն զինվորական կարգապահական պատասխանատվության և պատժի: ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները իրականացնում են «Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն» առարկայի ծրագիր: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեության դասընթացները չեն իրականացվում

հրազենով, դրանք իրականացվում են ուսումնական զենքով, որի նկարագիրը տրված է ՀՀ պաշտպանության նախարարի, ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ ոստիկանության պետի համատեղ հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական դպրոցներն ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ուսումնական զենքով և ռազմամթերքով ապահովելու» կարգի 2-րդ կետով, որտեղ, մասնավորապես, նշվում է. *«Ուսումնական զենք համարվում է միայն ուսումնական գործընթացում օգտագործվող զենքը, որից կրակելն առանց վերանորոգման անհնար է»:*

Ինչ վերաբերում է «18 տարեկանից ցածր երեխաների համար հրազենի օգտագործմամբ դասընթացներ» իրականացնելուն, ըստ ներկայացված տեղեկության, նման դասընթացներ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ծրագրերում ներառված չեն:

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 983-Ն որոշման 76-րդ կետի համաձայն՝ *վարժարանում սանի սովորելու ժամանակաշրջանը չի համարվում զինվորական ծառայություն:* Հիմնադրամի կանոնադրության 64-րդ կետի

համաձայն՝ *ուսումնական պլանում և դասացուցակում դասաժամերի մինչև 30%-ը պարտադիր հատկացվում է ռազմագիտության, ֆիզպատրաստության և լեռնային պատրաստության ծրագրերի իրականացմանը:*

«Փոքր Միեր» կրթահամալիրի հետ կապված՝ հարկ է նկատել, որ ՀՀ կառավարության 2016 թվականի 29 դեկտեմբերի N1381-Ն որոշմամբ կրթահամալիրի վերակազմակերպման արդյունքում ավագ դպրոցի կրթական ծրագիրն իրականացնելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» պետական հիմնարկը: Ըստ Կառավարության որոշման՝ «Փոքր Միեր» կրթահամալիր» և «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց»՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ: «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան *հանրակրթական հիմնական (5-9-րդ դասարանների ընդհանուր և մասնագիտացված) ծրագրերի իրականացումն է, իսկ գործունեության նպատակն է*

սովորողի կողմից հանրակրթության պետական չափորոշի առարկայական ընդհանուր և ռազմաուսումնական մասնագիտացված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, սովորողի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, մասնագիտական կողմնորոշումը, ծրագրերին համապատասխան սովորողների դաստիարակության ապահովումը, ինչպես նաև ռազմաուսումնական մասնագիտացված կրթություն ստանալու համար պայմանների ստեղծումը և խնամքի ու պաշտպանության ապահովումը:

Ինչ վերաբերում է մինչև 18 տարեկան անձանց զինվորական կարգապահական պատասխանատվությանը ու պատժին, ապա այս առումով պետք է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է կարգապահական տույժերի տեսակները, իսկ օրենքի 24-րդ հոդվածն ամրագրում է, որ շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պարտադիր զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 4-րդ (միայն շարքային կազմին), 5-7-րդ, 9-11-րդ կետերով, **իսկ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներին՝ նաև 12-րդ կետով նախատեսված կարգապահական**

տույժերը: Մեջբերված կարգավորումներից բխում է, որ ուսումնառության ընթացքում ռազմաուսումնական հաստատություն ընդունված 18 տարին չյրացած անձանց նկատմամբ կիրառելի են զինվորական ծառայության կանոնագրքային կանոնները, այդ թվում՝ կարգապահական պատասխանատվության մասով:

2. ԱՐԳԵԼՔ ԵՎ ԱՅԼ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐ

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածն արգելում է երեխայի (18 տարին չյրացած անձի) ներգրավումը ռազմական գործողություններին և զինված ընդհարումներին, ինչպես նաև մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: Այդուհանդերձ, Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ օրենքով սահմանված չէ որևէ պատասխանատվություն զինված բախումների ընթացքում երեխայի զինվորական հաշվառման համար:

Կոմիտեն առաջարկել է (կետեր 13, 15)՝

- փոփոխել Քրեական օրենսգիրքը և քրեականացնել 18 տարին չյրացած երեխաների զինվորական հաշվառումը զինված ուժեր և նրանց օգտագործումը զինված բախումների ընթացքում՝ պետական զինված ուժերի և ոչ պետական զինված խմբերի կողմից,

- քրեական օրենսգրքով սահմանել արտատարածքային իրավագործություն նշված արարքների քրեական հետապնդման ու պատժի համար:

Քրեական օրենսգիրքը չի նախատեսում նորմ, որով քրեականացված է զինված ուժերի կամ ոչ պետական զինված խմբերի կողմից 18 տարեկան չլրացած երեխաների զինվորական հաշվառումը և նրանց օգտագործումը զինված բախումների ընթացքում: Նոր քրեական օրենսգրքի նախագծով նախատեսվում է այս առաջարկության մասնակի կատարում: Մասնավորապես, նախագծի 145-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է ութից տասնինգ տարվա ազատազրկում պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ մինչև **տասնհինգ տարեկան երեխաներին** ազգային զինված ուժեր զինվորական ծառայության զորակոչելու, հավաքագրելու կամ ռազմական գործողություններին

նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելու համար: Ինչ վերաբերում է արտատարածքային իրավագործությանը, ապա այս խնդիրը Նոր քրեական օրենսգրքի նախագծի կարգավորումների պայմաններում լուծված կհամարվի:¹⁴²

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Առաջարկվում է Քրեական օրենսգրքում առանձին հոդվածով որպես հանցագործություն սահմանել 18 տարին չլրացած երեխաների զինվորական հաշվառումը և նրանց օգտագործումը զինված բախումների ընթացքում՝ պետական զինված ուժերի և ոչ պետական զինված խմբերի կողմից, ինչպես նաև Քրեական օրենսգրքում սահմանել նշված արարքների համար արտատարածքային իրավագործություն:

142 Առավել մանրամասն տե՛ս «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնագրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն» բաժնի «Արտատարածքային իրավագործություն և հանձնում» ենթաբաժինը: